



ISSN 0366-5119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
BIOLOGICAL JOURNAL OF ARMENIA

2014

Լույս է տեսնում 1948 թվականից, հոդվածները հրատարակվում են հայերեն,
ռուսերեն կամ անգլերեն լեզուներով

Выходит с 1948 года, статьи публикуются на армянском, русском

или английском языках

Journal is published since 1948, the articles are published in Armenian,
Russian or English

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԼԵԳԻԱ

Է.Ս.Գևորգյան (*գլխավոր խմբագիր*), Ռ.Մ.Հարությունյան (*գլխավոր խմբագրի*

տեղակալ), Ա.Ս. Բոյաճյան (*գլխավոր խմբագրի տեղակալ*),

Ա.Հ. Եսայան (*պատասխանատու քարտուղար*), Բ.Կ. Գաբրիելյան, Ա.Հ. Թռչունյան,

Լ.Ռ. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Ժ.Հ. Վարդանյան.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յու.Թ. Ալեքսանյան, Է.Գ. Աֆրիկյան, Մ.Ա. Դավթյան, Ճ.Ի. Հակոբյան, Վ.Պ. Հակոբյան,

Ս.Հ. Մովսիսյան, Կ.Ս. Պոգոսյան, Գ.Հ. Փանոսյան, Լ.Լ. Օսիպյան

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Յ.Ս. Գևորգյան (*главный редактор*), Ր.Մ. Արությունյան (*заместитель главного редактора*),

Ա.Ս. Բոյաճյան (*заместитель главного редактора*),

Ա.Գ. Եսայան (*ответственный секретарь*), Բ.Կ. Գաբրիելյան, Ա.Ա. Թրչունյան,

Լ.Ր. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Ջ.Ա. Վարդանյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Ю.Т. Алексанян, Э.Г., Африкян, М.А. Давтян, Ж.И. Акопян, В.П. Акопян,

С.О. Мовсесян, К.С. Погосян, Г.А. Паносян, Л.Л. Осипян

THE EDITORIAL BOARD

Editor in chief: E.S. Gevorgyan, *Vice-editors:* R.M. Aroutiunian, A.S. Boyadjyan,

Secretary-in-charge: A.H. Yesayan, *Members of the Board:* K.B. Gabrielyan,

A.H. Trchounian, L.R. Manvelyan, S.Kh. Mayrapetyan, Zh.H. Vardanyan.

THE EDITORIAL COUNCIL

Yu.T. Aleksanyan, E.G. Afrikyan, M.A. Davtyan, Zh.I. Hakobyan, V.P. Hakobyan,

S.H. Movsesyan, K.S. Poghosyan, G.H. Panosyan, L.L. Osipyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

•Փորձարարական և տեսական հոդվածներ •

Գևորգյան Է.Ս., Մինասյան Ս.Մ., Աբրահամյան Հ.Տ. Ուսանողների կենտրոնական հեմո- դինամիկայի ռեակցիայի առանձնահատկությունները վերերգումետրիական ծանրաբեռնվածության պայմաններում.....	6
Հայրապետյան Ա.Հ., Կոչլով Ա.Վ., Գաբրիելյան Բ.Կ. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրաց- ման պայմաններում ձևավորված երկու տիպի ծանծաղուտների գոտայանկտոնը.....	12
Պիպոյան Ս.Խ., Մալխասյան Ա.Հ. Հայաստանի պետական արգելոցների և ազգային պարկերի ձկնաշխարհը.....	18
Չիրջյան Մ.Բ., Սարգսյան Ա.Ս., Մելքոնյան Ս.Ա., Ավետիսյան Ն.Ս., Օզանեզովա Գ.Գ., Հովհաննիսյան Ա.Ս., Հովհաննիսյան Ն.Ա. Հետերոցիկլիկ տեղակալված ոչսպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների մոտազեն հատկությունները.....	26
Աղաջանյան Է.Ա., Ավայան Ռ.Է., Աթոյանց Ա.Լ., Գևորգյան Ա.Լ., Մինասյան Ս.Գ., Միմոնյան Ա.Է., Հարությունյան Ռ.Մ. Սևանա լճի ջրավազանի ջրերի գենաթունաբանական էֆեկտների սկրինինգ տրադեսկանցիայի թեստ-համակարգի կիրառմամբ.....	31
Հակոբյան Ն.Է. Առնետների մոտ նոր պայմաններում ինքնաբույս վարքագծի հետազոտ- ման ժամանակ սեռային տարբերությունների արտահայտումը.....	36
Ղալաչյան Լ.Ս., Ասատրյան Ա.Զ. Որոշ ծանր մետաղների տարաբաշխումը ջուր – հող – բույս էկոհամակարգերում Հայկական ԱԷԿ-ի տեխնածին գոտիներում.....	41
Թումանյան Ա.Ա. Լոռու սարահարթի լճերի հազվագյուտ բուսատեսակները.....	46
Բաբախանյան Ս.Ա., Ղալաչյան Լ.Ս., Հովհաննիսյան Լ.Է., Գուլյան Ա.Ա., Հովսեփյան Հ.Յ. Մեղրախոտի (Stevia rebaudiana bertonii) մակրոտարրերի հաշվեկշիռը բացօթյա հիդրոպոնիկական և հողային պայմաններում.....	54
Վարդանյան Պ.Հ., Մինասյանց Ս.Վ., Փարսադանյան Ս.Ա., Անտոնյան Ա.Պ. ԴՆԹ-ի փոքր ակոսում կապվող Hoechst 33258-ի և էթիդիումի բրոմիդ ինտերկալատորի մուլտիմոդալ փոխազդեցությունը ԴՆԹ-ի հետ.....	59
Ստեփանյան Ա.Ս. Կոմպլեմենտի H գործոնի գենային տարբերակների ասոցիացումը իշեմիկ կաթվածի հետ հայկական պոպուլյացիայում.....	66
Սահակյան Գ., Վ., Արծրունի Գ.Գ., Պողոսյան Գ.Ա. Առնետների էրիթրոցիտային թաղանթների ֆիզիկական չափանիշների սեռ-կախյալ տարբերությունները.....	72
Չիրջյան Ն.Բ., Դումանյան Կ.Հ., Գալստյան Հ.Ս., Ուլիխանյան Գ.Ռ., Ուլիխանյան Ղ.Բ. Հայաստանում վայրի աճող Z.clinopodioides Lam բուսատեսակի հումքային պաշարների ուսումնասիրումը, մշակման հնարավորությունները և մանրադիտակային ուսումնասիրությունը.....	78
Պողոսյան Կ.Ս. Ձմեռման տարբեր պայմաններում խաղողի վազի ցրտադիմացկանության ֆիզիոլոգիական մեխանիզմի մասին.....	82
Նանազյուրյան Ս.Գ., Ջաքարյան Ն.Հ., Գևորգյան Տ.Ս., Պետրոսյան Ա.Ս. Վիրտուալ հերբարիում (ընտանիք աստղածաղկազգիներ Asteraceae)	89
Գրիգորյան Ա.Գ. Lactobacillus acidophilus Er-2 -ի և էլեուտերոկոկի համատեղ ազդեցու- թյունը խոշոր եղջերավոր.....	93
Ֆան Խ., Սանփաթո Վ., Տանոտոնց Ա., Չավերաչ Ա., Պինտոնց Կ., Պորնարոնց Ս., Սուլիվոնց Վ., Տրիֆոնով Վ., Հովհաննիսյան Գ., Լոթ Կ., Հենսել Բ., Լիթ Թ., Վայսե Ա. Մագրիբյան մակակայի (Macaca sylvanus) համալիր մոլեկուլային բջջազենետիկական վերլուծությունը.....	98
Մուլյուկինա Ն.Ա., Կովալյովա Ի.Ա., Գերուս Լ.Վ., Կարաստան Օ.Ս., Նեբիշ Ա.Ա., Մարգարյան Բ.Ս., Մելյան Գ.Հ., Հարությունյան Ռ.Մ. Խաղողի Օպալովիյ և Բուրմունք միջտեսակային սորտերի ֆենոտիպային և գենոտիպային բնութագիրը՝ հեռանկարային հիբրիդային ձևերի ստացման նպատակով.....	103
Ասատրյան Վ.Լ. Վարդենիս գետի էկոլոգիական վիճակի գնահատումը համաձայն ԵՄ Ջրի Շրջանակային Դիրեկտիվի մոտեցումների.....	108
Ջավրուշյան Հ.Գ. N ^o -հիդրօքսի-L-արգինինի ազդեցությունը օրնիթինային ցիկլի ֆերմենտների ակտիվության վրա.....	113

• Համառոտ հաղորդումներ •

Նաղաշյան Հ.Զ., Գրիգորյան Լ.Հ., Հակոբյան Ա.Ռ., Հայթամ Ալ Բաբրի, Ղազարյան Վ.Ս. Ոչխարների պարագիտոֆաունան Երևանին հարակից տարածաշրջաններում.....	118
Խաչատրյան Տ.Ս. αβ2ԵԴ եթերի դերը մանիֆեստային հիփոթիրեոզի պայմաններում.....	121
Կարապետյան Ա.Ս. Callisia fragrans (Lindl.) Woodson-ի անհող մշակույթ ներմուծման հնարավորությունը և արդյունավետությունը.....	124

СОДЕРЖАНИЕ

«Экспериментальные и теоретические статьи»

Геворкян Э.С., Минасян С.М., Абраамян Э.Т. Особенности реакции центральной гемодинамики студентов в условиях велоэргометрической нагрузки.....	6
Айрапетян А.О., Крылов А.В., Габриелян Б.К. Зоопланктон двух типов мелководий оз. Севан, образованных при повышении уровня воды.....	12
Пипоян С.Х., Малхасян А.Г. Ихтиофауна государственных заповедников и национальных парков Армении.....	18
Читчян М.Б., Саркисян А.С., Мелкумян М.А., Аветисян Н.С., Оганезова Г.Г., Оганесян А.М., Оганесян Н.А. Мутагенные свойства гетероциклически замещенных небелковых аминокислот и пептидов.....	26
Агаджанян Э.А., Авалян Р.Э., Атоянц А.Л., Геворкян А.Л., Минасян С.Г., Симонян А.Э., Арутюнян Р.М. Скрининг генотоксических эффектов вод рек бассейна оз. Севан с помощью растительной тест-системы – традесканции....	31
Акопян Н.Э. Проявление половых различий при исследовании спонтанного поведения крыс в условиях новизны.....	36
Калачян Л.М., Асатрян А.З. Распределение некоторых тяжелых металлов в экосистемах вода - почва - растение в техногенных зонах Армянской АЭС....	41
Туманян А.А. Редкие виды растений озер Лорийского плоскогорья	46
Бабаханян М.А., Калачян Л.М., Оганесян Л.Э., Гулян А.А., Овсепян Г.Ю. Баланс макроэлементов медовой травы (<i>Stevia rebaudiana bertonii</i>) в условиях открытой гидропоники и почвы.....	54
Вардеванян П.О., Минасянц М.В., Парсаданян М.А., Антонян А.П. Мультимодальное взаимодействие желобково связывающегося лиганда Hoechst 33258 и интеркалятора бромистого этидия с ДНК.....	59
Степанян А.С. Ассоциация полиморфизмов гена фактора H системы комплемента с ишемическим инсультом.....	66
Саакян Г.В., Арцруни Г.Г., Погосян Г.А. Половые различия физических параметров эритроцитарных мембран крыс.....	72
Чичоян Н.Б., Думанян К.Г., Галстян А.М., Улиханян Г.Р., Улиханян Г.И. Изучение сырьевых запасов дикорастущего в Армении вида <i>Z. clinopodioides</i> Lam., возможности культивирования и микроскопическое исследование	78
Погосян К.С. О физиологическом механизме морозостойкости виноградного растения при разных условиях зимовки.....	82
Нанагюлян С.Г., Закарян Н.А., Геворкян Т.М., Петросян А.М. Виртуальный гербарий (семейство Asteraceae)	89
Григорян А.Г. Совместное применение <i>Lactobacillus acidophilus</i> Er-2 штамма 317/402 и элеутерококка с целью коррекции нарушений активности щелочной фосфатазы крови в условиях гипокинезии.....	93
Фан Х., Санпакд В., Таномтонг А., Чаверач А., Пинтонг К., Порннаронт С., Супивонг В., Трифонов В., Оганесян Г., Лот К., Хенсел С., Лир Т., Вайсе А. Комплексный молекулярный цитогенетический анализ магрибского макака (<i>Macaca sylvanus</i>)	98
Мудюкина Н.А., Ковалева И.А., Герус Л.В., Карастан О.М., Небиш А.А., Маргарян К.С., Мелян Г.Г., Арутюнян Р.М. Фенотипическая и генотипическая характеристика межвидовых сортов винограда Опаловый и Бурмунк для получения перспективных гибридных форм.....	103
Асатрян В.Л. Оценка экологического состояния реки Варденис с использованием подходов Водной Рамочной Директивы ЕС.....	108
Джаврушян А.Г. Влияние N^G - гидроксид - L- аргинина на активность ферментов цикла мочевины.....	113

(Краткие сообщения)

Нагашян О.З., Григорян Л.Г., Акопян А.Р., Бакри Айтам Аль, Казарян В.С. Паразито-фауна овец в районах примыкающих к Еревану.....	118
Хачатрян Т.С. Роль эфира α ХЭД в условиях манифестного гипотиреоза.....	121
Карпетян А.С. Возможность интродукции <i>Callisia fragrans</i> (Lindl.) Woodson в беспочвенную культуру и ее продуктивность.....	124

CONTENTS

•Experimental and theoretical articles•

<i>Gevorgyan E.S., Minasyan S.M., Abrahamyan H.T.</i> Peculiarities of the students' central hemodynamics reaction in condition of the physical tension on the veloergometer.....	6
<i>Hayrapetyan A.H., Krylov A.V., Gabrielyan B.K.</i> Zooplankton of two types shallows of Lake Sevan, formed as a result of rising water level.....	12
<i>Pipoyan S.Kh., Malchasyan A.H.</i> Ichtyofauna of the state Armenia reserves and national parks	18
<i>Chitchyan M.B., Sargsyan A.S., Melkumyan M.A., Avetisyan N.S., Oganezova G.G., Hovhannisyan A.M., Hovhannisyan N.A.</i> Mutagenic properties of heterocycle substituted nonprotein amino acids and peptides.....	26
<i>Aghajanyan E.A., Avalyan R.E., Atoyants A.L., Gevorkyan A.L., Minasian S.G., Simonian A.E., Aroutiounian R.M.</i> Screening of genotoxic effects of water of Lake Sevan basin with application of plant test system <i>Tradescantia</i>	31
<i>Hakobyan N.E.</i> Exhibiting of sexual differences at research of spontaneous behavior of rats in the conditions of novelty.....	36
<i>Ghalachyan L.M., Asatryan A.Z.</i> Distribution of some heavy metals in water-soil-plant ecosystems of Armenian NPP anthropogenic zone.....	41
<i>Tumanyan A.A.</i> Rare species of lakes of plants in Lori plateau	46
<i>Babakhanyan M.A., Ghalachyan L.M., Hovhannisyan L.E., Gulyan A.A., Hovsepyan H.Y.</i> Balance of stevia (<i>Stevia rebaudiana</i> bertonii) macroelements in open- air hydroponics and in soil conditions.....	54
<i>Vardevanyan P.O., Minasyants M.V., Parsadanyan M.A., Antonyan A.P.</i> Multimodal interaction of Hoechst 33258 minor groove binder and ethidium bromide intercalator with DNA.....	59
<i>Stepanyan A.S.</i> Association of the complement factor H gene variants and ischemic stroke in Armenian population.....	66
<i>Sahakyan G.V., Artsruni G.G., Poghosyan G.A.</i> Gender-related differences of physical parameters of rat erythrocyte membranes.....	72
<i>Chichoyan N.B., Dumanyan K.G., Galstyan A.M., Ulikhanyan G.R., Ulikhanyan Gh.I.</i> The study of raw material resources wildy growing species in Armenia <i>Z.clinopodioides</i> Lam., processing possibilities and microscopic examination.....	78
<i>Poghosyan K.S.</i> About the physiological mechanism of frost resistance of grape vines under the different conditions of wintering.....	82
<i>Nanagulyan S.G., Zakaryan N.A., Gevorgyan T.M., Petrosyan A.M.</i> Virtual herbarium (<i>Asteraceae</i> family)	89
<i>Grigoryan A.G.</i> Combined usage of <i>Lactobacillus acidophilus</i> Er-2 strain of <i>Eleutherococcus</i> to correct violations of alkaline phosphatase blood activity in conditions of hypokinesia.....	93
<i>Fan X, Sangpakdee W. Tanomtong A, Chaveerach A, Pinthong K, Pornnarong S, Supiwong W, Trifonov V, Hovhannisyan G, Loth K, Hensel C, Liehr T, Weise A.</i> Comprehensive molecular cytogenetic analysis of Barbary macaque (<i>Macaca sylvanus</i>)	98
<i>Mulyukina N.A., Kovaleva I.A., Gerus L.V., Karastan O.M., Nebish A.A., Margaryan K.S., Melyan G.H., Aroutiounian R.M.</i> Phenotypic and genotypic characterization of Opaloviy and Burmunk interspecific grape varieties for producing of perspective hybrids.....	103
<i>Asatryan V.L.</i> The estimation of Vardenis river's ecological state by the approaches of EU Water Framework Directive.....	107
<i>Javrushyan H.G.</i> The influence of N^G -hydroxy-L-arginine on the activity of the urea cycle enzymes	113

• Short communications •

<i>Naghashyan H.Z., Grigoryan L.G., Hakobyan A.R., Haytam Al Baqry, Ghazaryan V.S.</i> Pest fauna of sheep in Yerevan suburb.....	118
<i>Khachatryan T.S.</i> The role of ether α,β CED in conditions of manifest hypothyroidism.....	121
<i>Karapetyan A.S.</i> Possibility of introduction of <i>Callisia fragrans</i> (Lindl.) Woodson into soilless culture and its productivity.....	124



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(66), 2014

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԵՄՈԴԻՆԱՄԻԿԱՅԻ
ՌԵԱԿՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԵԼՈԵՐԳՈՄԵՏՐԻԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՆՈՒՄԻՆԵՐԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Է.Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ս.Ս. ՄԻՆԱՍՅԱՆ, Հ.Տ. ԱՐԲԱԶԱՍՅԱՆ

*Երևանի պետական լսարան, Տ. Մուշեղյանի անվան
մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն
ah200588@gmail.com*

Ուսումնասիրվել են ուսանողների կենտրոնական հեմոդինամիկայի ցուցանիշների փոփոխությունները չափակարգված վելոերգոմետրային ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում: Վելոերգոմետրային ծանրաբեռնվածությունը հանգեցնում է կարդիոհեմոդինամիկայի ցուցանիշների փոփոխությունների, որը պայմանավորված է սիմպաթիկ օղակի ակտիվության մեծացմամբ: Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո ուսանողների հետազոտված ցուցանիշների որոշակի բարձր մակարդակը վկայում է սիրտ-անոթային համակարգի ցածր հարմարողական հնարավորությունների մասին և պայմանավորված է ուսանողների անբավարար մարզվածությամբ, լարվածությամբ և թերշարժունությամբ:

*Վելոերգոմետրային ֆիզիկական ծանրաբեռնվածություն – զարկերակային ճնշում –
որոշական վիճակի ցուցիչ – հարմարողականության պոտենցիալ – դիմացկունության ցուցիչ*

Исследовались изменения параметров центральной гемодинамики студентов при дозированной велоэргометрической физической нагрузке. Велоэргометрическая нагрузка приводит к изменению кардиогемодинамических показателей, обусловленных повышением активации симпатического звена. После физической нагрузки несколько повышенный уровень исследованных показателей свидетельствует о низких адаптационных возможностях сердечно-сосудистой системы и обусловлен гиподинамией, напряжением и недостаточной тренированностью студентов.

Велоэргометрическая физическая нагрузка – артериальное давление – уровень функционального состояния – адаптационный потенциал – коэффициент выносливости

The changes in the students' central hemodynamic parameters were investigated in condition of dosage physical tension on veloergometer. Veloergometric tension leads to the changes in cardio-hemodynamic parameters, caused by increased activation of the sympathetic mechanisms. After physical tension the slightly increased levels of the investigated indicators showed low adaptive capacity of the cardiovascular system and are due to the students' physical inactivity, tension and the lack of fitness.

*Veloergometric physical tension – blood pressure – index of functional status –
adaptive potential – coefficient of endurance*

Երիտասարդների առողջությունը և կրթությունը հանդիսանում են հասարակության զարգացման հիմնական ուղղությունները: Առողջությունը դիտվում է նաև որպես ԲՈՒՀում սովորելու անհրաժեշտ պայման: Պետք է նշել, որ այսօր երիտասարդների առավել նշանակալի խնդիրներից են հոգեհուզական լարվածությունը և սթրեսները, որոնք առաջին հերթին պայմանավորված են ուսումնական ծանրաբեռնվածությամբ:

Տարիքային յուրաքանչյուր խումբ ունի իր յուրահատուկ կառուցվածքագործառնության ռեակցիաների առանձնահատկությունները սոցիալ-հիգիենիկ, էկոլոգիական, դայրոցամիջավայրային և այլ գործոնների փոփոխությունների նկատմամբ: Դեռահաս-սային և պատանեկան հասակին բնորոշ են մի շարք գործառնության համակարգերի և դրանց կարգավորման մեխանիզմների լարվածություն, հարմարման գործընթացների սահմանափակ հնարավորություն [2, 4]:

Օրգանիզմին բնորոշ հարմարողական հնարավորությունների սահմանափակման պայմաններում ուսումնական ծանրաբեռնվածության ավելացումը կարելի է դիտել որպես կայուն և երկարատև բնույթ կրող սթրեսային ազդեցություն թողնող գործոն: Դա նպաստում է հարմարողական պաշարների նվազմանը, վեգետատիվ ֆունկցիաների կարգավորման իրականացնող մեխանիզմների անհամաձայնեցմանը [2, 4, 10]: Ուսանողները կազմում են հատուկ սոցիալական խումբ, որը բնութագրվում է որոշակի տարիքով, աշխատանքի և կենսակերպի հատուկ պայմաններով: Ամբողջ ուսումնական գործընթացը կարելի է բաժանել մի քանի փուլերի, որոնցից յուրաքանչյուրն իր դերն ունի ուսանողների հոգեհուզական վիճակի և ֆիզիոլոգիական համակարգերի գործունեության խանգարումների ձևավորման գործում: Ուսանողների առողջական վիճակի վրա մեծ ազդեցություն ունեն ուսումնական գործընթացի ուժգնության մեծացումը, տեղեկատվական ծանրաբեռնվածությունը ժամանակի սղության պայմաններում, ուսուցման նոր ձևերի և մեթոդների ներդրումը, աշխատանքի և հանգստի, քնի և սնուցման ռեժիմների փոփոխությունը, նոր պայմաններին հարմարման անհրաժեշտությունը, թերշարժունության մեծացումը, բարձր հուզական լարվածությունը [1, 3]:

Գրականության տվյալները վկայում են, որ ուսումնական գործընթացին հարմարման արդյունավետությունը կախված է օրգանիզմի գործառնական հնարավորություններից և առաջին հերթին սիրտ-անոթային համակարգի գործունեության մակարդակից ու կարգավորման բնույթից, քանի որ հենց սիրտ-անոթային համակարգն է արտացոլում ամբողջական օրգանիզմի հարմարողական-փոխհատուցողական մեխանիզմների վիճակը [5, 8, 9, 12]: Շարժողական ակտիվությունը, որպես կանոն, նպաստում է օրգանիզմի (մասնավորապես նրա ֆիզիկական հատկանիշներին), ինչպես նաև սրտի և օրգանիզմի այլ գործառնական համակարգերի բնականոն աճին ու զարգացմանը [7, 11]:

Թերշարժուն կենսակերպի հետևանքով առաջացող շեղումների կանխարգելման արդյունավետ միջոց են համարվում վերահսկվող ֆիզիկական ծանրաբեռնվածությունները: Օրգանիզմի պահուստային հնարավորությունների պահպանման համար ներկայումս օգտագործվում են տարբեր մարզասարքեր, որոնց շարքում ամենատարածվածներից է վելոդրոմետրը: Վերջինս հանդիսանում է օրգանիզմի ընդհանուր դիմացկունության բարձրացման համար օգտագործվող ամենաարդյունավետ սարքերից մեկն է: Վելոդրոմետրով մարզումները նպաստում են սիրտ-անոթային և շնչառական համակարգերի դիմացկունության բարձրացմանը: Կանոնավոր մարզումների արդյունքում մարդու դիմացկունությունը մեծանում է 30%-ով: Բացի նշվածից, վելոդրոմետրիան նպաստում է զարկերակային ճնշման կանոնավորման համար անհրաժեշտ ֆերմենտների արտադրմանը, ինչպես նաև նյութափոխանակային գործընթացների արագության՝ դեպի օպտիմալային արժեք վերադարձին, տարբեր հիվանդությունների և շրջակա միջավայրի գործոնների նկատմամբ օրգանիզմի կայունության մեծացմանը:

Սույն հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել ուսանողների հոգեֆիզիոլոգիական և կարդիոհեմոդինամիկայի ցուցանիշների ներգրավման և հարմարման հնարավորությունները վելոդրոմետրով ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում:

Նյութ և մեթոդ: Հետազոտվել են ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի III-V կուրսերում սովորող 19-22 տարեկան 40 ուսանողներ: Բոլոր հետազոտությունները կատարվել են եռակի՝ մինչև ֆիզիկական ծանրաբեռնվածությունը (ֆիզիոլոգիական նորմա)՝ “Proteus Pec 3320” մակնիշի վելոդրոմետրով 15 րոպե տևողությամբ ֆիզիկական ծանրաբեռնվածությունից անմիջապես հետո, ֆիզիկական ծանրաբեռնվածության դադարից 15 րոպե հետո (վերականգնողական շրջան): Սրտի գործունեության կարգավորման առանձնահատկությունները ուսումնասիրելու նպատակով երեք փորձարարական իրավիճակներում հաշվարկվել են կենտրոնական հեմոդինամիկայի հիմնական ցուցանիշները:

Կենտրոնական հեմոդինամիկայի հիմնական ցուցանիշները (սիստոլային՝ ՍԶԸ և դիաստոլային՝ ԴԶԸ զարկերակային ճնշումները) և սրտի կծկումների հաճախությունը (ՄԿՀ) չափվել են “BALANCE KH 8097” մակնիշի էլեկտրոնային ճնշաչափով:

Հատուկ բանաձևերով հաշվարկվել են՝ արյան սիստոլային (ՄՏ) և րոպեական ծավալները (ԱՐՎ) ըստ Ստարի; անոթազարկային (ԱՀ) և միջին դինամիկական ճնշումները (ՄԴՃ)։

ԱՐՎ=ՄՏ· ՄԿՀ; ՄՏ=90,97+0,54 · ԱՀ-0,54 · ԴՁՀ-0,61 · S, որտեղ S-ն հետազոտվողի տարիքն է; ԱՀ=ՍՁՀ-ԴՁՀ, ՄԴՃ=ԴՁՀ+0,43 · (ՍՁՀ-ԴՁՀ)։

Ուսանողների օրգանիզմի գործառական հնարավորություններին ֆիզիկական ծանրաբեռնվածության համապատասխանությունը գնահատելու համար որոշվել են հետևյալ ցուցիչները՝ արյան շրջանառության ինքնակարգավորման տիպը (ԱՇԻՏ=ԴՁՀ/ՄԿՀ· 100); արյան շրջանառության հարմարողականության պոտենցիալը։

$$ՀՊ=0,011 \cdot ՍԿՀ+0,014 \cdot ՍՁՀ+0,008 \cdot ԴՁՀ+0,014 \cdot S+0,009 \cdot P-0,009 \cdot Հ-0,27,$$

որտեղ S-ն հետազոտվողի տարիքն է, P-ն՝ քաշը, իսկ Հ-ն՝ հասակը; կարգավորման համակարգերի ակտիվության ցուցիչը (ԿՀԱՅ)։ Ուսանողների մարզվածության աստիճանը գնահատելու համար հաշվարկվել է դիմացկունության ցուցիչը (ԴՅ=ՄԿՀ· 10/ԱՀ՝ ըստ Կվասսի բանաձևի։ Ուսանողների օրգանիզմի գործառական վիճակի մակարդակը (ԳՎՅ=700-3 · ՍԿՀ-2,5 · ՁՀմիջին-2,7 · S+0,28 · P)/(350-2,6 · S+0,21 · Հ), որտեղ S-ն հետազոտվողի տարիքն է, P-ն՝ քաշը, իսկ Հ-ն՝ հասակը) գնահատվել է ըստ Պիրոգովի։ Հատուկ բանաձևով հաշվարկվել է պատասխան ռեակցիայի ուրակի ցուցիչը (ՌՈՅ= (ՍՁՀ1-ՍՁՀ)/ՍՁՀ1)։

Նախապես կատարվել է ուսանողների հոգեբանական թեստավորում։ Որոշվել է անհատական անհանգստության մակարդակը (ԱԱ) ըստ Սպիլբերգեր-Խանինի, և հաշվարկվել է սթրեսակայունության մակարդակը սթրես-թեստ-հարցաթերթիկով [14]։ Կատարվել է նաև ուսանողների թեստավորում ըստ ԻՄՏ (ինքնազգացողություն, ակտիվություն և տրամադրություն) հարցաշարի։

Ստացված տվյալները ենթարկվել են վիճակագրական վերլուծության «Biostat» ծրագրի օգնությամբ ըստ Մոյտլդենտի t չափանիշի։


Արդյունքներ և քննարկում։ Ուսանողների հոգեբանական թեստավորումը ուսումնական կիսամյակի համեմատաբար հանգիստ օր ցույց է տվել, որ բոլոր հետազոտվողներին բնորոշ է եղել ԱԱ-ի միջին մակարդակ՝ ըստ Սպիլբերգեր-Խանինի։ Ընդ որում բոլոր հետազոտվողներն ունեցել են սթրեսազգայունության բարձր մակարդակ՝ ըստ սթրես-թեստ-հարցաշարի [14]։ ԻՄՏ-ի մակարդակի համակարգչային վերլուծությունը ցույց է տվել, որ հարաբերական հանգստի պայմաններում բոլոր հետազոտվողներն ունեցել են ԻՄՏ-ի «լավ» մակարդակ (Ի=5.8 պ.մ., Ա=5.6 պ.մ., Տ=5.5 պ.մ.)։ Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո դիտվել է ԻՄՏ-ի բոլոր ցուցանիշների փոփոխություն։ Ինքնազգացողության մակարդակը նվազել է մինչև 5.37 պ.մ.։ Ավելի արտահայտված փոփոխություն նկատվել է ակտիվության մակարդակում, որն իջել է մինչև 4.6 պ.մ., այն դեպքում, երբ տրամադրության ցուցանիշը բարձրացել է մինչև 5.8 պ.մ., ինչը վկայում է ֆիզիկական ծանրաբեռնվածության բարերար ազդեցության մասին։ Իսկ ինքնազգացողության և ակտիվության մակարդակների որոշակի նվազումը վկայում է ուսանողների անբավարար մարզվածության և երկարատև թերշարժունության մասին։

Վերլուծություններով ծանրաբեռնվածությունից հետո օրգանիզմի գործառական վիճակի փոփոխությունների առանձնահատկություններն ուսումնասիրելու համար երեք փորձարարական իրավիճակներում հետազոտվել են կենտրոնական հեմոդինամիկայի ցուցանիշները։ Ֆիզիկական ակտիվությունը հանգեցնում է սրտի քրոնոտրոպ ֆունկցիայի (ՄԿՀ) և ՁՀ-ի ցուցանիշների (ՍՁՀ, ԴՁՀ) արտահայտված մեծացմանը, որոնք նորմայի համեմատ ավելացել են համապատասխանաբար 103,03%-ով ($p<0.001$); 18,57%-ով ($p<0.001$) և 8,17%-ով ($p<0.001$) (նկ.1)։ Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո ուսանողների ՄԿՀ-ի բարձրացում մինչև 137,7±10,2 գ/ր իրենց հետազոտություններում դիտել են նաև Շուկազինը և համահեղինակները [13]։

ՄԿՀ-ի և ՁՀ-ի բարձրացումը պայմանավորված է վեգետատիվ կարգավորման հավասարակշռության շեղմամբ սիմպաթիկ ազդեցությունների կողմը, ինչն ուղղված է ֆիզիկական ծանրաբեռնվածության ազդեցությամբ օրգանիզմում և կմախքային մկաններում օքսիդատիվ փոխանցման գործընթացների ակտիվացման հետևանքով խախտված թթվածնային հավասարակշռության վերականգնմանը։ Թեստ-ծանրաբեռնվածության ժամանակ անմիջական մասնակցություն ունեցող կմախքային մկանները պարունակում են մեծ քանակությամբ օդակցաց մկանաթելեր, որոնք ունեն օքսիդացնող համակարգերի բարձր ակտիվություն և բնութագրվում են հարմարողական մեծ հնարավորություններով և բարձր դիմադրողականությամբ։

15 րոպե տևողությամբ ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո դիտվել է նաև ԱՀ-ի և ՄԴՃ-ի հավաստի աճ 38,66%-ով ($p<0.001$) և 13,77%-ով ($p<0.01$) (նկ.1)։ Հայտնի է, որ ՄԴՃ-ն արտացոլում է արյան շրջանառության համակարգի կարգավորող մեխանիզմների կենտրոնացման աստիճանը մեկ սրտային ցիկլի ընթացքում և ամփոփում

Է ՁԸ-ի բոլոր բաղադրիչների ժամանակային արժեքները: Հետևաբար, ՄԴԸ-ի թույլ արտահայտված աճը ԱԸ-ի, ՄԿՀ-ի, ՍԶԸ-ի զգալի մեծացման պայմաններում վկայում է օրգանիզմի արտահայտված լարվածության, ինչպես նաև արյան շրջանառության կարգավորման գործընթացում սրտի դերի մեծացման մասին: Ծանրաբեռնվածության նկատմամբ օրգանիզմի հիպերթենզիկ պատասխանի ձևավորման գործընթացում գլխավոր դերը պատկանում է ադրեներգիկան մեխանիզմներին, ցանցանման գոյացությանը, լիմբիա-ցանցանման համալիրին, ենթատեսաթմբի և նշահամալիրի հուզածին գոտիներին: ՁԸ-ի բոլոր բաղադրիչների մեծացման պատճառներից մեկը կարող է լինել նաև սրտային արտամղման և ծայրամասային անոթային դիմադրության միջև ներդաշնակության խախտումը:




Նկ.1. ՁԸ-ի փոփոխությունները վերլուծումետրով ծանրաբեռնվածության պայմաններում * - $p<0.05$, ** - $p<0.01$, *** - $p<0.001$

■ նորմա, ■ ծանրաբեռնվածությունից անմիջապես հետո,
■ ծանրաբեռնվածությունից 15 րոպե հետո

ՍԶԸ-ի և ԴԶԸ-ի զուգահեռ բարձրացումը, որի արդյունքն է հանդիսանում ԱԸ-ի մեր կողմից դիտվող մեծացումը, վկայում է սրտի ադրենկլատ գերֆունկցիայի մասին և ուղղված է ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ էներգիական հավասարակշռության ապահովմանը:

Սրտի քրոնոտրոպ ֆունկցիայի մեծացումն ուղեկցվել է ԱՐԾ-ի արտահայտված աճով 65.93%-ով ($p<0.001$), այն դեպքում, երբ արյան ՍԾ-ն բարձրացել է ընդամենը 7.88%-ով (նկ.2): ՄԿՀ-ի հաշվին ԱՐԾ-ի մեր կողմից դիտվող բարձրացումը հանդիսանում է արյան շրջանառության կենտրոնական ապահովման քիչ արդյունավետ ու կատարյալ տիպ:



Նկ.2. ՄԿՀ-ի, ՍԾ-ի, ԱՐԾ-ի և ԱՇԻՏ-ի փոփոխությունները վերլուծումետրով ծանրաբեռնվածության պայմաններում * - $p<0.05$, ** - $p<0.01$, *** - $p<0.001$

■ նորմա, ■ ծանրաբեռնվածությունից անմիջապես հետո,
■ ծանրաբեռնվածությունից 15 րոպե հետո


Սրտի ռիթմի արտահայտված քրոնոտրոպ ռեակցիան ինոտրոպի թույլ արտահայտման պայմաններում արտացոլում է սրտամկանի անբավարար հզորության և տվյալ ֆիզիկական ծանրաբեռնվածությանը հարմարվելու բարձր «ֆիզիոլոգիական գնի» մասին [6]:

ԱՐԾ-ի մեծացումը ոչ միայն ՄԿՀ-ի, ինչպես նաև ՄԾ-ի աճի հաշվին, հանդիսանում է մկանային աշխատանքին սրտի հարմարման առավել կատարյալ տիպ և հիմնականում բնորոշ է լավ մարզված մարդկանց:

Վելոերգոմետրով ֆիզիկական ծանրաբեռնվածություն կատարելիս հետազոտվողների սրտի գործառական բարձր լարվածության մասին են վկայում սիրտ-անոթային համակարգում արյան շրջանառության կարգավորման սրտային տիպի գերակշռումը (ԱՇԻՑ-ն փոքրացել է 29,87%-ով, $p < 0.001$) (նկ.2): Ինչքան ԱՇԻՑ-ի արժեքը փոքր է 90 պ.մ.-ից, այնքան արյան հոսքի վրա սրտի դերն ավելի արտահայտված է:

Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո 15 րոպե վերականգնողական շրջանի արդյունքում նկատվել է ուսումնասիրված բոլոր ցուցանիշների դեպի էլակետային մակարդակ վերադառնալու միտում, սակայն դրանք շարունակել են մնալ բարձր մակարդակի վրա: Վերջինս վկայում է, որ վելոերգոմետրիական ծանրաբեռնվածության հաղթահարումը թերշարժունության և սթրեսի նկատմամբ հակվածության բարձր մակարդակ ունեցող ուսանող հետազոտվողներին տրվում է սրտի գերծանրաբեռնվածությամբ:

Վերը նշված բոլոր ցուցանիշների փոփոխություններից բացի սրտի գերծանրաբեռնվածության մասին է վկայում նաև արյան շրջանառության ՀՊ-ի շեղումը լարվածության տիրույթ և նշված մակարդակի պահպանումը ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո (նկ.3):



Նկ.3. ՄԿՀ-ի, ՄԾ-ի, ԱՐԾ-ի և ԱՇԻՑ-ի փոփոխությունները վելոերգոմետրով ծանրաբեռնվածության պայմաններում * - $p < 0.05$, ** - $p < 0.01$, *** - $p < 0.001$

■ նորմա, ■ ծանրաբեռնվածությունից անմիջապես հետո,
□ ծանրաբեռնվածությունից 15 րոպե հետո

Վերջինիս ապացույցն է հանդիսանում նաև հետազոտվողների՝ մեր կողմից դիտվող ԳՎՑ-ի փոքրացումը, ԴՑ-ի փոփոխությունների դինամիկան և ՌՈՑ-ի բարձր մակարդակը (նկ.3): Ֆիզիկական ծանրաբեռնվածությունից և սթրեսից հետո ԴՑ-ի մեծացումը վկայում է հետազոտվողների անբավարար մարզվածության մասին (նկ.3): Դիտված փոփոխությունները վկայում են հետազոտվողների սրտի աշխատանքի գերծանրաբեռնվածության մասին, ինչը՝ անբավարար շարժողական ակտիվության և հոգնածության արդյունք է:

Այսպիսով, ըստ ստացված արդյունքների վելոերգոմետրային ծանրաբեռնվածությունը հանգեցնում է ուսանողների կարդիոհեմոդինամիկայի ցուցանիշների արտահայտված փոփոխությունների, ինչը պայմանավորված է սիմպաթիկ օղակի ակտիվության մեծացմամբ: Միջին ուժգնության վելոերգոմետրիկ ծանրաբեռնվածությունից հետո վերականգնման շրջանում ուսումնասիրված բոլոր ցուցանիշների դանդաղ վերականգնումը վկայում է հետազոտվողների գործառական համակարգերի երկարատև թերշարժունությամբ պայմանավորված ցածր լարվածության և օրգանիզմի գործառական հնարավորություններին տվյալ հզորության ծանրաբեռնվածության անհամապատասխանության մասին: Ծանրաբեռնվածությունից հետո ուսանողների հետազոտված ցուցանիշների որոշակի բարձր մակարդակը հանդիսանում է սիրտ-անոթային համակարգի հարմարողական ցածր հնարավորությունների ապացույց, որն էլ իր հերթին պայմանավորված է ուսանողների անբավարար մարզվածությամբ, հոգնածությամբ, լարվածությամբ և թերշարժունությամբ:



Биолог. журн. Армении, 1 (66), 2014

ЗООПЛАНКТОН ДВУХ ТИПОВ МЕЛКОВОДИЙ ОЗ. СЕВАН, ОБРАЗОВАННЫХ ПРИ ПОВЫШЕНИИ УРОВНЯ ВОДЫ

А.О. АЙРАПЕТЯН*, А.В. КРЫЛОВ**, Б.К. ГАБРИЕЛЯН*

* Институт гидроэкологии и ихтиологии
Научного центра зоологии и гидроэкологии НАН РА
armmino@yandex.ru

**Институт биологии внутренних вод им. И.Д. Папанина РАН

Описан качественный и количественный состав зоопланктона на открытом и защищенном мелководьях оз. Севан, сформированных в результате повышения уровня воды. Выделена зона, характеризующаяся специфичными структурными показателями зоопланктона и развитием видов-индикаторов эвтрофных вод.

Озеро Севан – зоопланктон – уровень воды – литоральная зона

Նկարագրվել է Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման պայմաններում ձևավորված բաց և պաշտպանված ջրածածկ տարածքների զոոպլանկտոնի քանակական և որակական կազմը: Առանձնացվել է զոոպլանկտոնի առանձնահատուկ կառուցվածքային ցուցանիշներով և էվտրոֆ ջրերի ինդիկատոր տեսակների զարգացմամբ բնութագրվող գոտին:

Սևանա լիճ – զոոպլանկտոն – ջրի մակարդակ – ափամերձ գոտի

Qualitative and quantitative composition of zooplankton in the open and protected shallows of Lake Sevan, formed as a result of rising water level, was described. The zone characterized by specific structural parameters of zooplankton and by development of indicators of eutrophic waters was allocated.

Lake Sevan – zooplankton – water level – littoral zone

С целью деэвтрофикации оз. Севан - самого крупного (~ 1262 км²) высокогорного (1900 м над уровнем моря) водоема Южного Кавказа - необходимо восстановить гипolimнион путем повышения уровня воды минимум на 6 м [4]. Согласно двум законам: 1. “Закон об озере Севан” (15.05.2001 г.); 2. “Закон об утверждении годовых и комплексных программ по восстановлению, охране, воспроизводству и использованию экосистемы озера Севан” (14.12.2001 г.) с 2002 г. уровень озера стал подниматься благодаря прекращению попусков в энергетических целях, поступлению вод р. Арпа через тоннель Арпа - Севан. В течение 10 лет уровень воды был повышен на 360.5 см [4].

Одной из сопутствующих проблем, возникающих в ходе подъема уровня воды, является проблема формирования сообществ на затопляемых территориях суши, где разложение почв и растительности может способствовать обогащению воды азотом, фосфором и различными компонентами органических веществ [2].

Но проведенные в 2007–2009 гг. исследования показали, что в водной толще над затопленными участками суши показатели качественного и количественного состава планктонных организмов (гетеротрофные нанофлагелляты и зоопланктон) лишь краткое время (в течение одного года) соответствуют водам, испытывающим значительную органическую нагрузку [5, 6]. Позже – в октябре 2012 г. – было отмечено, что структурная организация зоопланктона не указывает на эвтрофирование: по численности и биомассе преобладают веслоногие ракообразные за счет *Calaniformes*, а в числе доминантов отсутствуют виды-индикаторы высокотрофных вод [1]. По всей видимости, это определяется грамотно спланированным и постепенным повышением уровня воды, относительно бедным почвенным покровом затопляемых в пределах < 100 м участков суши, а также высокой степенью водообмена, благодаря ветровым течениям. Лишь отдельные участки литоральной зоны, где затоплены обширные (> 500 м) ранее увлажненные луга с богато развитой наземной растительностью, характеризовались обильным “цветением” воды [1]. Кроме того, среди затопленных участков по ряду показателей структурной организации зоопланктона осенью 2012 г. выделялся полуотшнурованный водоем, образовавшийся на месте построек жилого комплекса “Лаванда Сити” и остаточного после снижения уровня воды водоема (см. фото). Основу численности и биомассы зоопланктона здесь составляли ветвистоусые ракообразные, в видовом составе и в общей численности была самой высокой доля коловраток, причем за счет видов-индикаторов высокой степени органической нагрузки – коловраток рода *Brachionus* [1].



Фото. Защищенный затопленный участок мелководья в районе “Лаванда Сити” (фото Ю.В. Герасимова, ИБВВ РАН).

Цель работы изучить качественный состав и количественное развитие зоопланктона двух разнотипных затопленных участков – наиболее распространенного открытого мелководья и образовавшегося полуотшнурованного озеровидного водоема.

Материал и методика. Сбор материала проводили 1 раз в месяц с июня по октябрь 2013 г. на двух станциях на акватории Малого Севана: I – открытое мелководье над затопленным участком суши и II – защищенное мелководье в полуотшнурованном озеровидном участке над затопленным участком суши. Пробы на глубине ≥ 1 м собирали ведром объемом 10 л, через планктонную сеть с размером ячеек 0,064 мм (газ № 77), процеживали не менее 30 л воды. Пробы фиксировали 4%-ным формалином. Камеральную обработку их проводили по стандартной методике [8].

Результаты и обсуждение. В составе зоопланктона обнаружено 20 видов коловраток, 6 – веслоногих и 9 – ветвистоусых ракообразных (табл. 1).

Таблица 1. Видовой состав зоопланктона затопленного побережья оз. Севан (I) и полуотшнурованного озеровидного участка (II)

Таксоны	Июнь		Июль		Август		Сентябрь		Октябрь	
	I	II	I	II	I	II	I	II	I	II
<i>ТИП ROTIFERA</i>										
<i>Polyarthra vulgaris</i> Carlin	–	–	–	–	–	–	–	–	–	+
<i>Synchaeta pectinata</i> Ehrb.	–	–	+	+	–	–	–	+	–	+
<i>S. grandis</i> Zacharias	–	–	–	+	–	–	–	–	–	–
<i>Trichocerca capucina</i> (Wierzejski et charias)	–	–	–	–	–	–	+	–	–	–
<i>T. longiseta</i> (Schränk)	+	–	–	–	–	–	–	–	–	–
<i>Lepadella rhomboides</i> (Gosse)	–	–	–	–	–	–	–	–	–	+
<i>Asplanchna girodi</i> Guerne	–	–	+	+	–	–	–	+	–	+
<i>Lecane ludwigii</i> (Eckstein)	–	–	–	–	–	+	–	+	–	–
<i>L. luna</i> (Müller)	–	–	–	–	–	+	+	+	–	+
<i>Brachionus quadridentatus</i> Ehrenberg	–	+	–	+	–	–	–	+	–	+
<i>B. leydigii</i> Cohn	–	–	–	–	–	+	–	+	–	–
<i>Keratella quadrata</i> (Müller)	+	–	–	–	–	–	–	–	+	+
<i>Euchlanis deflexa</i> Gosse	+	–	+	–	+	–	+	–	–	–
<i>Eu. dilatata</i> Ehrenberg	+	+	+	+	+	+	+	+	–	–
<i>Eu. lyra</i> Hudson	–	–	–	–	–	+	–	–	–	–
<i>Eu. meneta</i> Myers	+	+	–	+	–	+	–	–	–	–
<i>Lophocharis salpina</i> (Ehrenberg)	–	–	–	+	–	–	–	–	–	–
<i>Mytilina mucronata</i> (Müller)	+	+	–	–	+	–	–	–	–	–
<i>Trichotria truncata</i> (Whitelegge)	+	–	–	+	–	–	+	+	–	+
<i>Hexarthra mira</i> (Hudson)	–	–	+	–	–	+	–	+	–	+
<i>ТИП ARTHROPODA</i>										
<i>КЛАСС CRUSTACEA</i>										
<i>Отряд Copepoda</i>										
<i>Подотряд Calaniformes</i>										
<i>Acanthodiaptomus denticornis</i> Wierzejski	–	–	+	–	–	–	–	–	+	–
<i>Arctodiaptomus bacilifer</i> (Koelbel)	+	–	+	–	–	–	–	–	+	–
<i>Подотряд Cyclopiformes</i>										
<i>Paracyclops fimbriatus</i> (Fischer)	–	–	–	–	–	+	–	–	–	–
<i>Cyclops strenuus</i> (Fischer)	–	–	+	–	–	–	+	–	+	–
<i>Eucyclops serrulatus</i> (Fischer)	–	–	–	–	–	–	–	+	–	+
<i>Thermocyclops crassus</i> (Fischer)	+	–	+	+	–	–	–	–	–	+
<i>Надотряд Cladocera</i>										
<i>Отряд Ctenopoda</i>										
<i>Diaphanosoma brachyurum</i> Lievin	–	–	+	+	+	+	–	–	+	+
<i>Отряд Anomopoda</i>										
<i>Ceriodaphnia reticulata</i> (Jurine)	–	–	–	+	–	+	–	–	–	–
<i>C. megops</i> Sars	–	–	–	+	–	+	–	–	–	–
<i>Daphnia</i> (<i>Daphnia</i>) <i>hyalina</i> Leydig.	–	–	+	–	–	–	–	–	–	–
<i>D. (Ctenodaphnia) magna</i> Straus	–	–	–	–	–	–	–	–	+	+
<i>Alona affinis</i> (Leydig)	–	–	–	–	+	–	+	–	–	–
<i>A. rectangula</i> Sars	–	–	–	–	+	+	+	+	–	–
<i>Graptoleberis testudinaria</i> (Fisher)	–	–	+	–	+	–	+	–	–	–
<i>Chydorus sphaericus</i> (O.F. Müller)	–	–	–	–	+	+	+	+	–	–
Число видов: Rotifera	7	4	5	8	3	7	5	9	1	9
Copepoda	2	0	4	1	0	1	1	1	3	2
Cladocera	0	0	3	3	5	5	4	2	2	2
Всего	9	4	12	12	8	13	10	12	6	13

Примечание. Здесь, на рис. и в табл.2: I – открытый участок побережья, II – полуотшнурованный защищенный озеровидный участок.

При этом в планктоне открытого мелководья обнаружено 23 вида беспозвоночных, среди которых коловраток – 12, веслоногих ракообразных – 4, ветвисто-

усых – 7; в планктоне отшнурованного участка – 26, среди которых коловраток – 17, веслоногих ракообразных – 3, ветвистоусых – 6 (табл. 1).

Наибольшая величина коэффициента трофности, соответствующая гипер-трофным водам (5,7), зарегистрирована на защищенном полуотшнурованном участке, на открытом побережье значение коэффициента было ниже (3,3), что характерно для эвтрофных вод [10].

Максимальное число видов беспозвоночных в планктоне открытого мелководья обнаружено в июле, а на полуотшнурованном участке — в августе и октябре (табл. 1). В июне по числу видов преобладало открытое побережье озера за счет коловраток и веслоногих ракообразных, в июле количество видов на обоих мелководьях было равным, но на ст. I было больше Copepoda, а на ст. II — Rotifera. В остальное время наиболее богатый состав видов регистрировали в полуотшнурованном водоеме за счет коловраток.

В каждую дату наблюдений по численности и биомассе превалировал зоопланктон полуотшнурованного мелководья (см. рис.). Плотность организмов здесь варьировала от 3.2 до 27 тыс. экз./м³, биомасса – от 0,013 до 0,74 г/м³, достигая максимальных значений в сентябре и октябре, когда наибольшего развития достигали ветвистоусые ракообразные.




Рис. 1. Численность (тыс. экз./м³) (а), доля (%) таксономических групп в общей численности (б), биомасса (г/м³) (в) и доля (%) таксономических групп в общей биомассе зоопланктона (г).

На открытом мелководье численность и биомасса зоопланктона колебались в меньшей степени – соответственно от 1,9 до 3,8 тыс. экз./м³ и от 0,007 до 0,04 г/м³ при максимуме в октябре за счет Cladocera (см. рис.).

Более высокие величины индексов Шеннона отмечались в основном на защищенном участке, лишь в августе и сентябре — на открытом (табл. 2).

Таблица 2. Состав доминирующих по численности (N) и биомассе (B), величины индексов Шеннона, рассчитанных по численности (H_N , бит/экз.) и биомассе (H_B , бит/г)

Месяц	N	H_N	N	H_N	B	H_B	B	H_B
	I		II		I		II	
Июнь	<i>Euchlanis dilatata</i> , <i>E. meneta</i> , науплиусы <i>Calanoida</i>	2,25	<i>Brachionus quadridentatus</i> , <i>Euchlanis dilatata</i> , ювенильные особи <i>Cyclopoida</i>	2,29	<i>Arctodiaptomus bacilifer</i> , <i>Euchlanis dilatata</i> , <i>E. meneta</i> , науплиусы <i>Calanoida</i>	1,99	<i>Brachionus quadridentatus</i> , <i>Euchlanis dilatata</i> , ювенильные особи <i>Cyclopoida</i>	2,26
Июль	Науплиусы <i>Calanoida</i> и <i>Cyclopoida</i> , <i>Daphnia hyalina</i>	2,32	<i>Brachionus quadridentatus</i> , <i>Synchaeta pectinata</i> , <i>Asplanchna girodi</i> , науплиусы <i>Cyclopoida</i> , <i>Diaphanosoma brachyurum</i>	2,96	<i>Daphnia hyalina</i>	0,33	<i>Asplanchna girodi</i> , <i>Diaphanosoma brachyurum</i>	1,68
Август	<i>Euchlanis dilatata</i> , науплиусы <i>Calanoida</i> , <i>Chydorus sphaericus</i>	2,83	<i>Brachionus quadridentatus</i> , <i>Lecane luna</i> , <i>Hexarthra mira</i> , науплиусы <i>Cyclopoida</i>	2,77	<i>Euchlanis dilatata</i> , науплиусы <i>Calanoida</i> , <i>Chydorus sphaericus</i>	2,69	<i>Paracyclops fimbriatus</i> , <i>Diaphanosoma brachyurum</i>	2,70
Сентябрь	<i>Euchlanis dilatata</i> , науплиусы <i>Calanoida</i> , <i>Chydorus sphaericus</i>	3,24	<i>Asplanchna girodi</i> , <i>Lecane luna</i> , науплиусы <i>Cyclopoida</i>	2,84	<i>Cyclops strenuous</i> , <i>Alona affinis</i> , <i>Graptoleberis testudinaria</i>	2,97	<i>Asplanchna girodi</i> , <i>Alona rectangula</i> , <i>Ceriodaphnia megops</i>	2,40
Октябрь	Науплиусы и копеподиты <i>Calanoida</i> , <i>Acanthodiaptomus denticornis</i> , <i>Diaphanosoma brachyurum</i>	2,46	<i>Brachionus quadridentatus</i> , <i>Keratella quadrata</i> , науплиусы <i>Cyclopoida</i> , <i>Diaphanosoma brachyurum</i>	2,67	<i>Acanthodiaptomus denticornis</i> , <i>Diaphanosoma brachyurum</i>	0,79	<i>Daphnia magna</i> , <i>Diaphanosoma brachyurum</i>	1,26

Согласно результатам, наиболее качественно и количественно богатый зоопланктон развивается в условиях защищенного затопленного мелководья, как это характерно для абсолютного большинства водных объектов [3, 7, 9, 11]. Очевидно, что этому способствует ряд факторов, из которых ведущее значение имеет более стабильный гидродинамический режим и зарастание макрофитами. Однако на современном этапе развитие зоопланктона затопленного защищенного мелководья оз. Севан в большей степени определяется, по всей видимости, более высокой органической нагрузкой, вызванной процессами разложения почв, которые ранее характеризовались хорошо развитой травянистой и кустарниковой растительностью. Об органической нагрузке на этом участке свидетельствует преобладание в видовом составе коловраток, среди которых обнаружены индикаторы высокотрофных и сапробных вод – представители рода *Brachionus*, *Keratella quadrata*, *Hexarthra mira*, часть из которых входила в состав доминантов (табл. 2), а также большая величина коэффициента трофности, характеризующая гипертрофные условия. Значительное увеличение численности и биомассы зоопланктона осенью могло быть вызвано отмиранием водных растений, а также поступлением дополнительной органики с листовым опадом с кустарников и деревьев, произрастающих вблизи уреза воды.

На исследованном участке открытого мелководья качественный и количественный состав зоопланктона в большей степени определялся влиянием сообществ глубоководных участков, в результате чего в отдельные даты наблюдений здесь отмечались *Acanthodiptomus denticornis*, *Arctodiptomus bacilifer* и *Daphnia hyalina*, но периодическое воздействие волн препятствовало их обильному развитию. Определенное влияние на состав зоопланктона оказывало и развитие беспозвоночных в зарослях макрофитов, благодаря чему здесь отмечались коловратки рода *Euchlanis*.

Необходимо отметить, что на открытых участках литоральной зоны оз. Севан наблюдаются разные сочетания условий существования (различия по степени зарастания, протяженности мелководий, погодным условиям и развитию рыб). В связи с этим зоопланктон на разных участках отличается большим размахом численности и биомассы. Так, в июле 2013 г. на участках открытого мелководья в Малом и Большом Севане численность планктонных беспозвоночных варьировала от 11 до 155 тыс. экз./м³, биомасса – от 0,9 до 3,4 г/м³, а в октябре – от 0,7 до 97 тыс. экз./м³ и от 0,0006 до 1,6 г/м³.

Таким образом, развитие зоопланктона на мелководьях, формирующихся в результате повышения уровня воды оз. Севан, определяется типологией участков. Наиболее проблемные зоны, характеризующиеся развитием видов-индикаторов эвтрофных вод, возникают в защищенных участках, на затопленной суше с богатой наземной растительностью.

Работа выполнена при финансовой поддержке РФФИ 13-04-90605 Арм_а.

ЛИТЕРАТУРА

1. Айрапетян А.О., Акопян С.А., Крылов А.В. Зоопланктон литоральной зоны озера Севан. Вода: химия и экология, 2, 2014.
2. Давтян А.А. Оценка воздействий затопленных лесонасаждений на процессы эвтрофирования озера Севан. Известия аграрной науки, 8, 1, с. 31-34, 2010.
3. Зимбалева Л.Н. Фитофильные беспозвоночные равнинных рек и водохранилищ. Киев, „Наукова думка“, 216с., 1981.
4. Интегральная оценка экологического состояния озера Севан (GEO – Lake Sevan). Ереван, 100с., 2011.
5. Косолапова Н.Г. Гетеротрофные жгутиконосцы озера Севан. В.кн.: “Экология озера Севан в период повышения его уровня. Результаты исследований Российско-Армянской биологической экспедиции по гидроэкологическому обследованию озера Севан (Армения) (2005-2009 гг.)”. Махачкала: Наука ДНЦ, с. 124-133, 2010.
6. Крылов А.В., Акопян С.А., Никогосян А.А., Айрапетян А.О. Зоопланктон озера Севан и его притоков. В. кн.: “Экология озера Севан в период повышения его уровня. Результаты исследований Российско-Армянской биологической экспедиции по гидроэкологическому обследованию озера Севан (Армения) (2005-2009 гг.)”. Махачкала: Наука ДНЦ, с. 168-200, 2010.
7. Литоральная зона Ладожского озера. СПб.: Нестор-История, 416 с., 2011.
8. Методика изучения биогеоценозов внутренних водоемов. М.: Наука, 240 с., 1975.
9. Мордухай-Болтовской Ф.Д., Мордухай-Болтовская Э.Д., Яновская Г.Я. Фауна прибрежной зоны Рыбинского водохранилища. Тр. биол. ст. „Борок“. М., Л., Вып. 3. с. 142-194, 1958.
10. Мязметс А.Х. Изменения зоопланктона. В кн.: “Антропогенное воздействие на малые озера”. Л.: Наука, с. 54-64, 1980.
11. Столбунова В.Н. Зоопланктоценозы прибрежных мелководий водохранилищ Верхней Волги. В кн.: “Биологические ресурсы пресных вод: беспозвоночные”. Рыбинск: Изд-во ОАО „Рыбинский дом печати“, с. 357-373, 2005.

Поступила 10.12.2013



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(66), 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐԻ ԶԿՆԱՇԽԱՐՀԸ

Ս.Խ. ՊԻՊՈՅԱՆ*, Ա.Հ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**

Խ.Սրբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

** Բնության համաշխարհային հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ
s.pipoyan@gmail.com

1985-2012 թթ. ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում նկարագրվել է «Խոսրովի անտառ» ու «Շիկահող» պետական արգելոցների և «Սևան», «Դիլիջան», «Արփիլիճ» ու «Արևիկ» ազգային պարկերի ձկնաշխարհի ներկայիս տեսակային կազմը, պարզվել է հայտնաբերված ձկնատեսակների տարածվածությունն ու հանդիպման հաճախականությունն ըստ այդ հատուկ պահպանվող տարածքների ջրակալներում, քննարկվել են դրանց ձկնային համակեցությունների գոյությանը սպառնացող հնարավոր վտանգները:

Ձկնաշխարհ – արգելոց – ազգային պարկ – ջրակալներ

В результате исследований за 1985-2012 гг. описан видовой состав ихтиофауны государственных заповедников “Хосровский лес” и “Шикаох” и национальных парков “Севан”, “Дилижан”, “Арпилич” и “Аревик”, выявлены распространение и частота встречаемости рыб в водоемах этих особо охраняемых территорий, обсуждены возможные угрозы существованию их рыбных сообществ.

Ихтиофауна – заповедник – национальный парк – водоемы

Based on the results of the studies implemented during 1985-2012 the fish species compositions of the “Khosrov Forest” and “Shikahogh” State Reserves, and “Sevan”, “Dilijan”, “Arpilich”, and “Arevik” National Parks have been described. The distribution and abundance of the fishes in the water bodies of protected areas were determined, and the main threats for fish species communities were discussed.

Ichthyofauna – Reserve – national Park – water body

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս ձևավորված են «Խոսրովի անտառ», «Էրեբունի» ու «Շիկահողի» պետական արգելոցները և «Սևան», «Դիլիջան», «Արփիլիճ» ու «Արևիկ» ազգային պարկերը: Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ հատուկ պահպանվող տարածքների մեծ մասը ձևավորվել է սկսած անցյալ դարի 50-ական թվականներից, մինչ այժմ էլ նրանց ձկնաշխարհի տեսակային կազմն ու ձկնաբանական ուսումնասիրությունները լիարժեք չեն: Իրավիճակը խորանում է նաև նրանով, որ վերջին տարիներին Հայաստանի ջրակալներ են ներմուծվել ու կլիմայավարժվել բազմաթիվ այլ ձկնատեսակներ, որի արդյունքում ձկների տեսակային կազմը 24-ից հասել է մինչև 40-ի [8, 14]: Այդ նոր տեսակներից շատերը, որոնք պատկանում են եվրոպական, հեռավորարևելյան և հյուսիսամերիկյան տարածա-շրջանների ջրային համակարգերին, ՀՀ են ներթափանցել հիմնականում ձկնային տնտեսությունների համար արժեքավոր լճակային ձկնատեսակների՝ կարպի (*Cyprinus carpio*), սպիտակ (*Hypophthalmichthys molitrix*) ու խայտաբղետ (*Aristichthys nobilis*) հաստաճակատների, սպիտակ ամուրի (*Ctenopharyngodon idella*) և այլ տեսակների հետ միասին ու լայնորեն տարածվել են Հայաստանի բնական ջրակալներում [14]: Այդ կլիմայավարժված ձկնատեսակներն իրենց հերթին կարող են մուտք գործել նաև արգելոցների ու ազգային պարկերի ջրային տարածքներ՝ անկանխատեսելի հետևանքներ

հարուցելով տեղի ձկնաշխարհի և այլ ջրային օրգանիզմների համակեցության վրա: Բացի այդ, ՀՀ կենդանիների Կարմիր գրքում [2] ընդգրկված 4 սաղմոնակերպ (*Salmoniformes*) և 6 ծածանակերպ (*Cypriniformes*) ձկների տաքսոններից միայն մի մասն է պահպանության տակ գտնվում Հայաստանի գործող պետական արգելոցներում և ազգային պարկերում:

Ելնելով վերոգրյալից, մենք մեր առջև խնդիր ենք դրել ուսումնասիրել Հայաստանի արգելոցների, բացի մշտական ջրակալներ չունեցող «Էրեբունի» արգելոցից, և ազգային պարկերի ձկնաշխարհի ներկայիս տեսակային կազմը, պարզել հայտնաբերված ձկնատեսակների տարածվածությունն ըստ հատուկ պահպանվող տարածքների առանձին ջրակալների, գնահատել տեղի ձկնաշխարհին սպառնացող վտանգները: Սույն աշխատանքը նպատակ ունի տվյալների բազա հանդիսանալ ՀՀ պետական արգելոցներում և ազգային պարկերում բնապահպանական աշխատանքներն ավելի ուղղորդված և արդյունավետ կազմակերպելու համար:

Նյութ և մեթոդ: Կատարված ուսումնասիրությունների համար նյութ են հանդիսացել 1985-2012 թթ. ժամանակահատվածում մեր կողմից պարբերաբար իրականացված ձկնաբանական դիտարկումներն ու հետազոտությունները Հայաստանի արգելոցներում և ազգային-պարկերում, ինչպես նաև մի շարք գրական աղբյուրները [5, 7, 9, 18]: Առանձին ձկնատեսակների վիճակը գնահատելու համար օգտագործել ենք Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչները [2]: Առանձին ջրակալներում ձկնատեսակների քանակի որոշման համար (բազմաքանակ, սովորական, հազվագյուտ) հաշվի են առնվել տվյալ ձկնատեսակի տոկոսային հարաբերակցությունը: Մեր կողմից պայմանականորեն «հազվագյուտ» է համարվել այն ձկնատեսակը, որի քանակը որսված ձկների ընդհանուր քանակության մեջ կազմել է 10 %-ից ցածր, «սովորական»՝ 10-ից 30%-ի դեպքում, «բազմաքանակ»՝ 30 %-ից ավելի դեպքում:

Արդյունքներ և քննարկում: «Խոսրովի անտառ» արգելոցի ջրակալների հիմնական ձկնատեսակներ են կարմրախայտը (*Salmo trutta fario*), արևելյան տառեխիկը (*Alburnoides bipunctatus eichwaldi*), Սևանի կողակը (*Capoeta sevangi*), Կուրի բեղաձուկը (բեղուն) (*Barbus cyri* (= *Barbus lacerta cyri*): Բացի վերոգրյալ ձկնատեսակներից, արգելոցի սահմաններից Ազատ և Վեդի գետերի միջոցով ներթափանցում են նաև մուրճին (*Luciobarbus mursa*), անգորական լերկաձուկը (*Oxymacheilus angora*), Կուրի լերկաձուկը (*Orthrias brandti*), Կուրի սպիտակաձուկը (*Alburnus filippii*), ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva*) (կլիմայավարժված տեսակ է):

«Խոսրովի անտառ» արգելոցով հոսող Ազատ գետում և նրա մեջ թափվող Գողթ, Միլի, Ուղտակունք և Քաջառու վտակներում ներկայում հանդիպող հիմնական ձկնատեսակներն են կարմրախայտը, արևելյան տառեխիկը, Սևանի կողակը, Կուրի բեղաձուկը: Նշված ձկնատեսակներից առավել մեծաքանակն է արևելյան տառեխիկը, այնուհետև՝ կողակը: Բեղաձուկը համեմատաբար քիչ է հանդիպում, իսկ կարմրախայտը՝ դարձել է հազվադեպ հանդիպող: Վերջինս հիմնականում բնակվում է Ազատ գետի և նրա մեջ թափվող վտակների վերին հոսանքներում: Գարնանային վարարումների ժամանակ կարող է հանդիպել նաև Ազատ գետի միջին հոսանքում և նրա մեջ թափվող վտակների ողջ երկարությամբ:

Արևելյան տառեխիկը բնակվում է Ազատ գետի և նրա մեջ թափվող առանձին վտակների միջին և ստորին, երբեմն վերին հոսանքներում, ուր նախընտրում է ստորջրյա քարերով հարուստ արագահոս տեղանքները: Ապրում է փոքր, մինչև մի քանի տասնյակ առանձնյակներից կազմված վտանքներով:

Սևանի կողակը բնակվում է Ազատ գետի և նրա մեջ թափվող առանձին վտակների միջին և ստորին հոսանքներում: Այս տեսակն ընդգրկված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի» ձկնատեսակ՝ VU A1cd [2]:

Կուրի բեղաձուկը բնակվում է Ազատ գետի և նրա մեջ թափվող առանձին վտակների միջին և ստորին, երբեմն վերին հոսանքներում, ուր նախընտրում է ստորջրյա քարերով հարուստ արագահոս տեղանքները:

Վեդի գետում և նրա մեջ թափվող Խոսրով, Մանկունք, Աղձ վտակներում ներկայում հանդիպող հիմնական ձկնատեսակներն են կարմրախայտը, արևելյան տառեխիկը, Սևանի կողակը, Կուրի բեղաձուկը: Կարող են հանդիպել նաև Կուրի սպիտակաձուկը, անգորական լերկաձուկը, արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*), ամուրյան նրբաձկնիկը, ծիածանախայտը (*Parasalmo mykiss*) (վերջին երեք տեսակները կլիմայավարժված կամ պատահականորեն ներթափանցած ձկներ են):

«Շիկահող» արգելոցի հոսող ջրակալներում՝ Ծավ և Շիկահող գետերում ու նրանց մեջ թափվող մանր վտակներում հիմնական ձկնատեսակներ են հանդիսանում կարմրախայտը (սովորական է գետերի վերին և միջին հոսանքներում, ավելի հազվադեպ՝

ստորին հոսանքներում), արևելյան տառեխիկը (բազմաքանակ է ստորին հոսանքներում, հազվադեպ՝ միջին և վերին հոսանքներում), կողակը (*Capoeta* sp.) (սովորական է ստորին հոսանքներում, ավելի հազվադեպ՝ միջին հոսանքներում), Կուրի բեղաձուկը (սովորական է գետերի միջին և ստորին հոսանքներում, հազվադեպ՝ վերին հոսանքներում): Բացի վերոգրյալ ձկնատեսակներից, արգելոցի գետերում ֆորելային տնտեսություններից պարբերաբար ներթափանցում է նաև ծիածանախայտը: Ներկայում լիարժեք պարզաբանված չէ «Շիկահող» պետական արգելոցում բնակվող կողակների կարգաբանական վիճակը: Ամենայն հավանականությամբ այստեղ հանդիպում է նաև Սևանի կողակը:

Կարմրախայտը հիմնականում բնակեցնում է Ծավ և Շիկահող գետերի միջին և վերին, երբեմն՝ ստորին հոսանքները: Կողակը բնակվում է Ծավ և Շիկահող գետերի ստորին հոսանքներում, երբեմն բարձրանալով միջին հոսանքներ: Կուրի բեղաձուկը բնակվում է Ծավ և Շիկահող գետերի միջին և ստորին, երբեմն վերին հոսանքներում, ուր նախընտրում է ստորջրյա քարերով հարուստ արագահոս տեղանքները: Ծիածանախայտը պարբերաբար հայտնվում է Ծավ գետում, այստեղ ներթափանցելով ֆորելային տնտեսություններից:

«Շիկահող» պետական արգելոցի ջրակայներում, բացի վերոգրյալ տեսակներից, զարնան և ամռան առաջին կեսին՝ գետերի զարնանային հորդացումների և ձկների բազմացման ժամանակաշրջանում, Ծավ և Շիկահող գետերի ստորին հոսանքում կարող են հանդիպել նաև հետևյալ ձկնատեսակները՝ մուրձին, անգորական լերկաձուկը, Կուրի լերկաձուկը, Կուրի սպիտակաձուկը, ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchum*) և այլ ձկնատեսակներ:

«Սևան» ազգային պարկում մինչև 1970-80 թթ. հանդիպում էին հետևյալ տեղաբնակ ձկնատեսակները՝ Սևանի իշխան իր 4 ռասաներով (էկոլոգիական ձևերով)՝ ձմեռային իշխան (*Salmo ischchan ischchan*), բոջակ (*Salmo ischchan danilewskii*), գեղարքունի (*Salmo ischchan gegarkuni*), ամառային իշխան (*Salmo ischchan aestivalis*)՝ իրենց ալֆա և բետա կենսատիպերով՝ էկոլոգիական փոփոխականներով (բացի ամառային իշխանից), Սևանի կողակը, Սևանի բեղաձուկը [7]: Սևանա լիճ թափվող հիմնական գետերում նկարագրված էր գեղարքունու գետային ձևը՝ ալաբալախը (*Salmo ischchan gegarkuni morpha alabalach*) [5], որին ներկայում ընդունում են որպես կարմրախայտ (*Salmo trutta fario*) [8]: 1924-27 թթ. Սևանում կլիմայավարժեցվել են Լադոգա և Չուդ լճերից ներմուծված սիգ-լոլոգան (*Coregonus lavaretus ludoga*) և չուդյան սիգը (*Coregonus lavaretus maraenoides*) [7, 10]:

Ներկայում «Սևան» ազգային պարկում հանդիպում են հետևյալ հիմնական ձկնատեսակները՝ գեղարքունի (*Salmo ischchan gegarkuni*) (ընդ որում, լճում ներկայում հանդիպում է գեղարքունու միայն ալֆա կենսատիպը [9], ամառային իշխան (*Salmo ischchan aestivalis*), կարմրախայտ, սիգ (*Coregonus lavaretus*), Սևանի կողակ (*Capoeta sevangi*), Սևանի բեղու (*Barbus lacerta goktschaicus*), արծաթափայլ կարաս (*Carassius auratus gibelio*): Առայժմ ոչ մեծ քանակով կամ պարբերաբար հանդիպում են նաև արևելյան տառեխիկը, ամուրյան նրբաձկնիկը, ծիածանախայտը, կարպը (*Cyprinus carpio*):

Սևանի իշխանը (*Salmo ischchan*) Սևանա լճի էնդեմիկ ու պոլիմորֆ տեսակ է, որը լճում ներկայացված էր 4 էկոլոգիական ձևերով կամ ռասաներով՝ ձմեռային իշխան, գեղարքունի, ամառային իշխան, բոջակ: Ելնելով տեսակի կենսաբանական հայեցակարգից [11]՝ այդ ռասաներին կարելի է ընդունել նաև որպես առանձին տեսակներ՝ ձմեռային իշխան (*Salmo ischchan*), գեղարքունի (*Salmo gegarkuni*), ամառային իշխան (*Salmo aestivalis*), բոջակ (*Salmo danilewskii*): Ձմեռային իշխանը և բոջակը ներկայում համարվում են վերացած և Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում են «Անհետացած»՝ EX [2]: Գեղարքունին և ամառային իշխանը անհետացող, տեղային տարածվածություն ունեցող ձկնատեսակներ են, որոնք Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում են որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2cd [2]:

Սևանի կողակը նույնպես համարվում է Սևանի էնդեմիկ ձկնատեսակներից մեկը, որը լճում և նրա մեջ թափվող գետերում ձևավորել է առանձին, այդ թվում՝ լճային, լճա-գետային և գետային պոպուլյացիաներ [6, 7]: Սակայն, նախկինում իրա կանացված կլիմայավարժեցման աշխատանքների արդյունքում այս ձկնատեսակը ներկայում լայնորեն տարածվել է նաև ՀՀ և նրան հարակից պետությունների ջրակայներում [8, 14, 16]:

Սևանա լճում ունեցել է արդյունագործական նշանակություն, սակայն գլխաքանակի կտրուկ նվազման պատճառով անցած դարի 90-ական թվականներից այս տեսակի որսը լճում դադարեցվել է: Ներկայում Սևանի կողակը, ինչպես արդեն նշեցինք, ընդգրկվել է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում [2]:

Սևանի բեղաձուկը նույնպես համարվում է Սևանի էնդեմիկ ձկնատեսակներից մեկը, որը լճում և նրա մեջ թափվող գետերում ձևավորել է առանձին, այդ թվում՝ լճային,

լճա-գետային և գետային պոպուլյացիաներ, որոնք իրարից տարբերվում են որոշ ձևաբանաչափական առանձնահատկություններով ու բազմանալու վայրով [7]: Գետերով կարող է բարձրանալ մինչև 2200 մ ծ.մ.բ.: Մնվում է մերձհատակային անողնաշարավորներով՝ միջատներով ու նրանց թրթուրներով, ստորակարգ խեցգետնակերպերով, փափկամարմիններով, ձկնկիրթով, երբեմն՝ բույսերով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2cd [2]:

Արծաթափայլ կարասը պատահականորեն Սևանա լճում է հայտվել 1980-ականների սկզբին [12] և արդեն 80-ական թվականների վերջին ուներ արդյունագործական նշանակություն: Սևանա լճում բնակվում է մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր առանձնյակից կազմված վտառներով, բնակեցնելով լճի առափնյա հատկապես այն վայրերը, որոնք հարուստ են ջրային և առափնյա բուսականությամբ: Կլիմայա-վարժեցման վաղ տարիներին վտառներում գերիշխում էին էգերը, որոնք կազմում էին ընդհանուրի շուրջ 90 % [13]: Ենթադրվում է, որ Սևանում կարասները կարող են բազմանալ նաև գինոգենեզով [15]: Սևանա լճում կարասի քանակի հետագա աճը ոչ ցանկալի երևույթ է համարվում [6]:

Արևելյան տառեխիկը Սևանա լճում հայտնաբերվել է 2010 թ-ին [1]: Հաշվի առնելով արտաքին պայմանների նկատմամբ այս ձկնատեսակի էկոլոգիական մեծ ճկունությունը, կարելի է ենթադրել, որ առաջիկա տարիներին կսպասվի տառեխիկի արեալի արագ ընդարձակում Սևանա լճի ավազանում:

Ամուրյան նրբաձկնիկը որսվել է Հրազդան գետի գետաբերանում՝ Սևանա լճից դուրս հոսելու վայրում և Ձկնագետում [3, 4]: Ինչպես և արևելյան տառեխիկի դեպքում, կարելի է սպասել այս ձկնատեսակի արեալի ընդարձակմանը և քանակի ավելացմանը Սևանի ավազանում, ինչը խիստ անցանկալի երևույթ է:

Կարպը և ծիածանախայտը Սևանա լճում հայտնվում են ձկնային տնտեսություններից պատահական ներմուծման շնորհիվ: Այդ ձկնատեսակների կլիմայավարժեցման ու լճում նրանց հետագա տարածման մասին տվյալները դեռևս լիարժեք չեն:

«Դիլիջան» ազգային պարկի ջրակայանում ներկայում հանդիպում են հետևյալ ձկնատեսակները՝ կարմրախայտը (սովորական է Աղստևի վտակների վերին և միջին հոսանքներում, հազվադեպ կարող է հանդիպել Աղստև գետում), արևելյան տառեխիկը (բազմաքանակ է Աղստևում, նրա մեջ թափվող վտակների ստորին հոսանքներում, ավելի հազվադեպ՝ միջին հոսանքներում), Սևանի կողակը (սովորական է Աղստևում, նրա մեջ թափվող խոշոր վտակների ստորին հոսանքներում, հազվադեպ կարող է բարձրանալ այդ վտակների միջին հոսանքներ), Կուրի բեղաձուկը (սովորական է Աղստևում, նրա մեջ թափվող խոշոր վտակների ստորին և միջին հոսանքներում, շատ հազվադեպ՝ վերին հոսանքներում): Աղստևում հանդիպում են նաև կովկասյան թեփուղը (*Squalius cephalus orientalis*), Կուրի լեռնաձուկը, կլիմայավարժեցված տեսակներից՝ արծաթափայլ կարասը (զանգվածաբար է) Պարզ լճում, սովորական՝ Աղստևում, ամուրյան նրբաձկնիկը (սովորական է Աղստևում): Ավելի հազվադեպ Աղստևում հանդիպում են մուրձին, անդրկովկասյան սպիտակաձուկը (*Alburnus hoheneri*), Կուրի կողակը (*Capoeta capoeta capoeta*): Աղստև գետում հնարավոր են հանդիպումներ նաև Կուրի սպիտակաձկան և ենթաբերանի հետ: Վերջին տասնամյակների ընթացքում Աղստև գետի ավազանին պատկանող ֆորելային տնտեսություններից Աղստև և նրան պատկանող վտակների մեջ հաճախակի է հայտնվում ծիածանախայտը (հատկապես Հաղարծին գետում), ինչպես նաև կարպը (բազմաքանակ է Պարզ լճում): Հնարավոր են նաև ձկնային տնտեսություններում բուծվող այլ ձկնատեսակների ի հայտ գալը ազգային պարկի տարածքում:

Աղստև գետում հայտնաբերվել են հետևյալ ձկնատեսակները՝ կարմրախայտը (հանդիպում է պատահականորեն), արևելյան տառեխիկը (բազմաքանակ է), Սևանի կողակը (սովորական է), Կուրի կողակը (հազվադեպ է), Կուրի բեղաձուկը (սովորական է), կովկասյան թեփուղը (սովորական է), Կուրի լեռնաձուկը (սովորական է), արծաթափայլ կարասը (սովորական է), ամուրյան նրբաձկնիկը (սովորական է), մուրձին (հազվադեպ է), անդրկովկասյան սպիտակաձուկը (հազվադեպ է), ծիածանախայտը (պարբերաբար հայտնվում է գետի ավազանի ֆորելային տնտեսություններից), կարպը (պատահականորեն կարող է հայտնվել լճակային տնտեսություններից կամ էլ Պարզ լճից): Հնարավոր են հանդիպումներ նաև Կուրի սպիտակաձկան և ենթաբերանի հետ:

Հաղարծին գետում հանդիպող հիմնական, բայց հազվադեպ ձկնատեսակն է կարմրախայտը, որից բացի պարբերաբար հանդիպում է գետի հունի վրա կառուցված ֆորելային տնտեսություններից այստեղ ներթափանցած ծիածանախայտը:

Բլրան գետում հանդիպում է 4 ձկնատեսակ՝ կարմրախայտ, Կուրի բեղաձուկ, արևելյան տառեխիկ և, երբեմն, կողակ: Կարմրախայտը հանդիպում է գետի վերին ու մի-

ջին հոսանքներում, Կուրի բեղաձուլը՝ հիմնականում միջին և ստորին հոսանքներում, երբեմն վերին ու ստորին հոսանքների սահմանագծում: Կուրի բեղաձուլն տարածման ջրջանում հանդիպում է նաև արևելյան տառեխիկը: Բլդանի ստորին հոսանքում հազվադեպ հանդիպում է կողակը:

Գետիկ գետում հանդիպում են 4 հիմնական ձկնատեսակ՝ կարմրախայտ, Կուրի բեղաձուլ, արևելյան տառեխիկ և կողակ: Ընդ որում, կարմրախայտը, ինչպես մյուս գետերում, հանդիպում է այդ գետի վերին ու միջին հոսանքներում, Կուրի բեղաձուլը և արևելյան տառեխիկը՝ հիմնականում միջին և ստորին հոսանքում, կողակը՝ ստորին և, երբեմն, միջին հոսանքում: Գետիկի ստորին հոսանքում հայտնաբերվել է նաև Կուրի լեկաձուլը: Հնարավոր է նաև Աղստևում բնակվող ձկների մեծ մասի բնակությունը Գետիկի ստորին հոսանքում՝ այս գետի Աղստևին միախառնվելու վայրում:

Ներկայում Պարզ լիճը արհեստականորեն բնակեցրած է արծաթափայլ կարասով և կարպով, որոնք տվյալ լճում հանդիսանում են զանգվածային տեսակներ, իսկ լիճը՝ գերբնակեցված դրանցով: Այլ տեսակների հավաստի առկայության մասին վերջին տվյալները բացակայում են:

«Արփիլիճ» ազգային պարկ: Մինչ Արփի լճի վերափոխումը ջրամբարի՝ լճում և նրա մեջ թափվող ու դուրս հոսող գետերում հանդիպում էին 8 տեսակ ձկներ՝ կարմրախայտը, կովկասյան թեփուղը, հաշամը (*Aspius aspius*), ենթաբերանը, կողակը, արևելյան տառեխիկը, ծածանը (*Cyprinus carpio*), անգորական լեկաձուլը: Ներկայում Արփիլիճ ջրամբարում և նրա մեջ թափվող գետակներում, ինչպես նաև նրանից դուրս հոսող Ախուրյան գետի (լճին հարակից տարածքներ), բացի վերոգրյալ ձկնատեսակներից հանդիպում են նաև Կուրի բեղաձուլը, Կուրի սպիտակաձուլը, արծաթափայլ կարասը և ամուրյան նրբաձկնիկը [17]:

Արփի լճում և նրա մեջ թափվող գետակներում առավել հազվադեպ հանդիպող ձկնատեսակներից է կարմրախայտը, որը լիճը ջրամբար վերածվելուց հետո դադարել է այստեղ հանդիպել: Կովկասյան թեփուղը Զավախքի սարահարթի ամենաբազմաքանակ ձկնատեսակներից մեկն է, որը կարող է բնակվել ինչպես գետերում, այնպես էլ լճերում, այստեղ առաջացնելով գետային և լճային էկոլոգիական ձևեր: Այդ երկու ձևերն էլ հանդիպում են Արփի լճում և նրա ավազանին պատկանող գետերում [7]: 1998թ. կովկասյան թեփուղը կազմել է Արփի լճում որսված ձկների ընդհանուր քանակի 15-20 %-ը:

Հաշամը միշտ հազվադեպ հանդիպող տեսակ է եղել լճում, որտեղ ներկայացված է եղել նստակյաց պոպուլյացիայով: Ախուրյան գետի և ջրամբարի միջև կապի դադարումից հետո հաշամը չի հայտնաբերվել լճում: Ներկայում հաշամը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում որպես հազվադեպ, կրճատվող թվաքանակով և արեալով տեսակ: Տեսակն ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում (ver. 3.1)՝ “Least Concern” կարգավիճակով, և որի չափորոշիչներով գնահատվում է “Խոցելի”՝ VU B1ab (iii) [2]:

Կողակը հիմնականում սնվում է դետրիտով և այդ առումով Արփի լճում միակ ձկնատեսակն է, որի քանակության համար կերի առկայությունը լիմիտավորող նշանակություն չունի: Միաժամանակ, այս տեսակի տեղական պոպուլյացիան կախված է ձկնկիթի զարգացման պայմաններից, քանի որ նրա ձվադրման ժամկետներն առնվազն երկու գետակներում (Դարիկ, Շաղիկ) սովորաբար համընկնում է ջրի նվազագույն քանակի հետ (հուլիս-օգոստոս), ինչը ձկնկիթի և թրթուրների զարգացման համար ոչ նպաստավոր պայմաններ է առաջացնում: Մյուս կողմից, կողակի մանրաձկները սնունդ են հանդիսանում կովկասյան թեփուղի համար, ինչը որոշակի ազդեցություն կարող է գործել կողակի գլխաքանակի վրա: 1998 թ. Կողակը կազմել է Արփի լճում որսված ձկների ընդհանուր քանակի մոտ 5-10%-ը:

Արևելյան տառեխիկը մինչև ջրի մակարդակի բարձրացումը սովորական էր ողջ լճի համար: Ներկայում այն ապրում է նրա մեջ թափվող և դուրս հոսող գետերում: Արևելյան տառեխիկի գլխաքանակը կախված է պլանկտոնի առկայությունից և կովկասյան թեփուղի առկայությունից, որի խոշոր առանձնյակները սնվում են տառեխիկով:

Ծածանը եղել և մնում է Արփի լճի ամենակարևոր ձկնատեսակը: Մինչ ջրամբարի վերածումը Արփի լճում ծածանի սնունդը եղել են՝ բարձրակարգ ջրային բույսերը, կենդանական պլանկտոնը, դետրիտը և Chironomidae ընտանիքին պատկանող երկթևանիների թրթուրները: Դետրիտը կազմում էր սննդի միայն 6%-ը [7]: 1998թ. ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դետրիտը կազմում է սննդագնդիկի պա թունակության գրեթե կեսը, ինչը վկայում է ծածանի կերային բազայի աղքատացման մասին և ազդում է այս ձկնատեսակի աճի վրա: Բազմացումը տեղի է ունենում հունիս ամսին: Ձկնկիթը դրվում է ծանծաղ, լավ տաք վայրերում, որոնք տեղա-կայված են ջրամբարի արևմտյան հատվածում: Ծածանի որսված առավելագույն քանակը գրանցվել է ջրամբարի կառուցումից անմիջապես հետո 1953թ.՝ 120 տոննա [7]: 1998թ. ծածանը

կազմել է Արփի լճում որսված ձկների ընդհանուր քանակի մոտ 70-80%-ը: Ներկայումս ջրամբարում ծածանի քանակը նվազել է կերի, ինչպես նաև օրինական և անօրինական ձկնորսության աճի պատճառով:

Արծաթափայլ կարասը Արփի լճի ջրամբարում առաջին անգամ գրանցվել է 2000թ.: Վերջին տվյալները վկայում են արծաթափայլ կարասի աճող ազդեցության մասին լճի էկոհամակարգի վրա: Բարեհաջող կլիմայավարժվելով լճում և տարեկան ձվադրելով 2-3 անգամ (ձկնկիթի միջին ցուցանիշները տարբեր տարիներին կազմել են 35-60 հազար), կարասը ներկայումս միտում ունի դառնալու լճի ամենաբազմաքանակ ձկներից մեկը:

Անգորական լերկաձուկը ներկայումս հանդիպում է ինչպես Արփի լճում, այնպես էլ Ախուրյանի գետաբերանում: Նախընտրում է ջրի դանդաղ հոսք ունեցող տեղավայրերը:

Արփի լճի շրջակայքում բնակվող տեղացիների կերակրացանկում ձուկը կարևոր նշանակություն ունի: Արփի լիճը, որպես մերձալպյան լիճ, ունի բավական բարձր ձկնատվություն համեմատած այլ նման բնական ծագում ունեցող լճերի հետ՝ 107 կգ/հա կամ 45-48 տ լճի ղոջ մակերեսից: Առավելագույն ձկնորսությունը գրանցվել է ջրամբարի կառուցումից հետո՝ 1953 թ.՝ մոտ 150 տ [7]: 1998թ. ձկան որսը կազմել է 30 տ: Հիմնական ձկնատեսակներ են հանդիսացել ծածանը, կովկասյան թեփուղը և կողակը, որոնք կազմել են ընդհանուր ձկնորսության համարյա 100%-ը: Վերջին տարիներին նկատվում է ձկնորսության օբյեկտների քանակի նվազում, իսկ արծաթափայլ կարասը կազմում է ընդհանուր ձկնորսության օբյեկտների համարյա կեսը:

Առնվազն 7 ձկնատեսակ է գրանցվել Արփի լիճ թափվող գետերում՝ կարմրախայտ, կովկասյան թեփուղ, հաշամ, ենթաբերան, կողակ, արևելյան տառեխիկ և անգորական լերկաձուկ: Սակայն վերջին տասնամյակի ընթացքում (1998-2008 թթ.) կատարված ձկնաբանական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է միայն 3 ձկնատեսակ՝ կարմրախայտը, կովկասյան թեփուղը և ենթաբերանը: Այսպես, կարմրախայտի միակ նմուշը գրանցվել է Դարիկ գետի վերին հոսանքներում: Այնուհայտ է, որ այս տեսակի քանակը զգալի նվազել է և այն գտնվում է ոչնչացման եզրին: Սա պայմանավորված է նաև ջրամբարի շահագործման արդյունքում ձևավորված անբարենպաստ էկոլոգիական պայմանների պատճառով:

Ներկայումս կովկասյան թեփուղը Արփի լճի մեջ թափվող գետակներում որոշ առումով կատարում է կարմրախայտի դերը: Գետակներում բնակվող թեփուղները որոշակիորեն տարբերվում են լճում բնակվողներից՝ չափերով և որոշ ձևաբանական առանձնահատկություններով: Գետակների ձկների գրանցված առավելագույն քաշը 200 գ է, լճում՝ 700 գ և ավելի: Չվաղըման վայրերը գտնվում են վտակների հոսքերով դեպի վերև 2-3 կմ վրա, որտեղ կովկասյան թեփուղը ձվադրում է հունիս-հուլիս ամիսներին:

Ենթաբերանը ներկայումս սովորական է բոլոր վտակների ցածր և միջին հոսանքներում, ուր հիմնականում սնվում է բուսական ծագում ունեցող կերերով:

Ախուրյան գետում բնակվում է ավելի քան 25 ձկնատեսակ [14], որոնցից 11-ը գրանցվել է ք. Աշոցքի շրջակայքում՝ «Արփիլիճ» ազգային պարկի սահմանագծին: Այստեղ հանդիպում են կովկասյան թեփուղը, հաշամը, ենթաբերանը, Սևանի կողակը, Կուրի բեղաձուկը, արևելյան տառեխիկը, ծածանը, արծաթափայլ կարասը, ամուրյան նրբաձկնիկը, Կուրի սպիտակաձուկը և անգորական լերկաձուկը, որոնցից առավել մեծաքանակ են կովկասյան թեփուղը, ենթաբերանը, արևելյան տառեխիկը, արծաթափայլ կարասը: Հազվադեպ հանդիպում է հաշամը, իսկ Սևանի կողակը սովորական է: Հավանական է նաև Կուրի կողակի, մանրաթեփուկի և ՀՀ Կարմիր գրքում գրանցված ոսկեգույն ծականի (*Sabanejewia aurata*) առկայությունը, որոնք մինչ այժմ հավաստիորեն այստեղ չեն հայտնաբերվել, սակայն հանդիպում են Ախուրյանի միջին և ստորին հոսանքներում: Երբեմն էլ պատահականորեն կարող է հանդիպել կարմրախայտը, ինչպես նաև ֆորելային տնտեսություններից ներթափանցած ծիածանախայտը:

«Արփիլիճ» ազգային պարկի ձկնատեսակներին սպառնացող վտանգները: Չնայած Արփի լճի ջրամբարի ու նրա ավազանին պատկանող գետերի ու գետակների ձկների կենսաբազմազանության ընդհանուր աճին, 1998-2010 թթ. ընթացքում նկատվել է մարդածին գործոնների խիստ ազդեցություն լճի էկոհամակարգի վրա՝ լճի ափերի հաճախակի մերկացում ու ջրի մակարդակի պարբերական փոփոխություններ, գյուղական բնակչության տնտեսական գործունեության ազդեցության ուժեղացում, ձկների որսագողություն, որից էական վտանգ է ներկայացնում գետերում չթույլատրված միջոցների օգտագործմամբ (պայթուցիկ և թունավոր նյութեր, էլեկտրականություն) իրականացվող ձկնորսությունը: Այդ գործոնները լճում կլիմայավարժեցրած ոչ ցանկալի ձկնատեսակների՝ արծաթափայլ կարասի, ամուրյան նրբաձկանի հետ միասին հանգեցրել են տեղաբնակ ձկնատեսակների համակեցության կառուցվածքի բացասական փոփոխությունների՝ նվազել է նրանց ընդհանուր քանակությունը, փոփոխվել է ձկների վտանգների քանակական և որակական կազմը՝ հոգուտ թափոնային և ցածրարժեք

ձկնատեսակների օգտին: Բացի այդ, լճում արդեն գոյություն չունի գենետիկորեն տարանջատված արփիլիճյան ծածանի վտառ, քանի որ տարբեր ճանապարհներով ջրամբար են ներմուծվել տարբեր ծագում ունեցող կարպի երիտասարդ և հատուկ առանձնյակներ, որոնք արդեն գենետիկորեն խառնվել են տեղաբնակ ծածանի հետ:

«Արևիկ» ազգային պարկով հոսող Մեղրի գետի վերին հոսանքում, Մեղրի գետի ձախակողմյան վտակներում՝ Տաշտունում, Գոգզոզում, Վանքում, Վարդանիձորում բնակվում են տեղաբնակ 4 ձկնատեսակ՝ կարմրախայտ, արևելյան տառեխիկ, կողակ, Կուրի բեղաձուկ: Նշված բոլոր ձկնատեսակներն էլ ազգային պարկի գետերում հանդիպում են ոչ մեծ քանակներով, իսկ կողակը՝ հազվագյուտ: Հաշվի առնելով այն, որ «Արևիկ» ազգային պարկի ծայր հարավ-արևելյան և հարավ-արևմտյան հատվածները հարում են Արաքս գետին և հաշվի առնելով այն, որ հետագայում նախատեսվում է այս ազգային պարկի հարևանությամբ Իրանի Իսլամական Հանրապետությունում ստեղծել անդրսահմանային հատուկ պահպանվող տարածք, ապա նպատակահարմար է այս ազգային պարկի ձկնաշխարհում դիտարկել նաև Արաքս գետի տվյալ հոսանքում հանդիպող ձկնատեսակներին, որոցից են՝ թեփուղը, հաշամը, ենթաբերանը, Սևանի կողակը, Կուրի կողակը, Կուրի բեղաձուկը, մուրձին, ճանարը, մանրաթեփուկը, Կուրի սպիտակաձուկը, ծածանը, անդրկովկասյան գուստերան (*Blicca bjoerkna transcaucasica*), Կուրի լերկաձուկը, բրամը (*Abramis brama*), սովորական քաղթակը (*Gobio gobio*), արևելյան տառեխիկը, արծաթափայլ կարասը, լոքոն (*Silurus glanis*), սուդակը (*Sander lucioperca*): Կարող են հանդիպել նաև առաջավորասիական ծականը, արծաթաձկնիկը (*Leucaspis delineatus*), անդրկովկասյան սպիտակաձուկը, անգորական լերկաձուկը, ավազային ցիկաձուկը (*Neogobius fluviatilis*), ինչպես նաև ֆորելային և լճակային տնտեսություններից այստեղ ներթափանցող ծիածանախայտը, կարպը և այլն:

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք եզրակացնել, որ.

«Խոսրովի անտառ» արգելոցի գետերի հիմնական ձկնատեսակները չորսն են և կարող են հանդիպել ևս 7-ը: Հանդիպող ձկնատեսակներից մեկը՝ Սևանի կողակը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: «Շիկահողի» արգելոցի գետերի հիմնական ձկնատեսակները չորսն են և կարող են հանդիպել ևս 5-ը: Դրանցից մեկը՝ Սևանի կողակը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: «Սևան» ազգային պարկում հանդիպում է 9 ձկնատեսակ, որոնցից 3-ը՝ իշխանը, Սևանի բեղաձուկը և Սևանի կողակը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և համարվում են էնդեմիկ ձկնատեսակներ: «Դիլիջան» ազգային պարկի ջրակալներում հանդիպում է 11 ձկնատեսակ և կարող են հանդիպել ևս 2-ը: Հանդիպող ձկնատեսակներից մեկը՝ Սևանի կողակը գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: «Արփիլիճ» ազգային պարկի ջրակալներում հանդիպում է 14 ձկնատեսակ, որոնցից 2-ը՝ Սևանի կողակը և հաշամը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: «Արևիկ» ազգային պարկի տարածքում, հաշվի առնելով նրա սահմանների հարակից լինելը Արաքս գետի հետ և հետագայում անդրսահմանային հատուկ պաշտպանվող հարակից տարածքի ձևավորման հեռանկարը Իրանի հյուսիսում, հանդիպում է 22 ձկնատեսակ և կարող են հանդիպել ևս 5-ը: Այդ ձկնատեսակներից երեքը՝ հաշամը, Սևանի կողակը և առաջավորասիական ծականը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում:

Այսպիսով, ՀՀ արգելոցների և ազգային պարկերի, ինչպես և Հայաստանի ջրակալների մեծ մասի ձկնաշխարհը վերջին տասնամյակներում կրել և շարունակում է կրել էական քանակական և որակական փոփոխություններ, որոնց արդյունքում ընդհանուր կենսաբազմազանության աճի հետ միասին նվազում է տեղաբնակ և արժեքավոր ձկնատեսակների քանակը, փոփոխվում է վտառների որակական կազմը: Ներկայում շատ ձկնատեսակներ՝ կարմրախայտ, հաշամ, կողակ, ծածան և այլն կորցրել են իրենց երբեմնի արդյունագործական նշանակությունը, չդիմանալով կլիմայավարժված և բուծվող առանձին տեսակների՝ արծաթափայլ կարասի, ամուրյան նրբաձկնիկի, ծիածանախայտի և այլ ձկնատեսակների հետ մրցակցությանը: Դրան նպաստում է նաև լայն տարածում ունեցող ձկնագողությունը: Այդ առումով, հատուկ պահպանվող տարածքներում տեղաբնակ ձկնատեսակների պահպանության համար պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ ռազմավարական մոտեցումներ, որոնք կարող են ընդգրկել ընդհանուր բնապահպանական և հատուկ նշանակության միջոցառումներ: Բացի այդ, ՀՀ կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են այլ ձկնատեսակներ՝ Կուրի քաղթակ (*Romanogobio persus*) և հայկական կարմրակն (*Rutilus schelkovnikovii*), որոնց բնակավայրերը դեռևս ընդգրկված չեն որևէ արգելոցի կամ ազգային պարկի տարածքում:

Հեղինակներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում Է.Ա. Տիգրանյանին՝ կատարվող աշխատանքի ընթացքում ցուցաբերած աջակցության և արժեքավոր խորհրդատվության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բարսեղյան Ն.Է., Վարդանյան Տ.Վ.* Սևանա լճի համար նոր տեսակ հանդիսացող հայկական տառեխիկի *Alburnoides bipunctatus armeniensis* (Osteichthyes, Cyprinidae) կենսաբանական բնութագիրը. Հայաստանի կենսաբ. հանդես, 63, 2, էջ 87-89, 2011:
2. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք: Անողնաշար և ողնաշարավոր կենդանիներ: Երևան: ՀՀ բնապահպանության նախարարություն, 368 էջ, 2010:
3. *Варданян Т.В.* Рост амурского чебачка *Pseudorasbora parva* (Temminck et Shlegel, 1846) в бассейне оз. Севан. Биоразнообразие и экологические проблемы сохранения дикой природы. Сб. статей международной научн. конф. молодых ученых, посвященной 70-летию Национальной Академии Наук Армении (Армения, Цахкадзор, 3-5 мая 2013). Ереван, 2013. С. 237-241.
4. *Варданян Т.В., Барсегян Н.Э., Габриелян Б.К.* Проникновение амурского чебачка *Pseudorasbora parva* (Temminck et Shlegel, 1846) в бассейн озера Севан. Мат.-лы международной научной конференции “Биологическое разнообразие и проблемы охраны фауны Кавказа”. Ереван, с. 92-95, 2011.
5. *Владимиров В.И.* Ручьевая форель Армении и ее отношение к другим представителям рода *Salmo*. Тр. Севан. гидробиол. ст. 10, с. 124-126, 1948.
6. *Герасимов Ю.В., Габриелян Б.К., Малин М.И., Рубенян А.Р.* Многолетняя динамика запасов рыб озера Севан и их современное состояние. В кн. “Экология озера Севан в период повышения его уровня. Результаты исследований Российско-Армянской биологической экспедиции по гидроэкологическому обследованию озера Севан (Армения) (2005-2009 гг.)”. Махачкала: Наука ДНЦ. с. 249-278. 2010.
7. *Дадибян М.Г.* Рыбы Армении. Ереван: АН АрмССР. 245 с., 1986.
8. *Левин Б.А., Рубенян А.Р.* Первые сведения о появлении армянской быстрянки *Alburnoides bipunctatus armeniensis* (Osteichthyes, Cyprinidae) в бассейне озера Севан. Биология внутр. вод. 3, с. 81-83, 2007.
9. *Левин Б.А., Рубенян А.Р.* Аннотированный список ихтиофауны Армении. Многолетняя динамика запасов рыб озера Севан и их современное состояние. В кн. “Экология озера Севан в период повышения его уровня. Результаты исследований Российско-Армянской биологической экспедиции по гидроэкологическому обследованию озера Севан (Армения) (2005-2009 гг.)”. Махачкала: Наука ДНЦ. с. 229-242, 2010.
10. *Маилян Р.А.* Систематика севанских сегов. Изв. АН АрмССР. биол. и сельхоз. науки. VII, 9, с. 37-47, 1954.
11. *Майр Э.* Принципы зоологической систематики. М. Мир. 454 с., 1971.
12. *Оганесян Р.О., Смолей А.И.* Карась в озере Севан. Биолог. журн. Армении. 38, 8, с. 725-726, 1985.
13. *Пипоян С.Х.* Исследование морфологических и биологических особенностей серебряного карася *Carassius auratus gibelio* (Bloch, 1783) в различных водоемах Армении. Автореф. дисс. на соиск. уч. ст. канд. биол. наук. Ереван. с. 22. 1993. *Пипоян С.Х.* Ихтиофауна Армении: этапы формирования и современное состояние. ISBN 978-3-8473-9977-3. 548 с., 2012.
14. *Пипоян С.Х., Рухкян Р.Г.* Размножение и развитие серебряного карася *Carassius auratus gibelio* в водоемах Армении. Вопросы ихтиологии. 38, 3, с. 353-358, 1998.
15. *Пипоян С.Х., Степанян И.Э., Аракелян А.С.* О распространении севанской храмули *Caroeta sevangi* de Filippi (Cyprinidae, Pisces) в водоемах Армении. Экология, эволюция и систематика животных. Мат.-лы международной научно-практической конференции 13-16 ноября, Рязань, Россия. с.352-353, 2012.
16. *Пипоян С.Х., Тигранян Э.А.* Изменения ихтиофауны озера Арпи (Армения) после его преобразования в водохранилище. “Торные экосистемы и их компоненты”: Мат.-лы IV Международной конференции, посвященной 80-летию основателя ИЭГТ КБНЦ РАН чл.-корр. РАН им. А.К. Тембетова и 80-летию Абхазского государственного университета// Нальчик, изд-во М. И В. Котляровых (ООО “Полиграфсервис и Т”), с. 116-117, 2012.
17. *Gabrielyan B.K.* An Annotated Checklist of Freshwater Fishes of Armenia. Naga, The ICLARM Quarterly (24, Nos. 3 & 4) July-December, p. 23-29, 2001.

Ստացվել է 16.08.2013



Биолог. журн. Армении, 1 (66), 2014

МУТАГЕННЫЕ СВОЙСТВА ГЕТЕРОЦИКЛИЧЕСКИ ЗАМЕЩЕННЫХ НЕБЕЛКОВЫХ АМИНОКИСЛОТ И ПЕПТИДОВ

М.Б. ЧИТЧЯН, А.С. САРКИСЯН, М.А. МЕЛКУМЯН,
Н.С. АВЕТИСЯН, Г.Г. ОГАНЕЗОВА, А.М. ОГАНЕСЯН, Н.А. ОГАНЕСЯН

НПЦ "Армбиотехнология" НАН РА
arm_biotech@yahoo.com, nelliog@yahoo.fr

Исследовано влияние ряда гетероциклически замещенных небелковых аминокислот и пептидов на частоту спонтанного и индуцированного N-метил-N'-нитро-N-нитрозогуанидином (НГ) мутагенеза. В качестве тест-культуры использован ауксотрофный по метионину и треонину штамм *Corynebacterium flavum* E531. Показано, что трипептид N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил]-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин обладает мутагенным свойством. Аминокислоты (S)-β-[4-аллил-3-(3'-гидроксипропил)-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин, (S)-β-[4-аллил-3-бутил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин, (S)-β-[4-пропил-3-изобутил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин и (S)-метокси-5-нитрофенилаланин обладают способностью понижать частоту индуцированных НГ мутаций, т.е. обладают антимутагенными свойствами. Обсуждаются возможные причины мутагенного/антимутагенного действия исследованных соединений.

Небелковая аминокислота – пептид – N-метил-N'-нитро-N-нитрозогуанидин – мутагенез

Հետազոտվել է մի շարք հետերոցիկլիկ տեղակալված ամինաթթուների և պեպտիդների ազդեցությունը սպոնտան և N-մեթիլ-N'-նիտրո-N-նիտրոզո-գուադիլինով (ՆԳ) ինդուկցված մուտագենեզի հաճախականության վրա: Որպես թեստ կուլտուրա օգտագործվել է *Corynebacterium flavum* E531-ի շտամը, որը աուքսոտրոֆ է մեթիոնինի և թրեոնինի նկատմամբ: Ցույց է տրվել, որ N-ֆորմիլ-մեթիոնիլ-գլիցիլ-(S)-β-[4-ֆենիլ-3-պրոպիլ]-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանինը օժտված է մու-տագեն հատկությամբ: Իսկ (S)-β-[4-ալիլ-3-(3'-հիդրօքսիպրօպիլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանինը, (S)-β-[4-ալիլ-3-բուտիլ-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանինը, (S)-β-[4-պրօպիլ-3-իզօբուտիլ-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանինը և (S)-մեթօքսի-5-նիտրօֆենիլալանինը ՆԳ-ի միջոցով ինդուկցված մուտագենեզի հաճախականությունը իջեցնում են՝ պայմաններն ունեն հակամուտագեն հատկություններ: Քննարկվում են հետազոտված միացությունների մուտագեն/հակամուտագեն ազդեցության հնարավոր պատճառները:

Ոչ սպիտակուցային ամինաթթու – պեպտիդ – N-մեթիլ-N'-նիտրո-N-նիտրոզո-գուադիլին – մուտագենեզ

The influence of the number of heterocycle substituted nonprotein amino acids and peptides on the frequency of spontaneous and N-methyl-N'-nitro-N-nitrosoguanidine (NG)-induced mutagenesis has been studied. The methionine and threonine auxotrophic *Corynebacterium flavum* E531 strain was used as test culture in mutagenesis experiments. It has been demonstrated that tripeptide N-formyl-methionyl-glycyl-(S)-β-[4-phenyl-3-propyl]-5-thioxo-1,2,4-triazol-1-yl]-α-alanine possesses mutagenic property. Amino acids (S)-β-[4-allyl-3-(3'-hydroxypropyl)-5-thioxo-1,2,4-triazol-1-yl]-α-alanine, (S)-β-[4-allyl-3-buthyl-5-thioxo-1,2,4-triazol-1-yl]-α-alanine, (S)-β-[4-propyl-3-izobuthyl-5-thioxo-1,2,4-triazol-1-yl]-α-alanine and (S)-methoxy-5-nitrophenyl have decreased the frequency of NG-induced mutagenesis. Thus these compounds have demon-

strated antimutagenic properties. The possible reasons of mutagenic/antimutagenic action of the considered compounds have been discussed.

Nonprotein amino acids – peptide – N-methyl-N'-nitro-N-nitrosoguanidine – mutagenesis

Небелковые аминокислоты и пептиды природного происхождения обладают широким спектром различных функций [10]. Синтез новых небелковых аминокислот и пептидов на их основе значительно расширяет возможности усовершенствования биологически активных препаратов. Например, введение в состав пептидов небелковых аминокислот усиливает действие пептидов, возможно, за счет повышения их устойчивости к протеолитической деградации [6,7].

Наряду с исследованиями фармакологических свойств синтетических соединений важно также проводить оценку их генетической безопасности. Схема тестирования мутагенных свойств химических соединений, опубликованная в рамках Международной программы по химической безопасности (International Program on Chemical Safety IPCS), предполагает также проведение корреляции между мутагенными и канцерогенными свойствами соединений [4]. Известно, что большинство препаратов, применяемых для лечения онкологических заболеваний, являются мутагенами. Поэтому выявление новых мутагенов и механизмов их действия является важным этапом на пути создания более эффективных противоопухолевых препаратов.

При изучении мутагенных свойств небелковых аминокислот и пептидов нами ранее было показано, что β -имидазолилаланин снижает частоту НГ-индуцированного мутагенеза у *Corynebacterium flavum*, в то время как исследованные алифатические синтетические аминокислоты не влияют на частоту спонтанного и индуцированного мутагенеза [3]. В настоящей работе исследованы мутагенные/антимутагенные свойства гетероциклически замещенных небелковых аминокислот и синтезированных на их основе пептидов. В качестве тест-культуры выбран штамм *C. flavum* E531, ауксотрофный по метионину и треонину [2].

Материал и методика. Небелковые аминокислоты: (S)- β -[4-аллил-3-(3'-гидроксипропил)-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (393), (S)- β -[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (473), (S)- β -[4-аллил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (472), (S)- β -[4-аллил-3-(2'-хлорфенил)-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (523), (S)- β -[4-аллил-3-(2'-метоксифенил)-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (524), (S)- β -[4-аллил-3-бензил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (476), (S)- β -[4-аллил-3-(фуран-2-ил)-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (478), (S)- β -[4-пропил-3-бутил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (789), (S)- β -[4-металлил-3-бутил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (787), (S)- β -[4-пропил-3-изобутил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин (790), (S)-метокси-5-нитрофенилаланин ((DOS1)). Исследовались также пептиды, состав которых приведен в табл. 1 и 2. Небелковые аминокислоты и пептиды синтезированы в НТЦ "Армбиотехнология" НАН РА [6,7].

Мутаген. В экспериментах использовался N-метил-N'-нитро-N-нитрозогуанидин (НГ) (Sigma).

Штаммы и среды: В качестве тест культуры использовался штамм *C. flavum* E531 (met-, thr-, aecr). Клетки *C. flavum* E531 выращивались в полноценной жидкой или агаризованной питательной среде LB и синтетической среде, следующего состава: NH_4Cl – 0,5%, NH_4NO_3 – 0,1%, Na_2SO_4 – 0,2%, K_2HPO_4 – 0,3%, MgSO_4 – 0,01%, тиамин-100 мкг/мл, биотин – 200 мкг/мл, глюкоза – 1%, pH 7,5. Плотные среды содержали 2% агара. Метионин, треонин и гомосерин добавляли в концентрации 20-40 мкг/мл.

N-метил-N'-нитро-N-нитрозогуанидина индуцированный мутагенез. Мутагенез проводился согласно стандартному методу [5]. НГ растворяли в 0,05 М ацетатном буфере, pH 5,6. Клетки, находящиеся в лог-фазе, осаждались, промывались и ресуспендировались в 1/10 объема 0,05 М ацетатного буфера, содержащего испытуемые соединения.

Обработка культуры *C.flavum* E531 испытуемыми соединениями проводилась при температуре 37°C, в течение 15-20 мин. Обработанная культура осаждалась центрифугированием, промывалась, ресуспендировалась в 1 мл 0,9%-ном NaCl и высевалась на чашки с агаризованной синтетической средой без метионина и/или треонина. Для определения титра клеток культура высевалась на чашки с полноценной средой. Для определения частоты спонтанных реверсий клетки высевались на синтетическую среду, не содержащую метионин и треонин, или гомосерин.

Результаты и обсуждение. Мутагенные свойства небелковых аминокислот и пептидов исследовались вышеописанным методом. В эксперименте регистрировалось число ревертантов штамма *C. flavum* E531, полученных после обработки НГ (3,5 мМ), после обработки исследуемыми соединениями и после обработки совместно с исследуемым соединением и НГ. Результаты экспериментов приведены в табл. 1 и 2. Согласно полученным данным, после обработки клеток штамма *C. flavum* E531 N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил]-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланином (0,5 мг/мл) число ревертантов по всем трем маркерам возрастает. При этом титр клеток *C.flavum* E531 падает. Следует отметить, что трипептид N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин повышает также число НГ-индуцированных реверсий. Аминокислота (S)-β-[4-фенил-3-пропил]-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин не влияет на частоту НГ-индуцированного мутагенеза. Не обладают таким свойством содержащий данную аминокислоту дипептид, трипептиды различного состава и трипептид N-формил-метионил-глицил-(S)-β-[4-аллил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин (Мет-гли-472) (табл.1). Остальные исследованные соединения на частоту мутагенеза влияния не оказывают (данные не приведены). Однако некоторые соединения подавляют рост клеток. После обработки тест культуры N-формил-метионил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланином и N-формил-метионил-глицил-(S)-β-[4-аллил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланином титр клеток падает (табл.1).

Таблица 1. Действие (S)-β-[4-фенил-3-пропил]-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланина и содержащих его пептидов на частоту образования мутаций.

Соединение* (0,5мг/мл) НГ (3,5мМ)		Титр клеток	Титр клеток после обработки соединением	Среднее число ревертантов		
				(мет ⁺)	(тре ⁺)	(гом ⁺)
Н ₂ O		1,5x10 ⁹	-	24±2	13±0	15±1
НГ		1,5x10 ⁹	1,2x10 ⁸	1950±15	1006±5	1165±2
473	-	1,09x10 ⁹	0,8x10 ⁹	33±1	20±1	23±1
	НГ	1,09x10 ⁹	2,8x10 ⁸	1984±6	1116±3	1201±4
Мет-473	-	1,1x10 ⁹	0,2x10 ⁹	29±3	19±2	25±1
	НГ	1,1x10 ⁹	3,1x10 ⁸	2209±5	1199±7	1223±2
Мет-гли-473	-	2,1x10 ⁹	3,6x10 ⁸	189±4	115±4	161±3
	НГ	2,1x10 ⁹	2,4x10 ⁸	4208±10	3187±7	3791±8
Мет-ала-473	-	1,3x10 ⁹	0,7x10 ⁹	36±3	25±1	25±1
	НГ	1,3x10 ⁹	3,9x10 ⁸	1905±3	1122±2	1193±4
Мет-гли-472	-	1,3x10 ⁹	1,1x10 ⁹	6±1	4±1	6±2
	НГ	1,3x10 ⁹	2,4x10 ⁸	2110±3	1381±3	1182±6

Мет-473-N-формил-метионил-(S)-β-[4-фенил-3-пропил]-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин; Мет-гли-473-N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин; Мет-ала-473-N-формил-метионил-аланил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин; Мет-гли-472-N-формил-метионил-глицил-(S)-β-[4-аллил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин.

Таким образом, выявлено, что N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин обладает мутагенными свойствами.

Отсутствие такой способности у соответствующей небелковой аминокислоты и содержащих ее пептидов, но другого состава, отличного от состава трипептида N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланина, свидетельствует о том, что мутагенные свойства последнего обусловлены его структурными особенностями (рис.1).




Рис.1. N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланин.

У бактерий за появление мутаций ответственность несут главным образом O-6-алкил-гуанин-ДНК трансфераза и ферменты SOS системы [12]. В клетках *C. glutamicum* SOS регулон включает 48 генов, которые индуцируются в ответ на повреждение ДНК [8]. Одной из причин мутагенного действия N-формил-метионил-глицил-(S)-β-[4-фенил-3-пропил-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]-α-аланина может оказаться индукция SOS системы, например, активацией RecA белка.

Частота индуцированных НГ-ном мутаций у штамма *C. flavum* E531 составляет приблизительно 1×10^{-5} . В ответ на действие некоторых исследованных нами аминокислот эта частота понижается от 3-х до 9-ти раз (табл.2). Согласно полученным данным, наиболее сильным антимутагенным действием обладает (S)-метокси-5-нитрофенилаланин (DOS1), формула которого приведена на рис.2.




Рис.2. (S)-метокси-5-нитрофенилаланин (DOS1).

Таблица 2. Антимутагенное действие небелковых аминокислот

Соединение, (1мг/мл) НГ (3,5мМ)	Титр клеток	Титр клеток после обработки соединением	Среднее число ревертантов		
			(мет ⁺)	(тре ⁺)	(гом ⁺)
H ₂ O	2,8x10 ⁹	-	29±0	16±1	26±1
НГ	1,5x10 ⁹	4,5x10 ⁸	1289±11	1038±9	1104±12
393	-	2,0x10 ⁹	1,4x10 ⁹	34±4	23±2
	НГ	3,2x10 ⁸	1,4x10 ⁸	375±5	280±6
790	-	1,5x10 ⁹	1,3x10 ⁹	33±3	19±1
	НГ	2,2x10 ⁹	2,7x10 ⁸	498±8	370±5
788	-	3,6x10 ⁹	1,8x10 ⁹	41±2	32±3
	НГ	5,1x10 ⁸	1,4x10 ⁸	531±10	323±22
DOS 1	-	1,8x10 ⁸	1,3x10 ⁸	35±0	23±1
	НГ	1,8x10 ⁸	1,3x10 ⁸	188±6	119±3

Известно, что НГ-индуцированный мутагенез обусловлен метилированием ДНК, что приводит к неправильному спариванию оснований во время репликации. В результате происходит замена пары ГЦ на АТ [9]. У многих микроорганизмов метильная группа удаляется из метилированного основания ферментативным путем с участием О-6-алкилгуанин-ДНК-алкилтрансферазы. Падение частоты НГ-индуцированных мутаций может быть связано с подавлением метилирования ДНК. У *C. flavum* фермент аналогичный О-6-алкилгуанин-ДНК-аликилтрансферазе пока не идентифицирован.

Таким образом, нами выявлены гетероциклически замещенные небелковые аминокислоты, способные подавлять НГ-индуцированный мутагенез, т.е. способные подавлять метилирование ДНК. Кроме того, показано, что трипептид N-формил-метионил-глицил - (S) - β -[4-фенил-3-пропил]-5-тиоксо-1,2,4-триазол-1-ил]- α -аланин обладает мутагенным свойством, которое обусловлено структурой пептида.

ЛИТЕРАТУРА

1. Дангян В.Т., Саргсян Т.О., Джамгарян С.М., Гюлумян Э.А., Оганесян Н.А., Оганесян А.М., Паносян Г.А., Дангян Ю.М., Сагиян А.С. Синтез N-формильных ди- и трипептидов с использованием гетероциклически замещенных небелковых аминокислот и изучение их влияния на активность сериновых протеаз. Химический журнал Армении. 65, 4, 491-499, 2012.
2. Жданова Н.И., Гусятинер М.М. Методы селекции и свойства штаммов микроорганизмов-продуцентов аминокислот. М.,ВНИИ СЭНТИ, 6, 1985.
3. Читчян М.Б., Мелкумян М.А., Аветисян Н.С., Оганезова Г.Г., Оганесян А.М., Амбарцумян А.А., Оганесян Н.А. Действие небелковых аминокислот и пептидов на их основе на метаболизм микроорганизмов. Биолог. журн. Армении. 59, 3-4, 248-253, 2007.
4. Eastmond D.A., Hartwig A., Anderson D., Anwar W.A., Cimino M.C., Dobrev I., Douglas G.R., Nohmi T., Phillips D.H., Viscers C. Mutagenicity testing for chemical risk assessment: update of the WHO/IPCS Harmonized Scheme. Mutagenesis. 24, 4, 341-349, 2009.
5. Foster P. In Vivo Mutagenesis. Methods Enzymol. 204, 114-125, 1991.
6. Hsu, J.T.A., Wang, H-Ch, Chen, G-Wu, Shih, Sh-Ru. Antiviral drug discovery targeting to viral proteases. Curr. Pharm. Des., 12, 1301-1314, 2006.
7. Minervini F., Algaron F., Rizzello C. G., Fox P. F., Monnet V., Gobbetti M. Angiotensin I-converting-enzyme-inhibitory and antibacterial peptides from *Lactobacillus helveticus* PR4 proteinase-hydrolyzed caseins of milk from six species. Appl.Environ.Microbiol. 69, 9, 5297-5305, 2003.
8. Nishimura T., Teramoto H., Inui M., Yukawa H. Gene expression profiling of *Corynebacterium glutamicum* during anaerobic nitrate respiration: induction of the SOS response for cell survival. J. Bacteriol. 193, 6, 1327-1333, 2011.
9. Pegg A.E., Byers T.L. Repair of DNA containing O⁶-alkylguanine. FASEB Journal, 6, 3, 2302-2310, 1992.
10. Ryan J.Th., Ross R.P., Bolton D., Fitzgerald G.F., Stanton C. Bioactive peptides from muscle sources: meat and fish. Nutrients 3, 765-791, 2011.
11. Saghyan A.S., Simonyan H.M., Stepanyan L.A. Ghazaryan S.G., Geolchanyan A.V., Manasyan L., Ghochikyan V.T., Ghochikyan T.V., Hovhannisyan N.A., Gevorgyan A., Iaroshenko V.O., Langer P. Asymmetric synthesis of new β -heterocyclic (S)- α -amino-propionic acids. Tetrahedron: Asymmetry. 23, 11-12, 891-897. 2012.
12. Walker G.C. Mutagenesis and inducible responses to deoxyribonucleic acid damage in *Escherichia coli*. Microbiol.rev. 48, 1, 1984.

Поступила 12.09.2013



Биолог. журн. Армении, 1 (66), 2014

СКРИНИНГ ГЕНОТОКСИЧЕСКИХ ЭФФЕКТОВ ВОД РЕК БАССЕЙНА ОЗ. СЕВАН С ПОМОЩЬЮ РАСТИТЕЛЬНОЙ ТЕСТ-СИСТЕМЫ ТРАДЕСКАНЦИИ

Э.А. АГАДЖАНЫАН¹, Р.Э. АВАЛЯН¹, А.Л. АТОЯНЦ¹,
А.Л. ГЕВОРКЯН¹, С.Г. МИНАСЯН², А.Э. СИМОНЯН¹,
Р.М. АРУТЮНЯН¹

¹ЕГУ Биологический факультет кафедра генетики и цитологии,
rouben_a@hotmail.com

²Центр мониторинга воздействия на окружающую среду,
Министерство охраны природы РА
seyran_minasyan@yahoo.com

Изучена генотоксичность водных проб оз. Севан вблизи п-ва Севан, с.Шоржа и впадающих в него рек Гаварагет и Дзкнагет с применением теста Трад-ВТН (волоски тычиночных нитей) традесканции (клон 02). Установлено достоверное повышение уровня частоты рецессивных мутационных событий (РМС) в водных пробах рек Гаварагет и Дзкнагет по сравнению с контролем и другими пробами. Выявлена высокая положительная корреляция между частотой РМС и концентрацией некоторых химических элементов в изученных водных пробах (Si, P, Al, Mn, Fe).

Полученные результаты показывают, что тест-система традесканции (клон 02) может быть использована для экотестирования загрязнения природных водоемов Армении.

Традесканция (клон 02) – генотоксичность – рецессивные мутационные события (РМС) – загрязнение воды

Կատարվել է Սևանա լճի ջրերի՝ թերակղզու և Շորժա գյուղից հարավ ընկած տարածքից, ինչպես նաև լիճ թափվող Գավառագետ և Ձկնագետ գետերից վերցված նմուշների գենաթունաբանական ուսումնասիրություն բուսական թեստ-օբյեկտ՝ տրադեսկանցիայի (02 կլոն) կիրառմամբ: Դիտվել է տրադեսկանցիայի անջատվելի մագիկների ռեցեսիվ մուտացիոն դեպքերի (ՌՄԴ) հաճախականության հավաստի բարձրացում Գավառագետ, Ձկնագետ գետերի ջրերի նմուշներով մշակված բույսերի մոտ համեմատած ստուգիչի և մյուս նմուշների հետ: Բացահայտվել է բարձր դրական կորելյացիա ՌՄԴ մակարդակի և որոշ քիմիական էլեմենտների (Si, P, Al, Mn, Fe) խտությունների միջև:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ տրադեսկանցիայի (02 կլոն) թեստ-համակարգը կարող է կիրառվել բնական ջրային ռեսուրսների աղտոտվածության էկոթեստավորման համար:

Տրադեսկանցիա (02 կլոն) – գենաթունաբանություն – ռեցեսիվ մուտացիոն դեպքեր (ՌՄԴ) – ջրի աղտոտում

The genotoxicity of water pollution in the Lake Sevan near Sevan peninsula and Shorja village and Gavaraget and Dzknaget rivers of its basin was investigated, with the application of Trad-SH (stamen hairs) test of Tradescantia (clone 02) was investigated.

A significant increase in the level of recessive mutation events frequency in stamen hairs treated by the water samples from Gavaraget and Dzknaget rivers as compared with the control and other studied samples was disclosed.

The high positive correlation between the RME frequency and the concentration of some chemical elements in the studied water samples (Si, P, Mn, Al, Fe) was revealed.

The obtained results show, that test of *Tradescantia* (clone 02) can be applied for ecotesting of natural water bodies' pollution.

Tradescantia (clon 02) – recessive mutation events (RME) – genotoxicity – water pollution

Для изучения генетических эффектов последствий комплексного действия загрязнителей на живые организмы в настоящее время актуальным является активизация экогенетических исследований как важной составляющей части экотоксикологии [2]. Особую актуальность в данных исследованиях для Армении приобретает изучение качества природных водных ресурсов, в том числе рек, впадающих в оз. Севан.

Оз. Севан представляет собой основной источник пресной воды в Армении. В нем не только сосредоточено 80% водных ресурсов страны, но оно также играет важнейшую роль с точки зрения регулирования водного баланса и хозяйственного развития всей страны.

Загрязнение русла впадающих в Севан рек (26) промышленными отбросами, бытовым мусором и отходами (ежегодно более 10 тонн токсичных веществ сбрасывается в озеро) становится важной причиной, приводящей к разрушению экосистемы бассейна оз. Севан [1].

В связи с этим возможность определения с помощью растительных тест-систем степени загрязненности природной среды экотоксикантами – это решение части проблемы контроля качества окружающей среды и сохранения биоразнообразия [3].

Целью настоящей работы явилось изучение уровня генотоксичности водных проб рек Гаварагет, Дзкнагет и оз.Севан (территории полуострова и с. Шоржа), различающихся различной степенью загрязненности химическими соединениями, с применением модельного тест-объекта традесканции (клон 02), являющегося высоко чувствительным биоиндикатором генотоксичности воздуха, воды и почвы.

Материал и методика. Пробы воды брали в устьях исследуемых рек и бассейна оз.Севан в весенний период.

Обработка растений традесканции водными пробами проводилась двумя методами:

- 1- обработка соцветий (бутонов) погружением их в исследуемые водные пробы,
- 2- обработка черенков традесканции с образовавшимися цветочными бутонами.

При проведении 1-й серии опытов соцветия (бутоны) помещали в водные пробы в течение 18 ч (12/6 – дневной/ночной цикл в часах). Опыт проводили в условиях теплицы ЕГУ. Во второй серии опытов черенки с цветочными бутонами помещали в стеклянные стаканы с пробами на 24 ч (18/6 – цикл при комнатной температуре). Опыт проводили в лабораторных условиях. В качестве контроля использовали дистиллированную воду.

Для применения теста Трад-ВТН соцветия сначала оставляли на 7-дневный восстановительный период, а затем проводили ежедневный учет рецессивных мутационных событий (РМС) и бесцветных мутационных событий (БМС) по общепринятой методике [3,5]. Для каждого варианта было проанализировано 18-22 тыс. волосков. В качестве основного индикаторного тест-критерия учитывалась частота появления точковых розовых рецессивных мутаций РМС в волосках тычиночных нитей традесканции (тест Трад-ВТН). Рассматривалось также появление БМС и различного рода морфологических изменений волосков – невыживших (НВ) и разветвленных (РВ). В исследуемых водных пробах определялась концентрация присутствующих в них химических веществ и тяжелых металлов. Данные за 2013 год были любезно предоставлены Центром мониторинга воздействия на окружающую среду.

Полученные результаты обрабатывали статистически с применением программы Statgraphics Plus 2.1.

Проводили корреляционный анализ между частотой мутационных изменений в ВТН и химическим составом исследуемых водных проб.

Результаты и обсуждение. На основании проведенного биотеста Трад-ВТН выявлено, что во всех опытных вариантах наблюдалось достоверное повышение частоты всех РМС и БМС, а также морфологических нарушений в ВТН по сравнению с контролем (табл. 1).

Таблица. 1. Анализ генотоксичности водных проб рек бассейна оз.Севан

Варианты	Соматические мутации		Морфологические изменения	
	(РМС/1000)± m	(БМС/1000)± m	(НВ/1000)± m	(РВ/1000)± m
оз. Севан, полуостров	1,6± 0,27***	13,87±0,60 **	1,3 ± 0,24***	0,2± 0,10
с. Шоржа, берег	1,6± 0,30 ***	18,9± 0,90 ***	1,5 ± 0,28***	0,1± 0,10
р. Дзкнагет	1,9± 0,30***	16,8± 0,86 ***	2,1 ± 0,30***	0,7± 0,20
р.Гаварагет	2,3± 0,35 ***	16,5± 0,90 ***	1,1 ±0,24***	0,7± 0,02
контроль	0,25±0,11	12,7± 0,70	0,4 ± 0,14	–

*- p<0.05, ** - p<0.01, *** - p<0.001

У всех водных проб уровень РМС превысил контроль в 6-9 раз соответственно. Наибольшая частота отмечалась в пробах из рек Дзкнагет и Гаварагет, где значение РМС составил соответственно 1,9±0,3 и 2,3 ±0,35 в сравнении с контролем – 0,25 ± 0,11. Уровень БМС во всех вариантах незначительно превышал контрольный (в 1,2-1,5 раза), особенно максимально этот эффект проявился в пробах, взятых из озера вблизи с. Шоржа.

Среди наблюдаемых морфологических нарушений в ВТН увеличение частоты встречаемости невыживших и разветвленных волосков отмечалось, в отличие от контроля, во всех опытных пробах и превысило уровень контроля в 3-5 раз. Наибольшая частота встречаемости изменений типа разветвленных волосков также наблюдалась в пробах рек Дзкнагет и Гаварагет.

Данные второй серии опытов показали, что во всех вариантах наблюдалось равнозначное повышение частоты РМС по сравнению с контролем – 5,2-5,8 раз соответственно в зависимости от водной пробы. Что касается уровня соматических мутаций типа БМС, то он был выше контроля в 1,2-1,8 раз во всех исследуемых пробах (табл. 2). Подобный эффект наблюдался также при рассмотрении морфологических нарушений типа НВ, где частота этих изменений превышала контрольный в 2,5-4 раза соответственно.

Таблица. 2. Анализ генотоксичности водных проб рек бассейна оз.Севан (черенковым методом)

Варианты	Соматические мутации		Морфологические изменения	
	(РМС/1000)± m	(БМС/1000)± m	(НВ/1000)± m	(РВ/1000)± m
оз.Севан	0,80±0,33**	15,0±1,4***	2,0±0,50***	–
с. Шоржа, берег	0,70±0,30*	14,0±1,4***	1,4±0,40**	–
р. Дзкнагет	0,82±0,34*	18,9±1,5***	2,3±0,56***	–
р. Гаварагет	0,74±0,30**	13,4±1,4***	2,4±0,54***	–
контроль	0,14±0,14	10,5±1,2	0,6±0,30	–

* - p<0.05, ** - p<0.01, *** - p<0.001

На основании проведенного нами исследования с помощью биотеста Трад-ВТН показано, что водные пробы рек Гаварагет и Дзкнагет по сравнению с контролем отличаются выраженной генотоксичностью как по уровню мутационных событий, так и морфологических нарушений в ВТН.

При выявлении уровня генотоксичности водных проб рек и территории оз.Севан полученные данные с применением двух методических подходов (обычного и черенового) в целом показали однозначную реакцию традесканции как тест-системы.

По данным теста Трад-ВТН, проведенного методом погружения соцветий (бутонов) в исследуемые водные пробы, была отмечена достоверная высокая положительная корреляция между уровнем РМС и концентрациями в водных пробах NO⁻-ионов и элементов – Si ($r=0,99$), Al ($r=0,98$), P ($r=0,98$), Fe ($r=0,96$), Mn ($r=0,95$), а также частотой РВ и концентрациями Fe ($r=0,95$), Mn ($r=0,96$), и Cu ($r=0,98$) (табл. 3).

Таблица 3. Уровни корреляции между мутационными изменениями в ВТН и химическим составом исследуемых водных проб.

Типы мутаций и изменений	Коэффициент корреляции (r)							
	Нитрат ионы мг/л	Si	Al	P	Fe	Mn	Cu	V
Соматические мутации (РМС/1000)±m	0,95**	0,99***	0,98**	0,98**	0,96**	0,95**	0,86	0,84
Соматические мутации (БМС/1000)± m	-0,0008	0,03	-0,06	0,22	0,07	0,05	0,13	-0,01
Морфологические изменения (РВ/1000)±m	0,67	0,88	-0,14	0,82	0,95**	0,96**	0,98**	0,47
Морфологические изменения НВ/1000)±m	-0,51	-0,19	-0,14	-0,18	0,03	0,05	0,27	-0,7

* - $p<0,05$, ** - $p<0,01$, *** - $p<0,001$

В то же время, по результатам данного теста, проведенного череновым методом, достоверной положительной корреляции между мутационными изменениями в ВТН и химическим составом исследуемых водных проб не было выявлено (табл. 4).

Таблица 4. Уровни корреляции между мутационными изменениями в ВТН (череновым методом) и химическим составом исследуемых водных проб

Типы мутаций и изменений	Коэффициент корреляции (r)							
	Нитрат ионы мг/л	Si	Al	P	Fe	Mn	Cu	V
Соматические мутации (РМС/1000)±m	-0,21	0,01	0,13	-0,15	0,14	0,17	0,26	-0,37
Соматические мутации (БМС/1000)± m	-0,4	-0,06	0,01	0,13	0,14	0,18	0,37	-0,61
Морфологические изменения (НВ/1000)± m	0,63	0,78	0,85	0,65	0,81	0,83	0,79	0,47
Морфологические изменения (РВ/1000)±m	–	–	–	–	–	–	–	–

* - $p<0,05$, ** - $p<0,01$, *** - $p<0,001$

Нами была проведена сравнительная оценка уровней повреждений ДНК в эритроцитах карасей, обитающих в тех же участках оз. Севан, методом ДНК-комет [4]. Выявлено достоверное повышение уровня повреждений ДНК у рыб из устьев рек Гаварагет и Дзкнагет по сравнению с рыбами из оз. Севан. Показано, что данный эффект может быть связан с повышенным содержанием некоторых элементов (Cu, Fe, Mn) в изучаемых пробах.

Таким образом, нашими исследованиями подтверждается высокая информативность применения растительной тест-системы – традесканции (клон 02) при экотестировании водных проб для оценки загрязненности природных водоемов Армении (бассейн оз. Севан).

ЛИТЕРАТУРА

1. *Акопян К.А.* Антропогенная нагрузка на водные ресурсы и их безопасность. Матер. Междун.конф. РЭЦ Кавказ “Экологическая безопасность Кавказского региона, сентябрь, Тбилиси, с.126-128, 2004.
2. *Безель В.С.* Популяционная экотоксикология. М., Наука, 80с., 1994.
3. *Водяницкий Ю.Н.* Экотоксикологическая оценка опасности тяжелых металлов и металлоидов в почве. Агрохимия, 2, с.75-84, 2012.
4. *Оганесян Г.Г., Симонян А.Э., Габриелян Б.К., Минасян С.Г., Арутюнян Р.М.* Оценка повреждений ДНК в эритроцитах рыб из разных водоемов Армении методом ДНК-комет. Биолог.журн.Армении, 64, 4, с.64-70, 2012.
5. *Ma T.H., Cabrera G.L., Cebulski-Wasilewska A., Chen R., Loarea F., Vandenberg A.L., Salomone M.F.* Tradescantia stamen hair mutation bioassay. Mutat.Res., 910, 2, p.211-220, 1994.

Поступила 27.11.2013



Биолог. журн. Армении, 1 (66), 2014

ПРОЯВЛЕНИЕ ПОЛОВЫХ РАЗЛИЧИЙ ПРИ ИССЛЕДОВАНИИ СПОНТАННОГО ПОВЕДЕНИЯ КРЫС В УСЛОВИЯХ НОВИЗНЫ

Н.Э. АКОПЯН

Научный центр зоологии и гидроэкологии НАН РА
naira_hakobyan@mail.ru

Исследовались половые различия в поведении беспородных крыс с ориентацией на индивидуальную изменчивость поведения животных в моделях “темно-светлая” камера и открытое поле. В условиях “темно-светлой” камеры выявлены различия между полами по показателям двигательной активности, тревожности, пространственно-моторной асимметрии перемещения. Показано, что различия между разнополыми группами крыс не являются достоверными в условиях открытого поля.

Крысы – половые различия – “темно-светлая” камера – открытое поле

Ուսումնասիրվել են սեռային տարբերությունները ոչ ցեղական առնետների վարքագծում կենդանիների վարքագծային անհատական փոփոխականության կողմնորոշմամբ «մութ-լուսավոր» խցիկի և բաց դաշտի մոդելներում: «Մութ-լուսավոր» խցիկի պայմաններում հայտնաբերվել են շարժողական ակտիվության, տագնապի զգացողության, տեղաշարժման տարածական-շարժողական անհամաչափության ցուցանիշների տարբերություններ սեռերի միջև: Կենդանիների տեսակավորումը կատարվել է ըստ վարքագծային չափանիշների «մութ-լուսավոր» խցիկում: Պարզվել է, որ տարասեռ խմբերի միջև տարբերությունները «բաց դաշտի» պայմաններում հավաստի չեն:

Առնետներ – սեռերի տարբերություններ – “մութ-լուսավոր” խցիկ – բաց դաշտ

The sexual differences in behavior of not purebred rats with orientation to individual variability of animal's behavior in the “dark-light” box models and open field were studied. In the conditions of the “dark-light” box the differences between sexes in terms of motor activity, anxiety, spatial-motor asymmetry of movement are revealed. It is shown that differences among various sex groups of rats aren't reliable in the conditions of an open field.

Rats – sexual differences – “dark-light” box – open field

В последние годы в нейробиологии утвердилось мнение, что устойчивость организма к действию стресс-факторов различной природы в значительной мере определяется индивидуально – типологическими особенностями нервной системы, которые проявляются в поведении организма в тех или иных условиях среды [3, 4].

Объединение особей в разные типы предполагает оценку отдельных параметров индивидуального поведения, чаще всего связанных с проявлениями конфликта двух базовых потребностей организма – самосохранения и саморазвития [5].

При этом есть основание считать важным изучение полового диморфизма при тестировании индивидуальных различий поведения у животных [2].

В настоящей работе представлены результаты сравнительных исследований поведенческих параметров у самок и самцов крыс.

Основной методический подход, используемый нами при этих исследованиях, базируется на моделях, ориентированных на анализ спонтанного поведения при помещении животных в незнакомую для них среду.

Материал и методика. В исследованиях использовалась система компьютерного видеотрекинга на основе “темно-светлой” камеры, разработанная в нашей лаборатории [6, 10]. Установка представляет собой круглую арену – светлый отсек диаметром 80 см, высотой стенок 45 см и малый темный отсек, снабженный плотно подогнанной открывающейся наверх крышкой. Отсеки сообщаются между собой через отверстие в перегородке, которое имеет выдвижную вертикальную дверцу. Над ареной установлена аналоговая видеокамера, фиксирующая поведение животного. Аналоговый сигнал, полученный от камеры с помощью TV-тюнера, преобразуется в цифровой и сохраняется в виде видеофайла на жёстком диске.

Эксперименты проводились на 32 беспородных белых крысах в возрасте 5-6 месяцев, из которых 16 самцов и 16 самок. Во время эксперимента животные содержались в группах по 4 особи в клетке размером 50x30x15 см, при соблюдении искусственного 12-часового светового режима. Воду и корм животные получали без ограничений. Тестирование проводилось в дневное время в промежутке между 12-15 ч.

В наших экспериментах были использованы две схемы тестирования.

1. Тестирование поведения животного в ситуации, когда у него есть выбор исследовать новое или нет.

2. Тестирование в условиях “навязанной” новизны.

На 16-й день тестирования после адаптации использовалась первая схема. Животные помещались в малый отсек камеры, после чего она закрывалась сверху крышкой. Дверца в перегородке также плотно закрывалась. В полной темноте животное адаптируется к темному отсеку. Привыкание длится 300 с, после чего открывается дверца в перегородке. Последующее тестирование длится также 300 с.

В ходе эксперимента регистрировались следующие поведенческие показатели: число и длительность (с) выглядываний из стартового отсека; латентный период первого выглядывания (с); латентный период первого выхода в открытое поле из стартового отсека (с); количество выходов; суммарное время нахождения в светлом отсеке (с); суммарное время нахождения в центре поля и на периферии (центр поля рассматривается как круг радиусом, равным половине радиуса всего открытого поля) (с); пройденный путь за фиксированное время (м); скорость движения (м/с); длительность перемещений левым боком (с); длительность перемещений правым боком (с); число и длительность вертикальных стоек (с); задние лапы животного остаются на полу арены, а передние – на весу (rearing); число и длительность вертикальных стоек (с), когда задние лапы животного остаются на полу арены, а передние упираются в стенку поля (climbing). Фиксируются некоторые формы стереотипного поведения: число и длительность (с) актов умыывания (grooming), неподвижного состояния или замирания (freezing), число дефекаций и уринаций.

Вторая схема тестирования проводилась через 3 дня. При тестировании животные помещались в центр арены при закрытой дверце в перегородке. В течение 300 с видеокамерой регистрировался комплекс поведенческих показателей, соответствующих данному виду исследований.

Протоколирование поведения с помощью видеокамеры даёт возможность провести анализ поведения по специальной компьютерной программе, разработанной в нашей лаборатории. Интерфейс программы позволяет выбрать и открыть нужный видеофайл, после чего происходит установка параметров анализа различных форм поведения с соответствующими размерными единицами.

Полученный экспериментальный материал поведенческих данных обрабатывали с использованием пакета прикладных программ STATISTICA. При статистическом анализе результатов значения параметров поведения использовали две группы (самцы и самки), где показатели самок нормировали к показателям самцов, что представлено в виде соответствующих графиков. Достоверность различий оценивали с помощью t-критерия Стьюдента.

В графиках представлены нормированные данные в виде среднего с учётом стандартной ошибки. Оценивалась вариабельность поведенческих показателей в данных группах, а также коэффициент асимметрии перемещения (КАП). Коэффициент асимметрии перемещения вычисляли по формуле $КАП = ДПБ - ДЛБ / ДПБ + ДЛБ$, где ДПБ – длительность пройденного пути правым боком, ДЛБ – левым.

Различия между группами считали достоверными при вероятности ошибки $p < 0.05$.

Результаты и обсуждение. Проведенные эксперименты выявили половые различия в распределении поведенческих показателей крыс при тестировании в “тёмно-светлой камере” (рис.1).




Рис. 1. Основные поведенческие показатели в тесте “тёмно-светлая камера”

А – Прямой линией обозначены показатели самцов, ломаной линией – самок, выраженные относительно к единице.

Б – Коэффициент вариабельности показателей.

По оси абсцисс: 1. длительность вертикальных стоек с упором, 2. число вертикальных стоек с упором, 3. длительность вертикальных стоек в воздухе, 4. число вертикальных стоек в воздухе, 5. длительность пройденного пути левым боком, 6. длительность пройденного пути правым боком, 7. длительность груминга, 8. число груминга, 9. длительность выглядываний, 10. число выглядываний, 11. латентный период первого выглядывания, 12. длительность выхода в открытое поле, 13. число выходов, 14. латентный период первого выхода, 15. длительность возврата в тёмную камеру, 16. длительность нахождения в открытом поле, 17. длительность нахождения в центре поля, 18. числовыходов в центр поля, 19. латентный период выхода в центр, 20. пройденный путь, 21. скорость движения.

Обращают на себя внимание различия в показателях, характеризующих сравнительно высокую активность и меньшую тревожность крыс самок (рис. 1-А). В группе самцов достоверно снижались следующие показатели: число вертикальных стоек с упором ($p < 0.05$); число вертикальных стоек в воздухе ($p < 0.05$); длительность нахождения в центре поля ($p < 0.01$); пройденный путь ($p < 0.01$); скорость движения ($p < 0.01$).

Сходные эффекты наблюдаются в условиях норковой камеры у крыс-самок [7] и приподнятом крестообразном лабиринте у самок мышей [9].

При анализе пространственно – моторной асимметрии в “тёмно-светлой камере” было установлено, что у самцов КАП в 4,5 раза выше, по сравнению с самками ($p < 0.05$).

Кроме того, выявлено левостороннее доминирование перемещений самок по сравнению с самцами, у которых доминировало правостороннее перемещение ($p < 0.05$).

У самок в “тёмно- светлой камере“, в сравнении с самцами, отмечается сравнительно высокий уровень вариабельности регистрируемых показателей (рис.1-Б). Вариабельность регистрируемых показателей отражает выраженность индивидуальной изменчивости в пределах каждой исследованной группы (самки, самцы).

Полученные данные в определенной мере согласуются с эволюционной концепцией пола [1]. Как известно, эта концепция трактует дифференциацию полов как специализацию по альтернативным аспектам эволюции: сохранение (генетический аспект—реализуется преимущественно женским полом) и изменение (экологический—реализуется мужским). Концепция вытекает из более общей, кибернетической идеи, что любая адаптивная система, эволюционирующая в изменчивой среде, должна включать две сопряженные подсистемы, специализированные по консервативным и оперативным тенденциям эволюции, что повы-

шает устойчивость системы в целом. Согласно обсуждаемой концепции, в основе латерализации полушарий лежит тот же кибернетический принцип дифференциации на сопряженные подсистемы, специализированные по консервативным и оперативным тенденциям эволюции. Поскольку асимметрия полушарий мозга является эволюционно-молодым признаком, можно предсказать наличие полового диморфизма, т.е. мозг у мужских особей должен отличаться большей асимметрией. Более того, в рамках обсуждаемой теории допускается, что правое полушарие мозга специализируется на “консервативных” задачах (центры жизнеобеспечения, управляющие внутренними органами и системами организма), левое полушарие – на “оперативных” задачах, обеспечивающих в основном связи со средой. Последнее обстоятельство объясняет доминирование у самок левосторонних, а у самцов правосторонних перемещений.

Полученные результаты (рис. 1) подтверждают общую закономерность концепции [1]: внутрипопуляционные различия в группе самок больше, чем у самцов, т.е. при одинаковом генетическом фоне спектр изменений в поведении, вызванных различиями в индивидуальном опыте, значительно шире у самок, чем у самцов. Высокая средовая изменчивость самок, очевидно, отражает высокую индивидуальную пластичность женских особей.




Рис. 2. Основные поведенческие показатели в тесте “открытое поле”

А – Прямой линией обозначены показатели самцов, ломаной – самок, выраженные относительно к единице.

Б – Коэффициент вариабельности показателей.

По оси абсцисс: 1. длительность вертикальных стоек с упором, 2. число вертикальных стоек с упором, 3. длительность вертикальных стоек в воздухе, 4. число вертикальных стоек в воздухе, 5. длительность пройденного пути левым боком, 6. длительность пройденного пути правым боком, 7. длительность груминга, 8. число груминга, 9. длительность нахождения в центре поля, 10. число выходов в центр поля, 11. пройденный путь, 12. скорость движения.

Однако в условиях “навязанной” новизны (тестирование в открытом поле) различия между разнополыми группами крыс не являются столь ощутимыми (рис. 2), что во многом обусловлено разрешающими возможностями данного теста. Это обстоятельство подтверждается как литературными данными [8], так и нашими предыдущими исследованиями [5].

1. Таким образом, исследования внутривидовых различий у крыс по признаку пола при тестировании в „тёмно – светлой камере“ выявили более высокую активность и меньшую тревожность крыс самок в сравнении с самцами в ситуации новизны,
2. различия одной из форм пространственно-моторной асимметрии – предпочтение направления перемещения, а именно:
 - у самцов степень асимметрии достоверно выше, по сравнению с самками,
 - самцы предпочитают правосторонние перемещения, тогда как самки – левосторонние,
3. более высокий уровень вариабельности регистрируемых показателей у самок по сравнению с самцами.

ЛИТЕРАТУРА

1. *Геодакян В.А.* Эволюция теории пола. Природа, М., 8, с. 60-69, 1991.
2. *Калуев А.В.* Психосексофармакология тревожности на пути создания анксиолитиков избирательного ползависимого действия. Вестник биологической психиатрии. 10, с. 13-17, 2003.
3. *Мельников А.В., Куликов М.А., Новикова М.Р., Шарова Е.В.* Выбор показателей поведенческих тестов для оценки типологических особенностей поведения крыс. Журнал ВНД им. И.П. Павлова. 54, 5, с. 712-717, 2004.
4. *Саркисова К.Ю.* Связь между типами поведения, особенностями окислительного метаболизма мозга и устойчивостью к патогенным воздействиям. Докт. дисс., М., Ин-т ВНД и НФ РАН, с. 256, 1997.
5. *Саркисов Г.Т., Саркисян Р.Ш., Карапетян Л.М., Акопян Н.Э., Саркисян Ж.С., Мадатова И.Р.* Индивидуальные особенности поведения мышей в тесте „черно-белая камера“. Биолог. журн. Армении. 62, 1, с. 23-29, 2010.
6. *Саркисов Г.Т., Саркисян Р.Ш., Манукян А.М., Карапетян Л.М., Акопян Н.Э.* Исследования индивидуальных различий у животных с помощью видеотрекинга поведения. Тр. межд. конф. “Физиологические механизмы регуляции деятельности организма” (10-13.10.2012, Ереван). Ереван, Изд-во “Гитутюн” НАН РА, с. 280-283, 2012.
7. *De Cabo de la Vega C., Pujol A., Paz Viveros M.* Neonatally administered naltrexone affects several behavioural responses in adult rats of both genders. Pharmacol. Biochem. Behav. 50, 2, p. 277-286, 1995.
8. *Rainer K.W. Schwarting Christiane M. Thiel, Christian P. Muller, Joseph P. Huston.* Relationship between anxiety and serotonin in the ventral striatum. Neuroreport. London. 9, 6, April, p. 1025-1029, 1998.
9. *Rodgers R.J., Cole J.C.* Influence of social isolation, gender, strain, and prior novelty on plus-maze behaviour in mice. Physiol. behav. 54, 4, p. 729-736, 1993.
10. *Sarkisov G.T., Sarkisyan R.Sh., Manukyan A.M., Karapetyan L.M., Hakobyan N.E.* Video Tracking Of Behaviour As A Tool To Evaluate Individual Differences In Animals , IX International Congress “Neuroscience for Medicine and Psychology” Sudak, Crimea, Ukraine, p.279, June 3-13, 2013.

Поступила 01.06.2013



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(66), 2014

ՈՐՈՇ ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՏԱՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԶՈՒՐ - ՀՈՂ - ԲՈՒՅՍ ԷԿՈԼՈԳԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի ՏԵԽՆԱԾԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

Լ.Մ. ՂԱԼԱԶՅԱՆ, Ա.Զ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Գ.Մ. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
hydrop@netsys.am

Ուսումնասիրվել են Հայկական ԱԷԿ-ի տեխնածին 2-15 կմ, 30 կմ շառավղով գոտիների և ՀՊԻ-ի Դիլիջանի անտառային փորձակայանի (ֆոնային գոտի) բնական ջրերում (Հրազդան և Մեծամոր գետեր, Ակնալիժ), գորշ կարբոնատային, անտառային դարչնագույն հողերում, բույսերում (կենսածառի տերևներ, հացազգի խոտաբույսեր, ծիրան, թուխ) որոշ ծանր մետաղների (ՄՄ) (Pb, Mn, Ni, Co, Mo, V, Cr, Cu) կուտակման օրինաչափությունները: Պարզվել է, որ գորշ կարբոնատային հողերում, հացազգի խոտաբույսերում և ծառապտուղներում Ni-ի, Cr-ի պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԽ)-ն: Մշակվել են էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական մթերքների ստացման գործնական առաջարկներ:

ՀԱԷԿ – ծանր մետաղներ – ջուր – հող – բույս – կուտակում

Изучались особенности накопления некоторых тяжелых металлов (Pb, Mn, Ni, Co, Mo, V, Cr, Cu) в природных водах (реки Раздан и Мецмор, оз. Акналич), бурых карбонатных, коричневых лесных почвах и растениях (листья туи, злаковые травы, абрикос, тут) техногенных зон Армянской АЭС с радиусом 2-15 км, 30 км и Дилижанской лесной опытной станции ИПГ (фоновая зона). Выяснилось, что содержание Ni, Cr превышало предельно допустимых концентраций (ПДК) в бурых карбонатных почвах, злаковых травах и плодах деревьев. Разработаны практические рекомендации для получения экологически безопасной сельскохозяйственной продукции.

ААЭС – ТМ – вода – почва – растение – накопление

Some HM (Pb, Mn, Ni, Co, Mo, V, Cr, Cu) accumulation peculiarities have been studied in natural waters (Hrazdan and Metsamor rivers, Aknalich lake), gray carbon soils, brown forest soils and plants (thuja leaves, cereal grass, apricot, mulberry) of the Armenian NPP 2-15 and 30 km anthropogenic zones, as well as IHP Dilijan Forest Experimental Station (background zone). The content of Ni, Cr in gray carbon soils, cereal grass and fruits exceeded the ACL. Practical recommendations on obtaining ecologically safe agricultural products have been developed.

ANPP – HM – water – soil – plant – accumulation

Մարդու տեխնածին անխոհեմ գործունեության հետևանքով երբեմն շրջակա միջավայրն աղտոտվում է տարբեր աղտոտիչներով (բնական և արհեստական ռադիոակտիվներ, ծանր մետաղներ (ՄՄ), նավթամթերքներ, թունաքիմիկատներ և այլն): Դրանց թվում առանձնահատուկ տեղ են զբաղում ՄՄ-ը: Հայաստանի պարագայում խնդիրն ավելի է սրվում, քանի որ այս տարածքին բնորոշ ՄՄ-ի (Mo, Cu, Pb) երկրածին բարձր բնական ֆոնին ավելանում է նաև կենսոլորտի ՄՄ-ով տեխնածին աղտոտումը: Ոռոգման ջրերի և հողերի ՄՄ-ով աղտոտումը հանգեցնում է գյուղատնտեսական մթերքներում դրանց կուտակմանը՝ պատճառ դառնալով մարդու օրգանիզմում հիվանդությունների առաջացմանը [1, 4, 7, 8, 10-14]: Արարատյան դաշտում Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) առկայության պարագաում, երբ ՀԱԷԿ-ի հետադարձ

ԾՄ-ով աղտոտված ջրերը [4], Մեծամոր գետի ջրերի հետ խառնվելուց հետո օգտագործվում են շրջակա հողերի ոռոգման համար, հրատապ է դառնում ՀԱԷԿ-ի տեխնածին ազդեցության 2-15 կմ, 30 կմ շառավիղով գոտիների և Հիդրոպոնիկական պրոբլեմների ինստիտուտի (ՀՊԻ) Դիլիջանի անտառային փորձակայանի (ԴԱՓԿ) (ֆոնային գոտի) ջուր – հող – բույս էկոհամակարգերում ԾՄ-ի տեղաշարժի և կուտակման առանձնահատկությունների ուսումնասիրումը և դրանց հիման վրա էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական մթերքների ստացման կիրառական առաջարկների մշակումը:

Լյուրթ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են Արարատյան դաշտում (ՀԱԷԿ-ից 2-15 կմ, 3 կմ շառավիղով գոտիներ, ք. Երևան, ՀՊԻ-ի շրջակա տարածք) և ԴԱՓԿ-ում (ֆոնային գոտի): 2011-2012 թթ. ընթացքում փորձանուշներ են վերցվել ոռոգիչ ջրերից, հողերի 0-10, 20-30 սմ շերտերից և հացազգի խոտաբույսերից, կենսածառի (Thuya L.) տերևներից, ծառապտուղներից (ծիրան, թուխ): ԾՄ-ը (Pb, Mn, Ni, Co, Mo, V, Cr, Cu) որոշվել են էմիսիոն քանակական սպեկտրալ եղանակով /ԺՓԸ-8 սպեկտրոգրաֆի միջոցով [9]: Ստացված տվյալները համեմատվել են սահմանա-թուլատրելի խտությունների (ՍԹԽ) հետ [2, 3, 6, 8, 11, 14]:

Արդյունքներ և քննարկում: Արարատյան դաշտը գտնվում է Հայաստանի հարավ-արևմտյան մասում, ծովի մակերևույթից մոտ 850-900 մ բարձրության վրա: Աչքի է ընկնում չոր մայրցամաքային կլիմայով՝ որտեղ տարեկան օդի միջին ջերմաստիճանը 11,0-11,8°C է, հարաբերական խոնավությունը՝ 40%, տեղումների տարեկան միջին գումարը՝ 200-300 մմ: ԴԱՓԿ-ն գտնվում է Հայաստանի հյուսիս արևելյան մասում՝ ծովի մակերևույթից 1400-1500 մ բարձրության վրա, տեղումների քանակը տարեկան կազմում է 660-750 մմ [5]: ՀԱԷԿ-ի շրջակա հողերը ոռոգվել են Ակնալձի, Մեծամոր գետի ջրերով, իսկ ՀՊԻ-ի շրջակա հողերը՝ Հրազդան գետի ջրերով: Բնական ջրերը, ըստ ԾՄ-ի պարունակության, կազմել են հետևյալ նվազող շարքը՝ Ակնալիձ>Մեծամոր> Հրազդան: Ակնալձում ԾՄ-ի պարունակությունն ավելի է, քան Մեծամոր (1,7 անգամ) և Հրազդան (1,9 անգամ) ջրերում :

Աղյուսակ 1. Ծանր մետաղների պարունակությունը ՀԱԷԿ-ի և ՀՊԻ-ի տարածքների բնական ջրերում, $n(10^{-2}$ մգ/լ

Նմուշը վերցնելու տեղը	Ջրի տեսակը	Մետաղներ							
		Mn	Cu	Ni	Co	V	Mo	Pb	Σ
ՀԱԷԿ-ի շրջակա տարածք	Ակնալիձ	2,4	1,8	1,8	1,3	10,0	0,1	0,7	18,1
	Մեծամոր գետ	1,0	1,0	2,2	-	5,6	0,04	1,1	10,9
ՀՊԻ-ի շրջակա տարածք	Հրազդան գետ	3,3	0,6	1,6	0,7	2,6	0,02	0,5	9,3

Փակագծերում տրված թվերը ցույց են տալիս ԾՄ-ի կլարկին գերազանցման չափը, ինչը վկայում է հողերի՝ նշված ԾՄ-ով տեխնածին աղտոտման մասին [11]: ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի մշակովի հողերի ԾՄ-ով աղտոտման բնութագիրն ունի հետևյալ տեսքը՝ V (19,0); Cr (11,8); Pb (4,5); Ni (4,2); ՀՊԻ-ի շրջակա տարածքի հողերինը՝ V (10,3); Cr (6,0); Ni (2,6); Cu (1,7); Pb (1,5); ԴԱՓԿ-ի հողերինը՝ V (17,1); Cr (2,4); Pb (1,6); (աղ. 2): Հողերում Ni-ի, Cr-ի պարունակությունը գերազանցել է ՍԹԽ-ն. ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի մշակովի հողերի 0-10 սմ շերտում՝ 1,2; 2,7; 20-30 սմ շերտում՝ 3,0; 6,2; ՀՊԻ-ի շրջակա տարածքի հողերի 20-30 սմ շերտում՝ 1,5; 3,5 անգամ համապատասխանաբար [3, 8]: ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի մշակովի հողերը ԾՄ-ի կուտակած քանակով գերազանցել են ՀՊԻ-ի շրջակա հողերին. 0-10 սմ շերտում՝ 1,5; 20-30 սմ շերտում՝ 1,1; ԴԱՓԿ-ի հողերին. 0-10 սմ և 20-30 սմ շերտերում՝ 1,1 անգամ: Հողերի 20-30 սմ շերտում ԾՄ-ի պարունակությունն ավելի մեծ է, քան 0-10 սմ շերտում. ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի մշակովի հողերում և ԴԱՓԿ-ի հողերում՝ 1,2; ՀՊԻ-ի շրջակա տարածքի հողերում՝ 1,6 անգամ: ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի մշակովի հողերի 0-10 սմ շերտում Mn-ի պարունակությունը՝ 1,7; Cu-ինը՝ 1,3 անգամ, ԴԱՓԿ-ի հողերի 0-10 սմ շերտում Cr-ի պարունակությունը՝ 2,8; Pb-ինը՝ 1,7 անգամ ավելի մեծ է, քան 20-30 սմ շերտում:

Աղյուսակ 2. Ծանր մետաղների պարունակությունը ՀԱԷԿ-ի, ՀՊԻ-ի և ԴԱՓԿ-ի տարածքների հողերում, մգ/կգ

Ծանր մետաղներ	Հողաշերտի խորությունը, սմ	ՀԱԷԿ-ի շրջակա տարածք	ՀՊԻ-ի շրջակա տարածք	ԴԱՓԿ-ի տարածք	Կլարկ [11]	ՍԹԽ [3,8]
Mn	0-10	560	490	780	850	-
	20-30	320	650	850		
Ni	0-10	100	87,5	18	40	80
	20-30	240	120	75		
V	0-10	200	87,5	102	10	-
	20-30	180	120	240		
Cr	0-10	240	90	120	34	90
	20-30	560	320	42		
Mo	0-10	2,4	0,5	0,9	1,5	132
	20-30	2,8	1,3	3,2		
Cu	0-10	32	32	26	20	132
	20-30	25	35	24		
Pb	0-10	42	15	21	10	65
	20-30	48	15	12		
Co	0-10	8,5	1,2	-	10	5
	20-30	20	7,5	-		
Σ ՕՄ	0-10	1184,9	803,7	1067,9	-	-
	20-30	1395,8	1268,8	1246,2	-	-

ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի մշակովի հողերի 20-30 սմ շերտում Ni-ի պարունակությունը՝ 2,4; Cr-ինը և Co-ինը՝ 2,3 անգամ, ՀՊԻ-ի շրջակա տարածքի հողերի 20-30 սմ շերտում Cr-ի պարունակությունը՝ 3,5; Mo-ինը՝ 2,6; Co-ինը՝ 6,2 անգամ, ԴԱՓԿ-ի հողերի 20-30 սմ շերտում Ni պարունակությունը՝ 4,2, V-ինը՝ 2,3; Mo-ինը՝ 3,5 անգամ ավելի մեծ է, քան 0-10 սմ շերտում: Ըստ երևույթին, հողերում ՕՄ-ի տեղաբաշխումը ըստ խորության պայմանավորված է բազմաթիվ գործոնների (հողի ջրային ռեժիմ, թթվայնություն, մեխանիկական կազմ, հողում օրգանական նյութի պարունակություն և այլն) համատեղ ազդեցությամբ [7]: ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի հացազգի խոտաբույսերը, ծառապտուղները ՕՄ-ի կուտակած քանակով (հացազգի խոտաբույսերը՝ 2,8; թուրք և ծիրանը՝ 1,2 անգամ) գերազանցել են ՀՊԻ-ի տարածքի նույն ցուցանիշներին (աղ. 3):

Աղյուսակ 3. Ծանր մետաղների պարունակությունը ՀԱԷԿ-ի, ՀՊԻ-ի և ԴԱՓԿ-ի տարածքների տարբեր բույսերում, մգ/կգ

Նմուշը վերցնելու տեղը	Նմուշի տեսակը	Մետաղներ							
		Mn	Cu	Ni	Cr	V	Mo	Pb	Σ
ՀԱԷԿ-ի շրջակա տարածք	կենսաճառի տերև	12,8	2,1	7,6	1,1	5,4	0,1	11,5	40,6
	խոտաբույս	19,5	4,2	9,7	40,0	4,8	0,8	1,5	80,5
	թուրք	18,8	5,1	6,1	3,0	1,9	0,3	0,9	36,1
	ծիրան	2,7	3,0	5,9	1,4	1,8	0,07	2,2	17,1
ՀՊԻ-ի շրջակա տարածք	կենսաճառի տերև	42,0	1,3	3,7	1,8	3,1	0,2	18,2	70,3
	խոտաբույս	11,7	6,5	1,7	1,5	4,8	0,5	2,1	28,8
	թուրք	9,5	2,8	8,1	4,4	2,2	0,1	2,1	29,2
	ծիրան	2,4	1,8	5,6	3,0	0,5	0,1	0,9	14,3
ԴԱՓԿ-ի տարածք	կենսաճառի տերև	10,2	1,3	0,7	0,5	4,2	0,1	1,9	18,9
	խոտաբույս	46,6	7,2	8,3	26,6	5,8	0,1	1,1	95,7
ՍԹԽ [2, 6, 14]	պտուղ	12	10	0,5	0,1	-	1,0	0,4	-
	խոտաբույս	-	30	3,0	0,5	-	2,0	5,0	-

Թուրք ՕՄ-ի պարունակությամբ գերազանցել է ծիրանին. ՀԱԷԿ-ի շրջակա տարածքում՝ 2,1; ՀՊԻ-ի շրջակա տարածքում՝ 2,0 անգամ: Այսինքն, ծիրանը ՕՄ-ի պարունակությամբ էկոլոգիապես ավելի անվտանգ է, քան թուրքը: ՀԱԷԿ-ի և ՀՊԻ-ի շրջակատարածքների ծառապտուղներում Ni-ը՝ 11,8-12,2 և 11,2-16,2; Cr-ը՝ 14,0-30,0 և 30,0-44,0; Pb-ը՝ 2,2-5,5 և 2,2-5,2 անգամ համապատասխանաբար գերազանցել են ՍԹԽ-ն [2, 14]:

Հացագգի խոտաբույսերում Ni-ի, Cr-ի պարունակությունը գերազանցել է ՍԹԽ-ն. ՀԱԷԿ-ի շրջակա տարածքում՝ 3,2; 80,0; ԴԱՓԿ-ում՝ 2,8; 53,2 անգամ համապատասխանաբար: ՀՊԻ-ի շրջակա տարածքի խոտաբույսերում Cr-ի պարունակությունը 3,0 անգամ գերազանցել է ՍԹԽ-ն [6]: ՀՊԻ-ի շրջակա տարածքում աճող կենսաձառի տերևները ԾՄ-ի պարունակությամբ գերազանցել են ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի (1,7 անգամ) և ԴԱՓԿ-ի (3,7 անգամ) նույնատիպ ցուցանիշներին: Դա, ըստ էության, Երևան քաղաքի օդային ավազանի ԾՄ-ով աղտոտման հետևանք է: Կարելի է ենթադրել, որ բույսերի մեջ ԾՄ-ը ներթափանցել են միաժամանակ հողերից, ոռոգիչ ջրերից և օդային ավազանից:

Այսպիսով, ՀԱԷԿ-ի, ՀՊԻ-ի և ԴԱՓԿ-ի տարածքների բույսերի մեջ ԾՄ-ի ներթափանցման ընդհանուր սկզբնաղբյուր են ծառայել ինչպես ոռոգիչ ջրերը, այնպես էլ հողերը: ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի հացագգի խոտաբույսերի, ծառապտուղների (թուփ, ծիրան) ԾՄ-ով առավել աղտոտվածությունը, ՀՊԻ-ի տարածքի նույնատիպ ցուցանիշների համեմատությամբ, ՀԱԷԿ-ի տեխնածին ազդեցության հետևանք է: ՀԱԷԿ-ի և ՀՊԻ-ի տարածքների հողերի աղտոտվածությունը Ni-ով, Cr-ով իրենց հերթին այդ տարածքների հացագգի խոտաբույսերի, ծառապտուղների (թուփ, ծիրան) Ni-ով, Cr-ով ՍԹԽ-ն գերազանցող քանակներով աղտոտման աղբյուր են հանդիսացել:

Գործնական առաջարկներ: Մշակության համար նախընտրել էկոլոգիապես նպաստավոր, այսինքն՝ չորադիմացկուն, ԾՄ քիչ կուտակող, հողի խորը շերտերը թափանցելու հատկությամբ օժտված առանցքային արմատներ ունեցող մշակաբույսեր և սորտեր: Փնջաձև արմատներ ունեցող մշակաբույսերի մշակության դեպքում կիրառել ԾՄ-ով աղտոտված հողաշերտի (0-30 սմ) ավելի խորը թաղելու ագրոտեխնիկական եղանակ, իսկ առանցքային արմատներ ունեցող մշակաբույսերի, այդ թվում՝ պտղատու ծառերի մշակության դեպքում, ընդհակառակը, հողաշերտը շուտ չտալ, այլ բավարարվել միայն փխրեցմամբ՝ կուլտիվացիայով: Էկոլոգիապես շահեկան է ոռոգիչ ջրի չափաքանակի հնարավորինս կրճատումը: Կիրառել հողաշերտերում ջրի պահպանմանը նպաստող ագրոտեխնիկական եղանակներ: Բացառել մշակաբույսերի ջրում անձրևացման եղանակով և բերքահավաքից առաջ: Նախընտրել մշակաբույսերի ջրման կաթիլային եղանակը:

Հետազոտությունն կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 11-1f262 գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ավետիսյան Մ.* Երևան քաղաքում ծանր մետաղների միգրացիայի երկրաքիմիական գնահատականը: Միջազգային գիտաժողովի նյութեր: Էկոլոգիայի և բնության պահպանության կարևորությունը կայուն զարգացման հեռանկարում, 20-21 նոյեմբեր, Երևան, էջ 24, 2008:
2. ՀՀ Առողջապահության նախարարի 2003թ. մարտի 28 № 181 հրամանը Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջները, № 2-III-4.9-01-2003 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին: Էլեկտրոնային ռեսուրս, հասանելիության ռեժիմ՝ <http://www.arlis.am/#>, ազատ, 2003:
3. ՀՀ Կառավարության 25 հունվար 2005 թվականի №92-Ն որոշում, Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին: Երևան, 2005: Էլեկտրոնային ռեսուրս, հասանելիության ռեժիմ՝ <http://www.arlis.am/#>, ազատ:
4. *Ղալալյան Լ.Մ., Քոչարյան Կ.Ա., Ավետիսյան Մ.Մ., Թադևոսյան Լ.Ս.,* Ծանր մետաղների տարաբաշխումը ՀԱԷԿ-ի շրջակա տարածքի ջուր-հող-բույս համակարգում: ՀՀ ԳԱԱ ՀՊԻ-ի, Հաղորդումներ, №31, էջ 106-111, 2007:
5. *Վալեսյան Լ.Վ. /խմբ. Հայաստանի ազգային ատլաս, Ա հատոր, Ե., 232 էջ, 2007:*
6. Временный максимально допустимый уровень химических элементов в кормах сельскохозяйственных животных. ГОСТ №124-41281-87, 15.07.1987.
7. *Едоян Р.А., Байрамян Л.Е., Шекоян О.О.* Влияние органических и минеральных удобрений на химический состав клубней картофеля. Мат.-алы XIX Международного научного симпозиума (12-19 09), г. Алушта, Симферополь, Украина, с. 715-719, 2010.
8. *Иванов В. В.* Экологическая геохимия элементов: Справочник в 6 кн./ Под ред. Э.К. Буренкова. М.: Недра. -н 1: s- элементы. 304с, 1994.
9. *Кустанович И.М.* Спектральный анализ. М., 390 с, 1972.

10. *Нерсисян Г.С., Оганесян А.А.* О загрязнении токсикантами овощных культур, выращиваемых в городских условиях. Известия Государственного аграрного ун-та, №3, Ереван, с. 44-48, 2009.
11. *Перельман А.И., Касымов Н.С.*, Геохимия ландшафта. М.: Астрей, 2000, с. 660-665. Предельно допустимые концентрации химических элементов в почве (ПДК). Изд-во Минздрава СССР, 42 с, 1981.
12. *Сагателян А.К.* Особенности распределения ТМ на территории Армении. Ереван, 157 с, 2004.
13. *Унанян С.А., Мкртчян А.Л.* Загрязнение овощных культур тяжелыми металлами в окрестностях автомагистрали Ереван-Ерасх. Известия Государственного аграрного университета Армении. №1, с. 66-70, 2012.
14. *Dyeck T.A. et al.*, Heavy metal immision and genetic constitution of plant populations in the vicinity of two metalemission sources. Angrew. Bot. 58, 1, p. 47-53, 1984.

Ստացվել է 30.04.2013



Փորձարարական և տեսական հոդվածներ • Экспериментальные и теоретические статьи •
• Experimental and theoretical articles •

Հայաստանի կենսաբ. հանդես, 1(66), 2014

ԼՈՐԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ ԼՃԵՐԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՑ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Ա.Ա. ԹՈՒՄԱՆՅԱՆ

*Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ
arusyaktumanyan@mail.ru*

Բերվում են տվյալներ Լոռու սարահարթի 11 լճերում աճող ջրաճահճային բույսերի 31 հազվագյուտ տեսակների տարածվածության և պոպուլյացիաների վիճակի վերաբերյալ: Դրանցից 8 տեսակներ գրանցված են ՀՀ Բույսերի Կարմիր գրքում, իսկ 11-ը Հայաստանում ունեն սահմանափակ արեալ և հանդիպում են միայն այս լճերում:

Լոռու սարահարթ – ռելիկտային լճեր – ջրաճահճային ֆլորա – հազվագյուտ տեսակներ

Приводятся сведения о распространении и состоянии популяций 31 вида редких водно-болотных растений, произрастающих в 11 озерах Лорийского плоскогорья. Из них 8 видов занесены в Красную книгу растений РА, а 11 в Армении имеют очень ограниченный ареал и встречаются только в этих озерах.

Лорийское плоскогорье – реликтовые озера – водно-болотная флора – редкие виды

Data on the distribution and population 31 species of rare wetland plants growing 11 lakes in Lori plateau are presented. Of these 8 species are included in the Red Book of plants of Armenia, and 11 species in Armenia have a very limited range and are found only in these lakes.

Lori plateau – relic lakes – wetland flora – rare species

Լոռու սարահարթը գտնվում է Հյուսիս-Արևմտյան Հայաստանում և ամբողջությամբ մտնում է համանուն վարչական մարզի և Լոռու ֆլորիստիկական շրջանի մեջ [8]: Այն գտնվում է 1300-1500 մ բարձրությունների վրա և շրջապատված է արևմուտքից Ջավախքի լեռնաշղթայով, հարավից՝ Բազումի, արևելքից՝ Վիրահայոց լեռների մեջ մտնող Լեջանի և Լավվարի լեռնաշղթաներով: Սարահարթը հատում են Չորագետ–Տաշիր գետերը, որոնց միջև գտնվում են մեր ուսումնասիրած լճերի մեծ մասը:

Լոռու լճերի ֆլորան և բուսականությունը 1931-1932 թթ. առաջին անգամ ուսումնասիրել է Թախթաջյանը [7]: Նրա կողմից ուսումնասիրված 6 լճերում գրանցվել են մոտ 50 տեսակ բարձրակարգ բույսեր, այդ թվում Հայաստանի համար նոր *Salvinia natans* L. [7], [9] և հազվագյուտ *Nymphoides peltata* (S.G.Gmel.) O. Kuntze, *Hippuris vulgaris* L., *Elatine alsinastrium* L. տեսակները:

Լոռու լճերի ֆլորայի և բուսականության ուսումնասիրություններ կատարել է Հայաստանի ջրաճահճային ֆլորայի հայտնի հետազոտող Բարսեղյանը: Նրա աշխատանքներում բերվում են մի շարք հետաքրքիր տվյալներ ջրաճահճային բույսերի նոր և հազվագյուտ տեսակների վերաբերյալ:

Լոռու սարահարթի ջրաճահճային բույսերի ուսումնասիրությունը կատարվել է նաև «Հայաստանի ֆլորան» (1954-2010) աշխատության մշակման համար իրակա-նացված բազմաթիվ գիտաբանների ընթացքում: Սակայն այդ աշխատանքները եղել են ընդհանուր և չեն կենտրոնացել միայն Լոռու սարահարթի ջրաճահճային բույսերի գույքագրման վրա:

Նյութ և մեթոդ: Աշխատանքի համար հիմք են հանդիսացել մեր հետազոտությունները և Լոռու սարահարթի 11 լճերից 2007-2012 թթ. ընթացքում մեր կողմից կատարված նկարագրություններն ու հավաքված հերբարիումային նյութերը, որոնց գիտական մշակումը կատարվել է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի «Բույսերի կարգաբանության և բույսերի աշխարհագրություն» բաժնում (ERE), որտեղ էլ ներկայումս դրանք պահպանվում են: Ինչպես նաև օգտագործվել են վեր նշված ինստիտուտում և Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետում (ERCB) պահպանվող հերբարիումային հավաքածուների համապատասխան օրինակները:

Լոռու սարահարթի լճերի ջրաճահճային ֆլորայի մեր հատուկ ուսումնասիրությունները կատարվել են սկսած 2007 թ-ից: Ուսումնասիրվել են 11 լճերի ջրաճահճային ֆլորան: Այդ լճերն են. Երկար Լիման, Պարզ Լիման, Կոնսկի Լիման, Սարատովկայի լիճ (տեղական անունը՝ «Болото 7-ое»), Նովոսելցովո, Պյատաչևո, Շուշանայիճ (Ուրասար, Կույբիշև), Ստեփանավան – Մեծ, Ստեփանավան – Փոքր, Ստեփանավան – Միջին, Ստեփանավան – Տաշիր ավտոմայրուղու աջ կողմի լիճ: Դաշտային ուսումնասիրությունները, դիտողությունները և հերբարիումային նյութերի հավաքները կատարվել են երթուղային (մարշրուտային) և ստացիոնար մեթոդներով: Դաշտային դիտողությունների ընթացքում նշվել են բույսերի հանդիպման հաճախականությունը, պոպուլյացիաների խտությունը, առանձին դեպքերում առանձնյակների թվաքանակը, բույսերի վիճակը, ինչպես նաև հազվագյուտ տեսակների համար, բույսագրվել է բուսականության ընդհանուր վիճակը և արժևորվել են անհետացման հնարավոր վտանգները:

Արդյունքներ և քննարկում: Համաձայն մեր ընդհանրացված տվյալների, գրանցվել են 178 տեսակ, որոնք պատկանում են 34 ընտանիքների 78 ցեղերին [13]: Այս աշխատանքում մենք կանգ ենք առնում բուսաշխարհագրական տեսակետից առավել հազվագյուտ և հետաքրքիր 31 բուսատեսակների վրա:

Սկզբից նշում ենք այն տեսակները, որոնք Հայաստանում հանդիպում են միայն Լոռու սարահարթի լճերում: Դրանք ստորև բերվող 11 տեսակներն են:

Carex appropinquata Schum. – Տիպիկ Եվրո-սիբիրական տեսակ է, որը լայն տարածված է Եվրոպայում և Սիբիրում, լավ է ներկայացված Կովկասում և իր տարածումով հասնում է մինչև Անատոլիա, սակայն Հայաստանում շատ հազվագյուտ է: Հավաքվել է միայն մեկ անգամ Բարսեղյանի կողմից Կույբիշևի մոտ գտնվող լճից 1957 թ.-ին (ERE 69807, 121160): Մինչև հիմա այլևս չի հավաքվել, մեր կողմից նույնպես չի հայտնաբերվել և նրա պոպուլյացիայի այժմեական դրությունը անհայտ է: Հնարավոր է տեսակը արդեն անհետացել է:

C. bohémica Schreb. – Պալեարկտիկական տեսակ է, որի ընդհանուր արեալն է՝ Միջին և Հարավային Եվրոպա (հազվադեպ), Հարավային և Արևելյան Սիբիր, Հեռավոր Արևելք, Միջին Ասիա, Մոնղոլիա, Չինաստան, Հյուսիսային Կորեա, Ճապոնիա: Կովկասում հայտնաբերվել է միայն Լոռու սարահարթի լճերում [6]:

Հավաքվել է Բարսեղյանի [5] կողմից 1955-1973 թթ. ընթացքում Ժանգոտ – գյուղ, Լոդկա – գյուղ և Կրուգոնե լճերից (ERE 88022, 88023, 157180, 66722, 66793-66797, 101216-10129): Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես վտանգված տեսակ (EN):

Chamaenerion dodonaei (Vill.) Kost. – Եվրո-կովկասյան տեսակ, ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս (Նախակովկաս, Արևմտյան, Կենտրոնական և Հարավային Անդրկովկաս), Հյուսիսային և Հարավային Եվրոպա, Միջերկրածովյան ավազան, Անատոլիա: Ըստ «Հայաստանի ֆլորան» աշխատության [2]՝ տեսակը Հայաստանում հանդիպում է նաև Շիրակի ֆլորիստիկական շրջանում, սակայն հերբարիումային հավաքը ERE-ում բացակայում է: Լոռու ֆլորիստիկական շրջանում հավաքվել է Հախվերդովի և Միրզոևայի կողմից 1952 թ.-ին (ERE 124700, 124701, 141394), այնուհետև 33 տարի անց Ավետիսյանի կողմից (ERE 137525): Մեր հավաքը հաստատում է տեսակի առկայությունը Սարատովկայի լճում (ERE 185051), սակայն պոպուլյացիան շատ սակավաթիվ է, և մեր կողմից հայտնաբերվել է ընդամենը 20-30 բույսեր: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես վտանգված տեսակ (EN):

Comarum palustre L. – Հոլարկտիկական տեսակ է, որի ընդհանուր արեալը ընդգրկում է՝ Կովկաս (Արևմտյան Կովկաս, Աջարիա և Արևմտյան Վրաստան), Ատլանտյան, Կենտրոնական և Հարավ-արևելյան Եվրոպա, Սկանդինավյան թերակղզի, Սիբիր (ամենուրեք, ընդհուպ մինչև Արկտիկա), Մոնղոլիա, Չինաստան, Ճապոնիա:

«Հայաստանի ֆլորան» աշխատության մեջ [11] տեսակը բերվում է նշվելով «Հնարավոր է գտնվի Հայաստանում», սակայն 1957 թ.-ին հայտնաբերվել է Բարսեղյանի կողմից Կույբիշևի մոտ գտնվող լճում (ERE 168378, 168379):

Lycopus exaltatus L. f. – Պալեարկտիկական այս տեսակը ունի ընդհանուր տարածման հետևյալ արեալը. Կովկաս (Նախակովկաս, Կենտրոնական Անդրկովկաս), Եվրոպա, Սիբիր, Միջին և Կենտրոնական Ասիա: Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ տեսակը Հայաստանում հայտնաբերվել է Շելկովնիկովի կողմից 1922 թ-ին (ERE 95291), կրկին հավաքվել է միայն 63 տարի հետո Խանջյանի կողմից 1985 թ-ին (ERE 129238): Պոպուլյացիայի այժմեական դրությունը անհասկանալի է, քանի որ հետազայում չի հավաքվել և մեր կողմից ևս հայտնաբերված չէ: Հնարավոր է կապված տեսակի կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունների հետ այն ամեն տարի չի ծաղկում:

Nymphaea alba L. – Պալեարկտիկական այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս, Եվրոպա, Սիբիր: Արդի ժամանակաշրջանում աճում է միայն Լոռու ֆլորիստիկ մարզում, որտեղից հավաքվել է տարբեր հետազոտողների կողմից սկսած 1930 թ-ից, ինչպես նաև մեր կողմից՝ Պարզ Լիմանից, Երկար Լիմանից, Կոնսկի Լիմանից, Սարատովկայի լճից և Շուշանալճից (ERE 185229–185231, 185043–185050): Տեսակը (ինչպես *Nymphaea candida*) նշվել է նաև Ապարանի ֆլորիստիկ շրջանի համար [8], սակայն վերջին 70–80 տարիների ընթացքում այնտեղ այլևս չի հայտնաբերվել: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես վտանգված տեսակ (EN):

Nymphoides peltatum (S.G. Gmel.) O. Kuntze. – Պալեարկտիկական այս տեսակը ունի ընդհանուր տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս, Եվրոպա, Միջերկրածովյան ավազան, Անատոլիա, Միջին, Կենտրոնական և Արևելյան Ասիա, Իրան: Ուսումնասիրվող տարածքից տեսակը հավաքվել է տարբեր հետազոտողների կողմից սկսած 1920 թ-ից, այդ թվում նաև մեր կողմից՝ Նովոսելցովո, Կոնսկի Լիման, Պյատաշոկ, Ստեփանավանի-Մեծ, Ստեփանա-վանի-Միջին, Ստեփանավանի-Փոքր լճերից և Ստեփանավան-Տաշիր ավտոմայրուղուց աջ գտնվող լճից (ERE 185228, 185039–185042):

Peplis alternifolia M. Bieb. – Պալեարկտիկական այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս (Հարավ-Արևմտյան, Հարավային Անդրկովկաս), հարավ և հարավ-արևելյան Եվրոպա, Բալկանիա, Անատոլիա, Միջին Ասիա: Հայաստանում շատ հազվագյուտ տեսակ է և հավաքվել է միայն մեկ անգամ Բարսեղյանի կողմից 1958 թ-ին (ERE 66724, 66725): Հետազայում տեսակը չի հավաքվել և մեր կողմից նույնպես չի հայտնաբերվել: Չի բացառվում որ այս տեսակը ևս անհետացած լինի:

Salvinia natans (L.) All. – Պալեարկտիկական այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս, Եվրոպա, Սիբիր, Հյուսիսային Ասիա, Հեռավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Չինաստան, Հնդկաստան, Հյուսիսային Ամերիկա: Առաջին անգամ հավաքվել է Թախթաջյանի կողմից 1932 թ-ին, այնուհետև տարբեր հետազոտողների կողմից: 1973 թվականին հավաք կատարվել է Բարսեղյանի, իսկ արդեն 2010–11 թթ մեր կողմից՝ Երկար Լիմանից (ERE 178355–183160): Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR): Տեսակը ընդգրկված է Բերնսկի կոնվենցիայի հավելվածում և նրա բնակատեղը պահպանման կարիք ունի:

Schoenoplectus supinus (L.) Pall. – Պալեարկտիկական այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս (Արևմտյան Նախակովկաս, Հարավային Անդրկովկաս), Եվրոպա, Սիբիր, Միջերկրածովյան ավազան, Անատոլիա, Միջին և Կենտրոնական Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Իրան: Ըստ «Հայաստանի ֆլորան» աշխատության [12]՝ տեսակը նշվում է (Лори, между Оран-Лори и Калинино, по данным Фл.Армении, 2001, 10: 439), սակայն հերքարիումային նյութը բացակայում է (ERE), և ապացույցներ չկան: Պոպուլյացիայի դրությունը անհայտ է, աճման կոնկրետ վայրը նույնպես անհայտ է:

Utricularia minor L. – Տեսակը բազմառեզիոնալ է և ունի ընդհանուր տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս, բարեխառն և տրոպիկական Եվրասիա և Հյուսիսային Ամերիկա: Ըստ գրականության տվյալների [7] առաջին անգամ Հայաստանից հավաք կատարվել է Տրոյցկիի կողմից (1926): Մեր կողմից հավաքվել են հերքարիումային օրինակներ Շուշանալճից, Պարզ Լիմանից և Սարատովկայի լճից (ERE 185036–185038): Քանի որ գրականության տվյալները ապացուցված չեն հերքարիումային նյութով, մեր հավաքները հաստատեցին այս տեսակի առկայությունը:

Հետազոտվող տարածքում առկա են նաև մի շարք հազվագյուտ տեսակներ, որոնք բացի Լոռու ֆլորիստիկ շրջանում հանդիպում են ևս մեկ կամ մի քանի ֆլորիստիկ շրջաններում:

Carex atherodes Spreng. – Հովարկտիկական այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս (Կենտրոնական, Հարավ-Արևմտյան և Հարավային Անդրկովկաս), Հյուսիսային և Միջին Եվրոպա (հազվադեպ), Սիբիր, Անատոլիա, Միջին Ասիա, Մոնղոլիա, Չինաստան, Հյուսիսային Ամերիկա: Հայաստանում տեսակը տարածված է Լոռու, Ապարանի և Իջևանի ֆլորիստիկ շրջաններում: Լոռու ֆլորիստիկ շրջանից առաջին անգամ հավաքվել է 1957 թ-ին Բարսեղյանի (ERE 69794-69796, 122089), այնուհետև 1985 թ-ին Խանջյանի կողմից (ERE 133433, 133434): Մեր կողմից հաստատվել է այս տեսակի տարածվածությունը Կոնսկի Լիմանում և Սարատովկայի լճում (ERE 185006-185008), որի պոպուլյացիաները առավել լավ են արտահայտված Սարատովկայի լճում՝ մասնավորապես հարավային և արևմտյան հատվածներում, իսկ Կոնսկի Լիմանում պոպուլյացիաներ առկա են լճի գրեթե բոլոր կողմերում, բացառությամբ հյուսիս արևելյանը:

Carex disticha Hods. – Բազմառեզիոնալ այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս, Միջին և Հարավային Եվրոպա, Միջերկրածովյան ավազան (հազվադեպ), Սիբիր, Անատոլիա, Միջին Ասիա, Ավստրալիա (ընդգրկված է), Հյուսիսային Ամերիկա: Հայաստանում տեսակը տարածված է Լոռու, Ապարանի, Սևանի և Զանգեզուրի ֆլորիստիկ շրջաններում: Լոռու ֆլորիստիկ շրջանից հավաքվել է միայն Բարսեղյանի կողմից 1957-1960 թթ. (ERE 69782, 69783, 121162): Մեր կողմից հաստատվել է տեսակի տարածվածությունը միայն Կոնսկի Լիմանում (ERE 185009, 185010), որի պոպուլյացիաները արտահայտված են լճի միայն հարավային և արևմտյան հատվածներում, ընդ որում շատ քիչ:

Juncus tenuis Willd. – Հովարկտիկական այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս (Արևմտյան Կովկաս, Արևմտյան և Հարավային Անդրկովկաս), Սկանդինավյան թերակղզի, Հյուսիսային Եվրոպա, Միջերկրածովյան ավազան, Հյուսիս-Արևելյան Անատոլիա (հազվադեպ), Հյուսիսային Ամերիկա: Հայաստանում տեսակը տարածված է Լոռու և Իջևանի ֆլորիստիկ շրջաններում: Լոռու ֆլորիստիկ շրջանից հավաքվել է 1960-1967 թթ ընթացքում Բարսեղյանի (ERE 93802, 93803, 130230, 132965, 9496-94963), այնուհետև 1985 թ-ին Խանջյանի (ERE 129505, 129506, 132966) կողմից: Մեր հավաքները հաստատում են տեսակի տարածվածությունը Ստեփանավան – Միջին լճում, Պարզ Լիմանում և Սարատովկայի լճում (ERE 185027-185029): Ընդ որում առավել հարուստ պոպուլյացիաներ առկա են Սարատովկայի լճում՝ հարավային և արևմտյան հատվածներում:

Lemna polyrrhiza L. – Բազմառեզիոնալ տեսակ է, որի տարածման արեալն է՝ Կովկաս, Սկանդինավյան թերակղզի, Հյուսիսային և Ատլանտյան Եվրոպա, Միջերկրածովյան ավազան, Անատոլիա, Միջին և Արևելյան Ասիա, Ավստրալիա, Հյուսիսային Ամերիկա: Հայաստանում տարածված է Լոռու, Երևանի և Սևանի ֆլորիստիկ շրջաններում: Հետազոտվող տարածքից հեբբարիումային հավաք իրականացվել է 1960, 1973 թթ. Բարսեղյանի (ERE 66711, 163738) և 1985 թ-ին Խանջյանի (ERE 130451) կողմից: Մեր հավաքները հաստատել են տեսակի տարածվածությունը Պյատաչոկում և Երկար Լիմանում (ERE 185025-185227): Ընդ որում Երկար Լիմանում այն զբաղեցնում է ափամերձ տարածքներ՝ հարավային, արևմտյան և հյուսիս-արևմտյան հատվածներում, իսկ Պյատաչոկում միախառնված է *Lemna gibba* L. տեսակի հետ և գրեթե ամբողջությամբ ծածկում է լճի մակերեսը:

Myriophyllum verticillatum L. – Բազմառեզիոնալ այս տեսակը ունի տարածման հետևյալ արեալը՝ Կովկաս (Նախակովկաս, Արևմտյան, Արևելյան և Հարավային Անդրկովկաս), Եվրոպա, Սիբիր, Հյուսիսային և Կենտրոնական Ասիա, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային և Հարավային Ամերիկա:

Հայաստանում տեսակը տարածված է Լոռու, Ապարանի և Երևանի ֆլորիստիկ շրջաններում: Լոռու ֆլորիստիկ շրջանում առաջին անգամ հավաքվել է Շելկովնիկովի կողմից 1920 թ-ին (ERE 29247, 29248), այնուհետև Թախթաջյանի՝ 1932 թ-ին (ERE 29249): Եվ արդեն 81 տարի անց մեր հավաքները հաստատել են տեսակի տարածվածությունը Պարզ Լիմանում, Երկար Լիմանում, Կոնսկի Լիմանում, Շուշանալճում և Ստեփանավան – Միջին լճում (ERE 185016-185024): Բոլոր վեր նշված լճերում տեսակը զբաղեցնում է ափից դեպի լճի կենտրոնը 2-7 մ տարածություն, բացառություն է կազմում Ստեփանավան – Միջին լիճը, որտեղ տեսակը տարածված է գրեթե ամբողջ լճում:

Persicaria minor (Huds.) Opiz (= *Polygonum minus* Huds.) – Նոլարկտիկական այս տեսակի տարածման արեալն է՝ Կովկաս, Եվրոպա, Սիբիր, Միջերկրածովյան ավազան, Անատոլիա, Միջին Ասիա, Հեռավոր Արևելք, Կենտրոնական և Արևելյան Ասիա: Հայաստանում հանդիպում է Լոռու և Իջևանի ֆլորիստիկ շրջաններում: Հետազոտվող տա-րածքից առաջին անգամ հավաք կատարվել է Թախթաջյանի կողմից 1931թ. (ERCB 3618, ERE 19593): Եվ արդեն 82 տարի անց մեր հավաքները հաստատել են տեսակի տարածվածությունը Պարզ Լիմանում, Երկար Լիմանում և Սարատովկայի լճում (ERE 185052-185055): Պարզ և Երկար Լիմաններում գտնվում է միախառնված *Potamogeton* ցեղի ներկայացուցիչների հետ, իսկ Սարատովկայի լճում տեսակի պոպուլյացիան առկա է հարավային և արևմտյան հատվածներում, այն էլ հազվադեպ:

Potamogeton lucens L. – Պալեարկտիկական տեսակ է, որի տարածման արեալն է՝ Կովկաս, Եվրոպա, Սիբիր, Միջերկրածովյան ավազան, Անատոլիա, Միջին Ասիա, Սիբիր, Հյուսիսային Աֆրիկա, Հյուսիսային Իրաք, Արևմտյան Իրան, Մոնղոլիա, արևմտյան Չինաստան: Հայաստանում տարածված է Լոռու, Սևանի, Երևանի և Դարեղեգիսի ֆլորիստիկ շրջաններում: Ուսումնասիրվող տարածքից հավաք կատարվել է 1985 թ. Խանջյանի (ERE 128691, 128692) և 2003 թ-ին Վիտեկի (ERE 164452) կողմից: Մեր հավաքները հաստատել են տեսակի տարածվածությունը Ստեփանավանի – Մեծ, Միջին և Փոքր լճերում (ERE 185056-185058): Այս երեք լճերում էլ տեսակը հարուստ պոպուլյացիաներով է արտահայտված:

The results of microscopic examination showed that in general all the samples of the collected forms of *Z.clinopodioides*, regardless of the climatic conditions and the characteristics of the germination processing were histologically identical. Thus, cultivating the plant *Z.clinopodioides*, it becomes possible to maintain the level of anatomical form and to implement the standardization of raw materials successfully.

Zizifora clinopodioides Lam – soil and unsoil culture – microscopic analysis

Վերջին տասնամյակում անընդմեջ կատարվող վիճակագրական վերլուծությունները փաստում են, որ դեղապատրաստուկների համաշխարհային արտադրանքի 30%-ի ստացման սկզբնաղբյուր են ծառայում բույսերը, և համաշխարհային շուկայում յուրաքանչյուր 3-րդ դեղապատրաստուկը ներկայանում է որպես բուսական պատրաստուկ [5]:

Այս տեսանկյունից հրատապ է դառնում ինչպես վայրի աճող, այնպես էլ՝ մշակվող (անհող և հողային պայմաններում) բույսերից մթերված հումքերի լայնածավալ հետազոտումը: Հետազոտության մեթոդների արդիականացումը նոր հեռանկարներ է բացում ժողովրդական բժշկության մեջ լայնորեն կիրառվող բույսերի և բուսական դեղերի համակողմանի ուսումնասիրման և կիրառման համար: Ուշադրության են արժանանում հայրենական ֆլորայի որոշ բուսատեսակներ՝ մասնավորապես, վայրի աճող եթերայուղային բույսեր՝ նրանց թվում, շրթնածաղկազգիների ընտանիքին պատկանող ուրցադաղձ վայրի ռեհանաուրցանման (*Z.clinopodioides* Lam.) բուսատեսակը:

Շրթնածաղկավորների (Lamiaceae) ընտանիքի *Ziziphora* L. ցեղը իր մեջ ընդգրկում է շուրջ 30 տեսակ, որոնք տարածված են Հարավային Եվրոպայում, Միջերկրական ծովի մերձակայքում և հարավ-արևմտյան Ասիայում [8]:

Գիտագրական աղբյուրների վերլուծությունից հայտնի է դառնում, որ որպես արժեքավոր եթերայուղային հումքեր միանգամայն հեռանկարային են համարվում *Z.clinopodioides* Lam. և նրա ենթացեղի *Z. bungeana* Juz. (*syn.Z.media* Bunge) տեսակները, որոնք հանդիպում են Սիբիրի հարավային շրջաններում, Միջին Ասիայում և Մոնղոլիայում: Ուստի, շատ երկրներում այս տեսակների մշակման համար աճեցման նոր եղանակներ են մշակվել, ինչպես և ուսումնասիրվել մշակութային պայմաններից կախված եթերայուղի ելքային հնարավորությունները [7]:

Ռուսաստանի Դաշնության Ալթայի մարզում հանդիպող *Z.clinopodioides* Lam. տեսակի 4 պոպուլյացիաների եթերայուղի քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել մեծ քանակությամբ եթերայուղ է պարունակվում ծովի մակարդակից մեծ բարձրության վրա հանդիպող պոպուլյացիաներում: Տերևներում պարունակվող եթերայուղային գեղձիկների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակլիմայական պայմանների փոփոխությունից դիտվում է ուղիղ համեմատական կապ եթերայուղի ելքի և քսերոֆորմ հատկանիշների մեծացման միջև [2, 4]: Ներկայացված գիտագրական տվյալները միանշանակ փաստում են *Z. clinopodioides*-ի՝ որպես արժեքավոր եթերայուղային հումքի կիրառման հեռանկարների մասին: Հայաստանի ֆլորայում հանդիպում են ուրցադաղձերի *ziziphora* և *serpyllacea* սեկցիաները՝ իրենց 9 տեսակներով (*Z. capitata*, *Z. tenuior*, *Z. persica*, *Z. rigida*, *Z. serpyllacea*, *Z. brantii*, *Z. raddei*, *Z. biebersteiniana*, *Z. clinopodioides*) [1]:

Սույն աշխատանքի նպատակն է՝ Հայաստանի ֆլորայում վայրի աճող, *serpyllacea* սեկցիային պատկանող ուրցադաղձ ռեհանաուրցանման տեսակի (*Ziziphora clinopodioides* Lam.) պոպուլյացիաների բացահայտումը, նրանց հումքային պաշարների, ինչպես և՛ անհող և հողային պայմաններում մշակությոններում հնարավորությունների ուսումնասիրումը և մանրադիտակային մեթոդով հումքի նախնական ստանդարտավորումը:

Նմանատիպ հետազոտությունները նախապայման կհանդիսանան *Z.clinopodioides*-ի բավարար հումքային պաշարներ ստեղծելու, վայրի աճող և մշակվող տեսակներից մթերված հումքի քիմիական կազմի բացահայտման և նրանցում պարունակվող ակտիվ նյութերի՝ մասնավորապես, ֆլավոնոիդային գլիկոզիդների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրման և ստանդարտավորման ֆիզիկաքիմիական մեթոդների մշակման համար:

Նյութ և մեթոդ: Հետազոտության նյութեր են ծառայել 2013 թ.ապրիլ-հուլիս ամիսներին մինչև ծաղկումը և ծաղկման փուլում Գեղամա լեռնաշղթայի արևելյան և հարավ-արևմտյան լանջերին հարող շրջաններում (Գեղարքունիք, Կոտայք՝ Հանքավան, Ողջաբերդ) և Թեքսարի լեռնաճյուղի նախալեռնային գոտում վայրի աճող, ինչպես և՛ հողային և անհող պայմաններում մշակվող ուրցադաղձ ռեհանաուրցանման տեսակից (*Ziziphora clinopodioides* Lam.) մթերված խտուր:

Մթերման գործընթացը կազմակերպվել է ԱՀԿ-ի GASP համապատասխան հրահանգների համաձայն [6]:

Հումքային պաշարների ընդարձակման և վայրի աճող, և մշակվող նմուշների ձևաբանա-անատոմիական և ֆիզիկաքիմիական համեմատական հետազոտման նպատակով բույսի մշակման գործընթացը կատարվել է ՀՀ ԳԱԱ Հիդրոպոնիկ պրոբլեմների ինստիտուտում:

Մշակման նպատակով *Ziziphora clinopodioides*-ի թփիկները բերվել են Կոտայքի շրջանի Ողջաբերդ գյուղի շրջակայքից և տնկարկվել 5մ² սնման մակերես ունեցող հիդրոպոնիկական վեգետացիոն փորձանոթներում, ինչպես և հողային մշակույթի պայմաններում՝ 40 բույսի հաշվարկով: Որպես լցանյութ օգտագործվել է 3-15 մմ մասնիկների տրամագծով սև խարամը, որը նախօրոք ախտահանվել է KMnO₄-ի 0.05%-անոց լուծույթով: Մտուցիչ է ծառայել սովորական հողային մշակույթը, որտեղ պահպանվել են ագրոտեխնիկայի ընդունված կանոնները: Վեգետացիայի ընթացքում բույսերը սնվել են Դավթյանի կողմից առաջարկված սննդային լուծույթով, pH-5.5-6.5, օրական 1-2 անգամ [3]:

Բույսերը տնկարկվել են հիդրոպոնիկայում ապրիլի կեսերին (12.04.13): Առաջին հավաքը կատարվել է ծաղկման փուլում՝ հուլիս ամսվա սկզբին:

Հետազոտության մեթոդ է ծառայել ապրանքագիտական վերլուծության մաս կազմող մանրադիտակային վերլուծությունը, որը կատարվել է լուսային եռօկուլյար “Micros” մակնիշի մանրադիտակով (10x10;10x40):

Արդյունքներ և քննարկում: *Ziziphora clinopodioides* բուսատեսակի գիտական հետազոտության և գործնական կիրառման հնարավորություններն ապահովելու համար չափազանց կարևոր է բավարար հումքային բազայի ստեղծումը, որը հնարավոր է միայն վայրի ֆլորայում հումքաբանական ուսումնասիրությունների իրականացման և մշակման հնարավորությունների դիտարկման շնորհիվ:

Ըստ Թախթաջյանի Հայաստանի ֆլորայում ուրցադաղձ վայրի ռեհանաուրցանման տեսակը (*Ziziphora clinopodioides* Lam.) կիսաթփերի ձևով հիմնականում հանդիպում է խոտաթփային համակեցություններում՝ Շիրակի, Արագածոտնի, Լոռվա, Իջևանի, Ապարանի, Գեղարքունիքի, Զանգեզուրի լեռնային գոտիականության քարքարոտ լանջերից մինչև մերձմարգագետնային բարձունքները [1]:

Համալիր գիտարշավի մեթոդով մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ *Z. clinopodioides*-ի հումքային պաշարներն այնուամենայնիվ Հայաստանի ֆլորայում սահմանափակ են և հիմնականում հանդիպում են փոքր պոպուլյացիաներով անանցանելի վայրերում 1400-2600 մ բարձրության վրա, ուր գերիշխում է տափաստանային գոտին: Կատարված հումքաբանական ուսումնասիրությունները (15.04.13) ցույց տվեցին, որ պոպուլյացիան զբաղեցնում է մոտ 2000 մ² մակերես և 1մ² մակերեսով 10 փորձադաշտերում՝ թփերի զբաղվածությունը միջինում կազմում է 2,7±0.56 (թուփ/ մ²):

Վայոց ձորի Աղավնաձոր գյուղի հանդիպակած լեռնաշղթայում (Թեքսարի լեռներ) կատարված հումքաբանական հետազոտությունների արդյունքում, գազերի (*Astragalus* L.) հարևանությամբ հայտնաբերվեց 1000 մ² մակերես զբաղեցնող պոպուլյացիա, որում 1 մ² մակերեսով 10 փորձադաշտերում՝ թփերի զբաղվածությունը միջինում կազմում է 4±0,56 (թուփ/մ²):

Այսօր ցանկացած դեղաբուսական հումքի ստանդարտավորման մեջ որոշիչ դեր է կատարում մանրադիտակային վերլուծությունը: Հատկապես կարևորվում է ձևաբանական տարբեր խմբերին պատկանող դեղաբուսական հումքերի անատոմիական կառուցվածքի տարբերակիչ հատկանիշների վերլուծությունը:

Մանրադիտակային վերլուծությամբ հաջողվում է միմյանցից տարբերակել միևնույն բույսի տարբեր տեսակները, հավաստիորեն գնահատել կտրատված, փոշիացված հումքերի անատոմիական տարբերակիչ հատկանիշները, բացահայտել թույլատրելի խառնուրդների հյուսվածաբանական առանձնահատկությունները և այլն:

Պատահական չէ, որ ապրանքագիտական բնույթի հետազոտություններում մեր կողմից կարևորություն տրվեց հայրենական ուրցադաղձերի (վայրի աճող և մշակվող) մանրադիտակային վերլուծությանը՝ հումքի տեսակը նախնական ստանդարտավորման ենթարկելու նպատակով:

Հիդրոպոնիկայում մշակվող ուրցադաղձ ռեհանաուրցանմանի տերևի մանրապատրաստուկի վերլուծություն: Տեսադաշտում լավ արտահայտված են վարդակ առաջացնող ճառագայթաձև դասավորված 8 արտագատող բջիջներից բաղկացած մե-

ծաքանակ եթերայուղային կլոր գեղձիկները, որոնք բնորոշ են շրթնաձաղկավորների ընտանիքի եթերայուղային հումք հանդիսացող բույսերի անատոմիական կառուցվածքին: Հերձանցքները անմոցիտ տիպի են՝ տեղ-տեղ լավ արտահայտված: Անոթները պարուրաձև և օղակաձև են, ավելի լավ արտահայտված են տերևաթիթեղի ստորին մակերեսին: Սակավաթիվ պարզ մազիկներ նկատվում են մանրապատրաստուկի վերին մակերեսին:

Բավականին լավ արտահայտված են մեծաքանակ գլխիկավոր մագիկները, որոնք հիմնականում բաղկացած են միաբջջե ուտիկից և գլխիկից: Տերևաթիթեղի եզրերին հանդիպում են նաև պտկաձև մագիկներ (նկ.1 ա,բ):

Հանքավանի նախալեռնային գոտուց մթերված ուրցադաղձ ռեհանաուրցանմանի տերևի մանրապատրաստուկի վերլուծություն: Հայաստանի տարբեր շրջաններից մթերված ուրցադաղձ ռեհանաուրցանմանի հումքի մանրադիտակային վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ Հանքավանի մթերված ուրցադաղձի տերևի մանրապատրաստուկի վերին մակերեսի կուտիկուլան հարթ է: Ի տարբերություն հիդրոպոնիկայից մթերված հումքի, այստեղ բնորոշ են մեծաքանակ եթերայուղային գեղձիկները, որոնք նույնիսկ 1.5 անգամ գերազանցում են չափերով: Պարզ մագիկները սակավաթիվ են, սակայն ուշագրավ է այն, որ մագիկի ամրացման տեղին հարակից բջիջները վարդակ են առաջացնում և լավ են արտահայտված: Հերձանցքները անոմոցիտ տիպի են: Անոթները պարուրաձև են և օղակաձև (նկ.3):

Գեղարքունիքի նախալեռնային գոտուց մթերված ուրցադաղձ ռեհանաուրցանմանի տերևի մանրապատրաստուկի վերլուծություն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հումքի մանրապատրաստուկն իր մի շարք հատկանիշներով համարժեք է նախորդ հումքերի մանրապատրաստուկներին: Սակայն այս մանրապատրաստուկում վերին էպիդերմիսի վրա եթերայուղային գեղձիկները սակավաթիվ են և թույլ արտահայտված:

Տերևաթիթեղի եզրերում հանդիպող պտկաձև մագիկները ևս սակավաթիվ են: Պարուրաձև և օղակաձև անոթները չափազանց լավ են արտահայտված (նկ. 4):

Մանրադիտակային հետազոտության արդյունքները միանգամայն փաստում են բուսական հյուսվածքների անատոմիական կառուցվածքի վրա կլիմայական գործոնների, ինչպես և, մշակման պայմանների էական ազդեցության մասին: Այսպես օրինակ, ի տարբերություն վայրի աճող տեսակների, հիդրոպոնիկ եղանակով մշակվող տեսակների անատոմիական կառուցվածքն աչքի է ընկնում մեխանիկական հյուսվածքի՝ մասնավորապես, անոթային համակարգի լավ զարգացվածությամբ, որն ըստ էության բացատրվում է մշակման պայմաններին անոթային համակարգի հարմարողականության ձեռք բերմամբ:

Միավոր մակերեսում եթերայուղային գեղձիկների մեծաքանակ առկայությունը և չափերի ընդգծվածությունը, հավանաբար, վկայում է եթերայուղի զգալի պարունակության մասին: Առաջիկայում եթերայուղի պարունակության թվային ցուցանիշի որոշմամբ կտրվի անատոմիական օրինաչափության այս հիմնավոր բացատրությունը:

Ամփոփելով, կարելի է նշել, որ աճման բնակլիմայական պայմաններից և մշակման առանձնահատկություններից անկախ, *Z. clinopodioides* տեսակից մթերված հումքին բնորոշ հյուսվածաբանական հատկանիշներն ընդհանուր առմամբ համարժեք են, թեև մի շարք գործոններով պայմանավորված, կարող են թույլ կամ խիստ արտահայտված լինել: Ուստի, բույսի այս տեսակը մշակույթ ներդնելով, կարելի է պահպանել տեսակի անատոմիական առանձնահատկությունները և հաջողությամբ իրականացնել հումքի ստանդարտավորման գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ֆլորան: Ա.Լ.Թախտաջյանի խմբագրությամբ, Զ. ՀՀ ԳԱԱ, հրատ.Երևան էջ.127-134, 1987:
2. Гуськова И.Н. Накопление эфирного масла и анатомическое строение листа *Ziziphora clinopodioides* Lam. в различных местообитаниях.Полезные растения природной флоры Сибири. Новосибирск, с.188-198, 1967.
3. Давтян Г.С. Справочная книга по химизации сельского хоз. М., колос, с.382-385, 1980.
4. Корольюк Е.А., а В. Кёниг, б Ткачева* А.В. Состав эфирного масла Зизифоры пахучковидной (*Ziziphora clinopodioides* Lam.) из Алтайского края и республики Алтай. Химия растительного сырья. № 1, с.49-52, 2002.
5. Лавренов В.К., Лавренова Г.В. “Энциклопедия лек. растений народной медицины”. Петербург, изд.дом “Нева”,с.5-73, 2003.
6. Руководящие принципы ВОЗ по надлежащей практике культивирования и сбора /GACP/ лекарственных растений.Всемирная организация здравоохранения, Женева, 1, 2003.
7. Суюншалиева У.Х. Опыт выращивания перспективного лекарственного и эфирномасличного растения – зизифоры Бунговской. Изучение лекарственных растений Казахстана: (Сб. ст.). АН Каз.ССР, Ин-т ботаники. Алма-Ата, с. 136-142, 1988.
8. Юзепчук С.В. Род Зизифора – *Ziziphora* L. Флора СССР, М.:Л., 21, с. 831-411,1954.

Ստացվել է 24.09.2013



Биолог. журн. Армении, 1 (66), 2014

О ФИЗИОЛОГИЧЕСКОМ МЕХАНИЗМЕ МОРОЗОСТОЙКОСТИ ВИНОГРАДНОГО РАСТЕНИЯ ПРИ РАЗНЫХ УСЛОВИЯХ ЗИМОВКИ

К.С. ПОГОСЯН

Научный центр "Виноградоплодовиноделия" НАУ

Изучались основные процессы развития морозостойкого состояния под укрытием и открыто зимующих растений винограда в процессе их закаливания и зимовки. Морозостойкость связана с изменением свойств протоплазмы, изменения ее субмикроскопического строения. Выявлены специфика льдообразования в различных тканях, а также зависимость льдообразования от генотипа, различной оводненности тканей лозы.

Морозостойкость – виноград – льдообразование

Ուսումնասիրվել են ցրտադիմացկունության հատկանիշի զարգացման հիմնական գործընթացները՝ կոփման և ձմեռման փուլերում գտնվող բաց ձմեռող և թաղվող խաղողի վազերի մոտ: Ցրտադիմացկունությունը կախված է պրոտոպլազմայի հատկությունների և միկրոսկոպիկ կառուցվածքի փոփոխություններից: Բացահայտվել են տարբեր հյուսվածքներում սառցեգոյացման յուրահատկությունները, ինչպես նաև սառցեգոյացման կախվածությունը գենոտիպից և վազի հյուսվածքների ջրահագեցվածության տարբեր աստիճաններից:

Ցրտադիմացկունություն – խաղող – սառցեգոյացում

The basic development processes of frost resistance features of the open and cover wintering grapevines in the stages of their hardening and wintering were studied. The frost resistance depends on the changes of protoplasm properties and its submicroscopic structure. The specific character of ice formation in various tissues as well as the dependence of ice formation on the genotype of varying water content of tissues vines were revealed.

Frost resistance feature – grapevine – ice formation

Формирование морозо-зимостойкости растений является сложным, многохарактерным явлением, складывающимся поэтапно в годичном цикле роста и развития. При нарушении или существенных отклонениях некоторых важных климатических и агротехнических факторов возможны чувствительные изменения в жизнедеятельности и долговечности растений.

Устойчивость к морозу у многолетних растений начинает развиваться задолго до непосредственного действия мороза. Многолетним растениям присуща внутренняя ритмика роста и развития. У многих видов ритм роста и развития и, соответственно, степень морозоустойчивости происходит и в факторостатных условиях.

Развитие морозостойкого состояния складывается из трех этапов: вхождение в покой, закаливание низкими положительными температурами (первая фаза закаливания) и закаливание отрицательными температурами (вторая фаза закаливания) [5, 12].

Главнейшим фактором, определяющим вхождение многолетних растений в покой, является длина дня, но разные виды растений реагируют на этот фактор неодинаково, как и виноградная лоза. Длина дня оказывает влияние [5, 7, 8] также на продолжительность и условия вегетации, а на развитие морозостойкости открыто зимующей лозы оказывают влияние условия освещения, температура, водный режим, минеральное питание, формировка и нагрузка куста [5, 7, 10]. В зонах с континентальным климатом виноградное растение обычно зимует под земляным укрытием. В связи с этим в последние десятилетия в НИИВВиП РА проводились оригинальные исследования по созданию морозоустойчивых сортов, выдерживающих низкие температуры (-24 -30°C), которые при этом сохраняли нормальный рост и высокую урожайность [5, 8].

В настоящее время значительно расширились сведения о тех изменениях, которые происходят в растениях во время закаливания, и о свойствах, которые лежат в основе высокой морозостойкости. Многие факторы свидетельствуют о том, что морозоустойчивость связана с изменением свойств протоплазмы, ее субмикроскопического строения [3, 6].

У винограда развитие морозостойкости связано с гидролизом крахмала, увеличением сахаров, особенно сахарозы, появляется также раффиноза. Роль сахаров в повышении морозоустойчивости нельзя считать окончательно выясненной. Важное значение имеет метаболический эффект сахаров при низких температурах. Это объясняется их коллигативными свойствами (повышение осмотической концентрации клеточного сока), но существенная роль сахаров состоит во взаимодействии с субмикроскопическими структурами протопласта, в первую очередь с мембранами. О природе этих взаимодействий пока известно очень мало, возможно адсорбция и различные физико-химические межмолекулярные связи. Повышение морозоустойчивости под влиянием сахаров доказано экспериментально путем экзогенного введения их в растения [4, 5].

Данная работа в основном посвящена специфике льдообразования в различных тканях при слабых, умеренных морозах и при критических температурах, а также выяснению влияния на процесс льдообразования различной оводненности тканей растений.

Материал и методика. Исследовали слабоморозостойкие местные сорта Воскеат, Спитак Араксени и др (В.винифера) и морозостойкие (открытая зимовка) селекции Арм. НИИ виноградарства Бурмунк, Меграбуйр (Амуру-европейский), Артагес (Американо-европейский), Чаренци, а также растения, возделываемые в РФ и южных префектурах Японии.

Основные исследования проводились в Армении (НИИ ВВиП) на слабоустойчивых к морозам растениях, в условиях укрывного виноградарства и на новых селекционных морозоустойчивых сортах, зимующих без укрытия на зиму.

Однолетние побеги срезали в опытном саду и до лабораторных работ хранили при температурах 2° или -5° . Различную степень оводненности черенков достигали обезвоживанием в эксикаторе над сухим хлористым кальцием или погружением в смесь воды со снегом. Дифференциальную калориметрию (ДК), дифференциальный термический анализ (ДТА) и определение морозостойкости проводили по методикам, описанным ранее [1, 2, 3, 5, 6].

Использование калориметров Адиабатический и особенно Кальве, который имеет ряд преимуществ, позволяет изучить динамику замерзания и таяния растительных образцов, измеряется также величина теплового потока (в калориях на единицу времени). В калориметре тот или иной процесс может изучаться при мало изменяющейся или почти постоянной температуре, как на целом растении, так и на черенках, почках в лабораторных условиях [2, 3, 4].

Для измерения температуры тканей использовали многоточечный чувствительный самописец "Ohkura Eleclronic" (диапазон $-1,2 \sim 0 \sim 4 \text{ m}$ с частотой 50 с/С) с термопарами (медь – константан диаметром 0,2 мм каждая). Термопары вставлялись в различные части растения: штамп и побеги лозы, почки, а также в окружающие условия – снежный покров, воздух.

Регистрация температур (колебание от $+8$ $+10^{\circ}\text{C}$ до -15 -28 -30°C) самозаписывающим прибором проводилась в течение 4-5 месяцев [10, 13, 16].

Результаты и обсуждение. Относительно зимнего фитолимата винограда сведений весьма мало, а колебания температуры в различных органах и частях лозы в зимний период и степень морозостойкости растения почти не были изучены. Установлено, что ткани виноградного растения ежедневно, даже в морозную зиму, подвержены большим термическим колебаниям, что связано с температурой окружающего воздуха, прямым действием солнечной радиации, высотой от поверхности снега. Измерения проводились в различных частях штамба, в почке, флореме однолетнего побега. Значительные изменения температуры были отмечены в флореме.

Определение влажности почек и тканей междоузлий показали, что содержание воды в них в течение всей зимы оставалось почти на одном уровне 50,2-50,6 % к сухому весу. Следовательно, блокирование небольшого участка штамба (замороженная часть под снегом) не вызывает прогрессирующего действия на однолетние побеги. В холодные зимы (до -19 -25 -30°C) морозостойкость резко снижается, колебания температуры затрагивают замороженную часть штамба (10-20 см ниже снежного покрова или почвы). Становится возможным восхождение воды из почвы в надземную часть растения, и в течение 2-3 дней содержание воды в тканях побегов существенно повышается (55-60 %), что значительно влияет на степень повреждения почек или тканей при последующем понижении отрицательных температур в пределах -16 -20°C .

Исследования показали, что побеги виноградной лозы в зимнем закаленном состоянии, содержащие 45-47% воды на сырой вес, во время охлаждения в ячейках ДК при слабых морозах давали плохо выраженные экзотермы, заметное льдообразование большей частью начиналось при температуре ниже -10°C . После предварительного увлажнения побеги, содержащие 50 % воды на сырой вес, на кривых ДК (рис. 1, 2, 3) выявляли острый экзотермический пик при -6°C , в процессе дальнейшего охлаждения сначала тепловыделений не было, но в интервале -25 -30°C вновь образовывалась пологая низкотемпературная экзотерма (НТЭ). Эти кривые ДК сходны с полученными ранее [2, 10, 16]. Различия состоят в том, что в наших опытах образцы сравнения полнее уравнивали теплоемкость опытных образцов. Льдообразование в предварительно увлажненных побегах виноградной лозы аналогично замерзанию стеблей многих других древесных растений (яблоня, вишня). Первый экзотермический пик соответствует льдообразованию в проводящих сосудах, НТЭ соответствует замерзанию и гибели клеток сердцевины и сердцевинных лучей [3, 4, 10, 14].




Рис. 1. Дифференциальная калориметрия заморозания побега лозы сорта Бурмунк. Содержание воды в побеге – 50,7% от веса сырого вещества.




Рис. 2. Дифференциальная калориметрия оттаивания побега виноградной лозы сорта Бурмунк при исходном содержании воды 50,7% (верхняя часть рисунка) и замерзания побега при содержании воды 39,5% (нижняя часть рисунка).




Рис. 3. Дифференциальный термический анализ. Низкотемпературная экзотерма замерзания отрезка виноградной лозы сорта Бурмунк при содержании в ней воды 50,2%.

Таким образом, в паренхимных клетках сердцевины и сердцевинных лучей побегов виноградной лозы до момента вымерзания сохраняется незамерзшая вода. Эту воду можно рассматривать как связанную, поскольку при сильных морозах может замерзать именно связанная вода. В процессе закаливания содержание связанной воды в растениях значительно увеличивается [5-7], соответственно НТЭ наиболее выражены у закаленных растений [3, 10].

Однако таяние воды, замерзающей во время появления НТЭ в стеблях виноградной лозы (рис. 3) и других растений [15], происходит при температуре более высокой, приближающейся к 0°C. В данном случае имеет место гистерозис водо-удерживающей способности клеток при замерзании и таянии. Это явление можно объяснить тем, что в момент гибели замерзает вода, связанная живыми структурами протопласта [4, 5, 10].

Такое объяснение не вполне согласуется с тем фактом, что при повторном замораживании (когда клетки уже погибли) НТЭ может вновь появляться [3, 10], хотя у побегов виноградной лозы повторная НТЭ бывает при более высокой температуре, а при третьем замораживании НТЭ бывает почти незаметной (рис. 3). После экстракции из сердцевины и сердцевинных лучей клеточное содержание НТЭ все же обнаруживается. Этот факт указывает на важную роль анатомических структур стебля, в частности свойств клеточных стенок [14].

Наряду с представлением о высокой водоудерживающей способности морозостойких клеток имеется и другое объяснение явления НТЭ. Ряд зарубежных авторов [14] считают, что до момента появления НТЭ внутриклеточная вода сохраняется в состоянии глубокого переохлаждения.

Но вода, адсорбированная на различных структурах растительных клеток, может быть достаточно подвижной, и изменение свойств такой связанной воды при отрицательных температурах значительно отличается от изменений свойств воды в растворах [3].

Состояние глубокого переохлаждения длительное время сохраняется лишь при малых объемах переохлажденных объектов, при отсутствии в них посторонних включений, способствующих гетерогенному зародышеобразованию (нуклеации) льда и при изоляции от затравки льда извне.

Механизм появления НТЭ остается недостаточно выясненным. Предполагается, что выделение тепла в растениях происходит вследствие образования льда внутри клеток [10, 13, 14]. Льдообразование в закаленных растительных клетках затрудняется особенностями их субмикроскопической структуры и защитными веществами [5, 10].

С помощью ДК высокой чувствительности обнаружена тонкая структура НТЭ: она распадается на отдельные пики. Этот факт рассматривается как подтверждение спонтанной нуклеации льда внутри небольших групп клеток или отдельных клеток [2, 5]. С помощью ДТА обнаружено, что у стеблей виноградной лозы НТЭ состоит из ряда мелких пиков (рис. 3).

С помощью ДТА обнаружили НТЭ также и при замерзании почек (рис. 4). Первый экзотермический пик соответствует льдообразованию в сосудистой системе и соседних тканях почечной оси, а также в почечных чешуях. В этих тканях образуется внеклеточный лед, а клетки частично обезвоживаются, но при умеренных морозах они сохраняются живыми. В процессе дальнейшего охлаждения почек, также как и при замерзании стеблей, тепло сначала не выделяется. Зачаточные стебли и бутоны в почках сохраняются при умеренных морозах оводненными, но при критических температурах замерзают и гибнут, что сопровождается образованием НТЭ (рис. 4).




Рис. 4. Дифференциальный термический анализ замерзания почки винограда сорта Воскеат.

В разных почках НТЭ возникает при различных температурах, интервал вымерзания составляет 5–10°C. Средняя температура НТЭ почек снижается при закаливании, что можно объяснить частичным обезвоживанием зачаточных органов, подобно тому, как это имеет место в почках других растений [6, 17]. Это положение подтверждается тем, что частичное обезвоживание побегов приводит к заметному повышению морозостойкости.




Рис. 4а. Поперечный срез основного побега после замораживания при -28°C (сорт Чаренци).
 ФЛ – флоэмные лучи, ПФ – паренхимы (повреждены), К – ксилема не повреждена,
 КМ – регенерация неповрежденных камбиальных клеток, способных к новому дифференцированию новых тканей (после -24°C).

Рис. 4б. Поврежденный слой камбиальных клеток центральной почки (увеличение $\times 400$).
 Запасные почки не повреждены.

У более морозостойких форм (восточно-азиатских) обезвоживание зачаточных побегов и бутонов в почке при длительных морозах может быть очень сильным, и поэтому НТЭ почек у этого вида обнаруживается лишь после оттепели, причем температура ее повышается соответственно продолжительности оттепели.

Таблица 1. Повреждаемость основных и запасных почек (%) у винограда в зависимости от водообеспеченности в осенний период (10.02.99)

Сорт	Вариант	Содержание во- ды перед II фа- зой закалива- ния, %	-24 ⁰		-27 ⁰		-29,5 ⁰	
			24 ч		6 ч		3 ч	
			почки					
			основные	запасные	основные	запасные	основные	запасные
Кармрени - морозостойки	3 полива (05.10, 18.10, 10.11)	52.6	26	0	73	40	80	38
	2 полива (05.10, 18.10)	47.4	9	2	26	14	62	40
	1 полив (10.11)	49.0	14	0	72	36	75	32
	Без полива	48.4	12	0	30	14	60	18
Зовуни	3 полива (05.10, 18.10, 10.11)	50.3	70	45	100	83	100	86
	2 полива (05.10, 18.10)	46.4	50	22	90	66	100	71
	Без полива	43.2	52	24	100	36	100	60

Следовательно можно сделать вывод, что появление НТЭ почек соответствует их гибели. Поэтому ДТА можно использовать как метод диагностики морозостойкости, что нами предложено.

Установлено, что небольшое искусственное снижение содержания воды (в осенний период) в побегах виноградной лозы уменьшает температуру НТЭ древесины и почек, повышает морозостойкость, что можно объяснить понижением температуры зародышеобразования льда в закаленных клетках. Подтверждается положение о том, что небольшой водный дефицит способствует выживанию тканей лозы при минимальных температурах, в связи с чем целесообразно рациональное сокращение поздних осенних поливов при неукрывном виноградарстве в Армении, особенно в зонах с резко континентальным климатом.

Средние данные повреждаемости, степени адаптации и урожайности с учетом влияния отрицательных температур на различных этапах зимовки свидетельствуют о генетической потенциальной способности ряда новых селекционных сортов, о возможности неукрывного их возделывания в зоне укрывного виноградарства с учетом соответствующей технологии выращивания, подбора микрорайонов, что является огромным резервом для стабилизации отрасли.

Следует отметить, что вина 7 новых технических морозостойких сортов (НИИВВиП) Армении на международных конкурсах вин и коньяков в СССР, Болгарии, Румынии, ФРГ, Венгрии и в 2008г на "Армпродэкспо" были удостоены 13 золотых, 12 серебряных медалей и 3 международных дипломов 1-й степени.

ЛИТЕРАТУРА

1. Красавцев О.А. Особенности механизма вымерзания древесины и цветковых почек вишни. Физиология и биохимия культурных растений. 11, 2, с. 176-180, 1979.
2. Красавцев О.А. Калориметрия растений при t^0 ниже нуля. М., с. 114, 1972.
3. Красавцев О.А., Хвалин Н.Н. Особенности морозостойкости и вымерзания паренхимных клеток древесины яблони. Физиология растений. 25, 1, с. 5-11, 1978.
4. Манк В.В. Особенности спектров ЯМР молекул в гетерогенных системах. Украинский химический журнал, 44, 9, с. 911-918, 1978.
5. Погосян К.С. Физиологические особенности морозоустойчивости виноградного растения. Ереван. Изд-во АН Армянской ССР, 237 с., 1975.
6. Погосян К.С., Красавцев О.А. Содержание незамерзшей воды и динамика льдообразования в побегах винограда. Биолог. журн. Армении, 20, 12, с.42-49, 1975.
7. Погосян К.С., Карапетян Ж.Г. Морозостойкость винограда в зависимости от уровня влагообеспеченности растения. Вестник сельскохозяйственной науки, 3, с.103-107, 1980.
8. Погосян С.А., Хачатрян С.С. Селекция столовых и технических сортов винограда. Ереван, 197 с., 1985.
9. Погосян К.С., Склярова И.А. Физиология и гистохимические изменения при закаливании лозы. М., Журн. "С/х биология". с.241-250, 1989.
10. Сакаи А., Погосян К. Влияние быстроты оттаивания на выживаемость виноградного растения. М., Физиология растений. с.1204-1212, 1974.
11. Соловьева М.А. Зимостойкость плодовых культур при разных условиях выращивания. М., Изд-во "Колос", 239 с., 1967.
12. Туманов И.И. Физиология закаливания и морозостойкость растений. М., Изд-во "Наука". 350 с., 1979.
13. Sakai A. Freezing avoidance mechanism of primordia shoots of conifer buds. Plant and cell Physiol. 20, 7, p. 1381-1390, 1979.
14. Burke M., George M. Water in plant tissues and frost hardiness. Academic Press, 111-135, 1975.
15. Probsting E., Sakai A. Determining T_{50} of peach flower buds with exotherm analysis. Hort. Science. 14, 5, p.597-599, 1979.
16. Pogolian K.S., Akira Sakai. Freezing Resistance in Grape vines. Low Temperature Science, Ser. B, 27, 1980.
17. Levit I. Responses of plants environmental stresses. 2-nd Edition. Academic Press. 497, 1980.

Поступила 25.11.2013



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(66), 2014

ՎԻՐՏՈՒԱԼ ՀԵՐԲԱՐԻՈՒՄ (ԸՆՏԱՆԻՔ ԱՍՏՂԱԾԱՂԿԱԶԳԻՆԵՐ ASTERACEAE)

Ս.Գ. ՆԱՆԱԳՅՈՒԼՅԱՆ, Ն.Հ. ԶԱՔԱՐՅԱՆ, Տ.Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ,
Ա.Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարան, կենսաբանության ֆակուլտետ,
բուսաբանության և սնկաբանության ամբիոն
anzakaryan@ysu.am

Ստեղծվել է Երևանի պետական համալսարանի անոթավոր բույսերի հերբարիումի Աստղածաղկազգիների Asteraceae ընտանիքի հավաքածուի թվային տարբերակը: Այն առավել հասանելի է դարձնում հավաքածուն մասնագետների լայն շրջանների համար և հեշտացնում է տվյալների վերլուծությունը:

Հայաստանի բույսեր – վիրտուալ հերբարիում – Asteraceae

Создан виртуальный гербарий семейства Астровых Asteraceae, хранящийся в гербарии сосудистых растений Ереванского госуниверситета. Цифровая версия делает коллекцию растений более доступной широкому кругу специалистов и упрощает обработку данных.

Растения Армении – виртуальный гербарий – Asteraceae

The virtual herbarium of Asteraceae family of the vascular plants herbarium of Yerevan State University has been established. Digital version of the collection will make plants more accessible to a wide range of specialists and simplify data processing.

Plants of Armenia – virtual herbarium – Asteraceae

Անթրոպոգեն գործոնների ազդեցության տակ փոփոխվող բուսական աշխարհը, կրկին գիտնականների ուշադրությունը սևեռեց դեպի հերբարիումային հավաքածուները: Հերբարիումային նմուշները հանդիսանում են կարգաբանության փաստաթուղթ, շատ հաճախ լինելով միակ ապացույցն աշխարհի տարբեր շրջաններում տվյալ բույսի տարածվածության մասին: Տարածաշրջանային ֆլորաների հերբարիումային հավաքածուները հանդիսանում են ինտրոդուկցիայի, ռեինտրոդուկցիայի, էկոլոգիական ինֆորմացիայի և մի շարք այլ հարցերի բանկեր:

Մեծ է հերբարիումային հավաքածուների նշանակությունը բուսական ծածկույթի ֆլորիստիկ մոնիթորինգի գնահատման ժամանակ: Հերբարիումային հավաքածուները թույլ են տալիս բացահայտել ֆլորիստիկ կապերը և տարածաշրջաններում ֆլորայի տարածվածության ճանապարհները [5, 8]:

Հերբարիումային ֆոնդի ստեղծումը, դրա քանակի ավելացումը, գիտական և տեխնիկական ձևակերպումը հանդիսանում են բարդ և կարևոր գործընթացներ: Մակայն որոշակի կենսաաշխարհագրական հետազոտությունների մշակումը պահանջում է բավականին ժամանակ, նյութական ծախս և ուժ: Թվային տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս մշակել նոր ուղղություն՝ ինչպիսին է վիրտուալ հերբարիումի ստեղծումը [4, 9, 11]: Այդ մոտեցումը հերբարիումային հավաքածուն առավել հասանելի է դարձնում մասնագետների համար: Դրա հետ մեկտեղ անհետացած տեսակների թվայնացումը հնարավորություն կտա պահպանել բույսերի մորֆոլոգիական կառուցվածքը հետագա սերունդների համար [21]:

Թվային տեխնոլոգիաները հեշտացնում են հերբարիումի մշակման դժվարին աշխատանքը: Դրանք թույլ են տալիս կազմել՝ տեսակների ցուցակ, հեշտացնել ֆլորայի,

մասնավորապես հազվադեպ տեսակների մոնիթորինգը, ստանալ տեղեկատվություն տեսակների տարածվածության և դրանց տոպոէկոլոգիական հարմարվածության վերաբերյալ:

Վիրտուալ հերբարիումը թույլ է տալիս անսահմանափակ ավելացնել տեսակների վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվություն՝ տեսակների մորֆոլոգիա, անատոմիա, էկոլոգիա, քրոմոսոմների թիվ, տարածում, հումանիշներ, տնտեսական նշանակություն և այլն [12, 16]:

Մեր աշխատանքի նպատակն էր ստեղծել ԵՊՀ-ի բարձրակարգ բույսերի ERCB հերբարիումում պահպանվող *Asteraceae* ընտանիքի թվային տարբերակը:

Նյութ և մեթոդ. Վիրտուալ հերբարիումի ստեղծման ժամանակ կատարվել է *Asteraceae* ընտանիքի հերբարիումի գույքագրում: Ժամանակակից կարգաբանական պահանջներին համապատասխան ճշտվել են տեսակների անվանումները: Վերանայվել է նաև հերբարիումի կատալոգը, որը համապատասխանեցվել է առկա հերբարիումային նմուշներին:

ԵՊՀ-ի “Herbarium ERCB” վիրտուալ հերբարիումի ֆորմատը ստեղծվել է 2002 թ.-ին Access 2000-ի հիման վրա Microsoft Windows միջավայրում [7]:

“Herbarium ERCB” թվային հերբարիումում ներկայացվել են հետևյալ տեղեկությունները՝ ընտանիքի, ցեղի, տեսակի կամ ենթատեսակի լատիներեն անվանումը: տեսակը կամ ենթատեսակը որոշող կամ վերաորոշող հեղինակի անունը: տեսակի արեալը: դրա կենսաձևը: գոտիականությունը – վերին, միջին, ստորին լեռնային, ալպիական և սուբալպիական գոտիներ: տեսակի էնդեմիզմը: առկայությունը Կարմիր գրքում: բույսի գործնական կիրառումը: հավաքի վայրը: ամսաթիվը: հերբարիումային հերթական համարը: նկարը: ծանոթագրություն:

Թերթ-նմուշի թվային պատկերը ստացվել է 14.1 Mega Pixel Canon թվային ֆոտոխցիկի օգնությամբ: Վիրտուալ հերբարիումի գույքագրման ժամանակ օգտվել ենք հետևյալ որոշիչներից՝ “Հայաստանի Ֆլորա” [17], “ԽՍՀՄ-ի Ֆլորա” [18], “Գովկասի բույսերի որոշիչ” [6]: Տաքսոնների մշակումը կատարվել է ըստ “Հայաստանի Ֆլորա”-ի [17]:

Տեսակների տնտեսական կիրառումը տրվում է ըստ հետևյալ աղբյուրների՝ “ԽՍՀՄ-ի արտավայրերի և խոտհարքերի կերաբույսերը” [10]: ՀՀ Բույսերի Կարմիր գիրք [3]: Մաղաքյան [13]: “Ռուսաստանի և հարակից պետությունների բուսական ռեսուրսները” [15]: Շիշկին [20]: Օստուրյան, Գևորգյան [2]: Ռևազովա, Մուսաելյան [1]: Dr. Duke’s phytochemical and ethnobotanical databases [22]:

Արդյունքներ և քննարկում: Աշխատանքի արդյունքում պարզվել է, որ ներկայումս ԵՊՀ-ի գիտական հերբարիումում պահպանվում է *Asteraceae* ընտանիքի 232 տեսակ, որոնք ընդգրկված են 77 ցեղերում, ինչը կազմում է Հայաստանի ֆլորայի *Asteraceae* ընտանիքի ամբողջ տեսակների 51%-ը:

Asteraceae ընտանիքի թվային հերբարիումն ունի հետևյալ տեսքը (նկ. 1):

The screenshot shows a Microsoft Access database window titled "Herbarium ERCB". The main form contains several input fields and checkboxes for recording plant data. The fields are organized into two columns. The left column includes Family (Asteraceae), Genus (Achillea), Species (A. nobilis), Author (L.), Areal (Панноско-понтическо-кавказский), Vital form (M), Red Book, Endemic, and Notes. The right column includes Nizh, Sred, Ver, Subalp, Alp, Medical plants, Edible plants, Technical plants, Poison plants, Decorative plants, and Forage merit. There are also checkboxes for Leg, Det, and Statio. A photo of the plant is displayed on the right side of the form. The bottom of the window shows a record navigation bar with "Record: 4 of 233" and "Form View".

Նկ.1. *Asteraceae* ընտանիքի վիրտուալ հերբարիումի թերթ-նմուշի օրինակ

Asteraceae ընտանիքի թվային հերքարիումը կազմված է 991 մուտքի տողերից, ինչը համապատասխանում է հերքարիումում պահպանվող 991 թերթ-նմուշի:

Access ծրագրի հարցումների (query) շնորհիվ կատարվել է ԵՊՀ-ի անոթավոր բույսերի ERCB հերքարիումում պահպանվող Asteraceae ընտանիքի տվյալների վերլուծություն:

Հերքարիումում տեսակների ներկայացվածությամբ ամենամեծ ցեղերն են՝ *Centaurea* (20 տեսակ), *Senecio* (13), *Artemisia* (10): Հերքարիումում նմուշների առավելագույն քանակով ներկայացված են *Achillea millefolium* L. տեսակը՝ 25, *Xeranthemum squarrosum* Boiss.՝ 24, *Taraxacum officinale* Wigg.՝ 20 նմուշներով:

Asteraceae ընտանիքի 232 տեսակներից տնտեսական նշանակություն ունեցող բույսերն ունեն հետևյալ տոկոսային հարաբերակցությունը՝

- դեղատու բույսեր - 30%,
- տեխնիկական բույսեր - 10%,
- դեկորատիվ բույսեր - 10%,
- ուտելի բույսեր - 5%,
- թունավոր բույսեր - 4%:


Ինչպես երևում է նկ. 2-ից, թվային հերքարիումում կան 12 տեսակներ, որոնք ընգրկված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում [3]: Դրանք կազմում են Կարմիր գրքում ընգրկված Asteraceae ընտանիքի տեսակների 5%-ը:

Family	Genus	Species	Red Book
Asteraceae	Amberboa	A. moschata	☒
Asteraceae	Amberboa	A. sosnovskyi	☒
Asteraceae	Antennaria	A. caucasica	☒
Asteraceae	Centaurea	C. erivanensis	☒
Asteraceae	Cichorium	C. glandulosum	☒
Asteraceae	Cousinia	C. megrica	☒
Asteraceae	Gundelia	G. tournefortii	☒
Asteraceae	Inula	I. acaulis	☒
Asteraceae	Inula	I. aucherana	☒
Asteraceae	Jurinea	J. elegans	☒
Asteraceae	Tomanthea	T. daralaghezica	☒
Asteraceae	Tragopogon	T. collinus	☒
*			☐

Նկ.2. Վիրտուալ հերքարիումի ՀՀ Կարմիր գրքում առկա բույսերի տեսակային կազմը, ըստ ծրագրային հարցման

Թվային հերքարիումում տեսակների նմուշների տոկոսային հարաբերակցությունը ներկայացված է նկ. 3-ում: Ինչպես երևում է դիագրամից, տեսակների հիմնական մասը՝ մոտ 64%-ը, հերքարիումում ներկայացված են 2-10 նմուշներով, 31%-ը՝ մեկ նմուշով, 5%-ը՝ 10-ից ավելի:

ԵՊՀ-ի հերքարիումում առկա է 58 տեսակ, որոնք նշված չեն “Հայաստանի Ֆլորա” [17] ու “ԽՍՀՄ-ի Ֆլորա” [18] որոշիչներում և Չերեպանովի տեղեկագրում [19]: Այդ տեսակները փոխանցվել են ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի համապատասխան մասնագետներին, դրանց տեսակային պատկանելիությունը պարզաբանելու համար:



Նկ.3. Վիրտուալ հերքարիումում առկա տեսակների նմուշների տոկոսային հարաբերակցությունը

Այսպիսով, ԵՊՀ-ի "Herbarium ERCB" վիրտուալ հերբարիումը հեշտացնում է Asteraceae ընտանիքի հավաքածուի վերլուծությունը, թույլ է տալիս կատարել հարցումներ ցանկացած դաշտում, խոշորացնելով ուսումնասիրել հերբարիումային թերթ-նմուշի թվային պատկերը և ընդգրկել բաց թողնված տեսակները հերբարիումի մեջ: Վիրտուալ հերբարիումը հասանելի դարձնելու համար նախատեսվում է տեղադրել այն համացանցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ռևազովա Լ. Վ., Մուսայելյան Մ.Ս.* Դեղատու բույսերի անունների լատիներեն-ռուսերեն-հայերեն բառարան. Երևան, 1997:
2. *Մատուրյան Թ. Գ., Գևորգյան Մ. Լ.* Հայաստանի ուտելի վայրի բույսերը. Երևան, 2007:
3. ՀՀ բույսերի Կարմիր գիրք (բարձրակարգ բույսեր և սնկեր). Երևան: ՀՀ բնապահպանության նախարարություն, 2010:
4. *Баландин С.А.* Цифровой гербарий или алгебра и гармония гербарного листа. В мире растений, 10, 44-45, 1999.
5. *Горохова С.В.* База данных лесной растительности Уссурийского заповедника. Проблемы создания ботанических баз данных, М., Патент, 64, 2000.
6. *Гроссгейм А.А.* Определитель растений Кавказа. М., 1949.
7. *Закарян Н.А.* База данных научного гербария высших растений ЕГУ. International Conference Information Technologies, Yerevan, June 23-25, 247-249, 2005.
8. *Закарян Н.А., Наняголян С.Г., Арутюнян С.Н.* Роль цифровых гербарных коллекций в системе флористического мониторинга. Актуальные проблемы ботаники в Армении, Ереван, 108-111, 2008.
9. *Капустин В.А., Лебедева Е.Г., Лунева Н.Н., Чухина И.Г.* Виртуальный гербарий Всероссийского НИИ растениеводства им. Н.И. Вавилова. Тр. зоол. ин-та Рос. акад. наук, 278, 104-105, 1999.
10. Кормовые растения сенокосов и пастбищ СССР. Споровые, голосеменные и однодольные. М.- Л., 1950.
11. *Красников А.А., Красников П.А.* База данных гербарных этикеток – что мы хотим от нее? Проблемы создания ботанических баз данных, М.: Патент, 36-38, 2000.
12. *Красноборов И.М., Романенко Т.П.* База данных и информационно-поисковая система "Флора Сибири". Проблемы создания ботанических баз данных, М.: Патент, 31-32, 2000.
13. *Магакьян А.К.* Сорные растения лугов и пастбищ Армянской ССР. Тр. ин-та полевого и лугового кормодобыывания, Ереван: Армгиз, 1, 1950.
14. *Макридин А.И., Баландин С.А., Майоров С.П.* Цифровые коллекции ботанических садов – состояние и перспектива. Hortus Botanicus, 1, 118-119, 2001.
15. Растительные ресурсы России и сопредельных государств. С-Пб., 9, 1996.
16. *Росков Ю.Р.* Концепция виртуального гербария флоры России и базы данных изображений видов. Компьютерные базы данных в ботанических исследованиях, С-Пб., 86-89, 1997.
17. Флора Армении. Koeltz Scientific Books (CR), 9, 1995.
18. Флора СССР. Л., 25-30, 1959-1960.
19. *Черепанов С.К.* Сосудистые растения России и сопредельных государств (в пределах бывшего СССР). СПб.: Мир и семья, 1995.
20. *Шишкин Б.К.* Ядовитые растения лугов и пастбищ, М.- Л., 1950.
21. *Balandin S.A., Gubanov I.A., Majorov S.R., Simonov S.S., Sokoloff D.D., Shkhov S.V.* Going digital: A virtual herbarium and botanical server appear at Moscow State University. Russian Conservation News, 23, 36-37, 2000.
22. Dr.Duke's phytochemical and ethnobotanical databases. <http://www.ars-grin.gov/duke/>, 12/02/2013.

Ստացվել է 25. 11.2013



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(66), 2014

**LACTOBACILLUS ACIDOPHILUS Er-2 -ի ԵՎ ԷԼԵՈՒՏԵՐՈԿՈԿԻ
ՀԱՄԱՏԵՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՏՂԱՇԻ ԱՐՑԱՆ ՀԻՄՆԱՅԻՆ ՖՈՍՖԱՏԱՍԶ
ՖԵՐՄԵՆՏԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՊՈԿԻՆԵԶԻԱՅԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Ա.Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
achonagrigoryan@mail.ru

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ հիպոկինեզիայի պայմաններում պահվող 20 օրական և 4 ամսական ցլիկների արյան մեջ հիմնային ֆոսֆատազ ֆերմենտի ակտիվությունը ավելացել է: Կարելի է ենթադրել, որ օրգանիզմում հանքային փոխանակության շեղումներն առաջացնում են փոփոխություններ հենաշարժողական համակարգում, ինչն ի վերջո հանգեցնում է ոսկրային համակարգի հանքային հագեցվածության նվազմանը, նրա դեկալցինացմանը և ռեգորբիվ գործընթացների ակտիվացմանը: Իսկ էլեուտերոկոկի մզվածքի և *L. acidophilus* Er-2-ի պատրաստուկը դրական ազդեցություն ունի հիպոկինեզիայի պայմաններում գտնվող կենդանիների արյան հիմնային ֆոսֆատազ ֆերմենտի ակտիվության վրա, ինչը մեզ թույլ է տալիս առաջարկել էլեուտերոկոկի մզվածքի և *L. Acidophilus* Er-2-ի օգտագործումը արդյունաբերական հիմունքներով պահվող գյուղատնտեսական կենդանիների մատղաշի ինտենսիվ աճեցման պայմաններում:

*Հիպոկինեզիա – հիմնային ֆոսֆատազ – հանքային
փոխանակություն – Lactobacillus acidophilus Er-2 – էլեուտերոկոկ*

Результаты наших исследований показали значительное повышение активности щелочной фосфатазы в крови молодняка сельскохозяйственных животных в двух возрастных группах (бычки 20–дневного и 4–месячного возрастов) в условиях гипокинезии. Можно предположить, что нарушение минерального обмена может привести к изменениям в опорно-двигательном аппарате, вследствие понижения минеральной насыщенности костной системы, ее декальцинации и активизации резорбтивных процессов. А совместное применение *Lactobacillus acidophilus* Er-2 и элеутерококка положительно влияет на активность щелочной фосфатазы, очевидно, и на минеральный обмен в целом, на основании чего мы рекомендуем использовать данный препарат при промышленном выращивании молодняка крупного рогатого скота.

*Щелочная фосфатаза – гипокинезия – минеральный обмен –
Lactobacillus acidophilus Er-2 – элеутерококк*

The results of our research show significant increase in the activity of alkaline phosphatase in the blood of young farm animals in two age groups (20-day and 4 months of age) in a conditions of hypokinesia. We can assume that mineral metabolism disorders may lead to changes in the musculoskeletal system due to reduction of themineral saturation of the bone system, and its intensifying and decalcification of resorptive processes. A combined usage of *Lactobacillus acidophilus* Er-2-a and Eleutherococcus has a positive effect on alkaline phosphatase activity and obviously, on mineral metabolism in general, on the basis of what we recommend using this drug in the commercial rearing of young cattle.

*Hypokinesia – mineral metabolism – alkaline phosphatase –eleutherococcus – Lactobacillus
acidophilus Er-2*

Հիպոկինետիկ համախտանիշի հիմնական և կարևոր բաղադրիչ մասն է մկանային ակտիվության խիստ նվազումն ու կամային ֆունկցիայի ինտենսիվության անկումը [6, 8]: Անասնապահության ոլորտում կենդանիների ,մսուրային պահվածքը բացասաբար է անդրադառնում օրգանիզմի ընդհանուր ֆունկցիոնալ վիճակի վրա: Հիպոկինետիկ իրավիճակները բացասական ազդեցություն են թողնում ոչ միայն կենդանիների իմուն համակարգի և նյութափոխանակության վրա, այլև առաջ են բերում մի շարք տնտեսական վնասներ՝ կապված մթերատվության, ինչպես նաև մսամթերքի որակի և համի հետ [2]:

Գյուղատնտեսական կենդանիների մատղաշի աճեցման ճիշտ կազմակերպումը հնարավորություն է տալիս ապահովել կենդանիների նորմալ աճը, նրանց ամուր համակազմվածքի զարգացումը, ձևավորում է նրանց ապագա մթերատվությունը և երկարացնում տնտեսական օգտագործման ժամկետը:

Չնայած հիպոկինեզիայի վերոհիշյալ բացասական երևույթներից խուսափելու համար կիրառվում են մի շարք մոտեցումներ՝ մասնավորապես կենդանիների՝ ակտիվ զբոսանք, այնուամենայնիվ, այս մոտեցումները միշտ չէ, որ արդյունավետ են լինում: Նման իրավիճակից խուսափելու համար շարունակվում է նորանոր ուղիների փնտրտուքը՝ ուղղված հիպոկինեզիայի պայմաններում օրգանիզմի նյութափոխանակության և դրա հետ կապված տարբեր խանգարումները ,շտկելուն:

Հաշվի առնելով, որ կենդանիների աղիքային միկրոբիոտան հսկայական դեր է խաղում օրգանիզմների կենսագործունեության տարբեր գործառնությունում, իսկ պրո- և պրեբիոտիկները օժտված են աղիքային միկրոբիոտայի ամբողջականությունը ,վերականգնելու և ,պահպանելու հատկությամբ [1, 7, 9], ներկա ուսումնասիրությունների նպատակն է եղել պրոբիոտիկաթերապիայի նոր առաջարկների միջոցով գյուղատնտեսական կենդանիների հիպոկինեզիայի հետևանքների վերացման նոր արդյունավետ մոտեցումների մշակումը:

Նպատակի իրականացման համար առաջադրվել են ուսումնասիրություններ պարզաբանելու հիպոկինեզիայի ազդեցությունը կենդանիների մի շարք նյութափոխանակության ցուցանիշներ՝ մասնավորապես, հանքային փոխանակության հիմնական ցուցանիշներից մեկի արյան մեջ հիմնային ֆոսֆատազ ֆերմենտի ակտիվության վրա և պրե- և պրոբիոտիկաթերապիայի առաջարկների միջոցով գյուղատնտեսական կենդանիների մոտ հիպոկինեզիայի հետևանքների վերացման նոր արդյունավետ մոտեցումների մշակումը:

Հիմնվելով ուսումնասիրությունների արդյունքների վրա, էլեուտերոկոկի մզվածքից և *L. acidophilus* Er-2 շտամ 317/402-ից ստացվել է պատրաստուկ՝ կարգավորելու համար հիպոկինեզիայի պայմաններում ցլիկների և հորթերի նյութափոխանակության խանգարումներ: Պատրաստուկը նպաստում է հարմարողական գործընթացների համեմատաբար արագ զարգացմանը, հիպոկինեզիայի հետևանքով առաջացած բացասական երևույթների նվազեցմանը:

Նյութ և մեթոդ: Դիտարկումները կատարվել են ,Ագրոհոլդինգ Արմենիաե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնտեսությունում, 20 օրական և 4 ամսական ցլիկների վրա: Շարժումները սահմանափակելու նպատակով կենդանիները պահվել են վանդակներում, որոնց չափերը մեկ կենդանու հաշվով 50x70 սմ է: Ստուգիչ կենդանիները պահվել են 60x220 սմ չափեր ունեցող վանդակներում, այնուհետև նրանց տրամադրվել է օրական 2 ժ զբոսանք: Հետազոտության համար արյունը վերցվել է լծային և ազդրային երակներից: Հետազոտությունների առաջին փուլում փորձերը կատարվել են 4 ամսական ցլիկների վրա: Արյունը վերցվել է հիպոկինեզիայի 5, 10, 15, 30, 45, 60, 75, 90, 105, 120-րդ օրերին: Փորձի տևողությունը 120 օր է եղել: Հետազոտությունների երկրորդ փուլի տևողությունը՝ 60 օր: Համաձայն խնդրի դրվածքի՝ 20 օրական փորձնական ցլիկները բաժանել ենք հետևյալ խմբերի (5 գլուխ):

- | | |
|----------|---|
| I խմբի | կենդանիները պահվել են շարժումների սահմանափակման պայմաններում, առանց որևէ պատրաստուկ ստանալու: |
| II խմբի | հիպոկինեզիայի ենթարկված կենդանիները օրական երեք անգամ ստացել են 3 x 108 կենսունակ բակտերիաներ պարունակող <i>Lactobacillus acidophilus</i> Er-2 լիոֆիլիզացված բակտերիաներ, |
| III խմբի | հիպոկինեզիայի ենթարկված կենդանիները ստացել են 0,2 մգ/կգ լիոֆիլիզացված էլեուտերոկոկի մզվածք՝ օրական երեք անգամ: |
